Տեսուչ Պ. Ցարուքիւն Ալթաշեանց
Ամալեցւոյ

# ԱՐԱՐԱՏ

## ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲՆԱՆԱԻՐԱԿԱՆ,
ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

ԹԻՒ Է. ՏԱՐԻ ԺԶ. ՅՈՒԼԻՍ 31

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ. Հրէական եւ քրիստոնէական եկեղեցեաց տօների համեմատութիւնը. Յուսիկ վարդապետ. . . . . 277

ՊԱՏՄԱԿԱՆ. Յունաստանի ապստամբութիւնն եւ վերականդումը. Փ. Վարդանեան . . . . . 285

Նկարագրութիւն Թագադրութեանց եւ Օծմանց Նոցին կայսերական Մեծութեանց Աղէքսանդր Գ. Կայսեր Ռուսաց եւ Մարիա Ֆէօդորովնայ կայսրուհւոյ. Յակոբ Ա. քհնյ. Սուրէնեանց. . . . . 299

ԲՆԱՆԱԻՐԱԿԱՆ. Գ. Նիկողայոս Թաշճեանի յօդուածի առթիւ (Կ. Պօլսի եւ Էջմիածնի շարականներ). Սահակ Սարկաւագ. . . 304

ԱԶԳԱՅԻՆ. Երուսաղէմ եւ Եդիպտացւոց վիճակ. Յուսիկ վարդապետ. 312

Կ. ՊՕԼՍՈՑ ՉԱՑՆ. Մասիս լրագիր . . . . . 318

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ. . . . . 321

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ. Սինոդի օրագրութիւնից քաղուածք. Վարչական, Դատաստանական եւ Դպրոցական, Յայտարարութիւնք. . . . . 330

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

ՌՅԼԲ—1883

## «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ.

Ադբատը իւրաքանչիւր ամիս մի անգամ կհրատարակվի, բաղկանալով վեց թերթից. այսինքն քառասուն և ութ երեսներից՝ ճանապարհածախսով տարեկան գինն է Ռուսաստանի մէջ 4 ռուբլի.—Տաճկաստանի մէջ 3 արծ. մէճիտ.—Պարսկաստանի մէջ 5 ռուբլի.—Հնդկաստանի մէջ 6 ռուբ.—Եւրոպա (Փարիզ, Լօնդոն, Ցիւրիխ, Բեռլին) 20 ֆրանկ. բաժանորդագրութիւնը կանխավճար պէտք լինի և ամսագրիս տարեղլխից սկսած.

Արտաքուստ եկած յօդուածներից և նամակներից՝ ամսագրիս ուղղութեան և նպատակին վերաբերեալ և յարմար եղածները միայն կընդունվին ի հրատարակութիւն. Յօդուածները պէտք պարզ գրել և ամբողջութեամբ ուղարկել առանց շարադրելի թողնելու.

Ամենայն գրութիւններ պէտք այսպիսի հասցեով ուղարկել.—ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ. Ս. ԷՋՄԻԱԾԻՆ. Въ Редакцію журнала «АРАРАТЪ». Вагаршапатъ.

## «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ
### ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ
### ԵՒ ՀՈՅԱԿ ՐՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՏԵՂԵՐ.

*Ազգաբանի բաժ.*

| | |
|---|---|
| Ազգաբան | Յովսէփ քհնյ. Բէկնազարեան |
| Գեորգեակ | Սարգիս քհնյ. Տէր Պօղոսեան |
| Դպեսիա | Գէորգ քհնյ. Յարութիւնեան |
| Ղզլար | Խորէն քհնյ. Ղօրղանեան եւ Յովհաննէս Փոլատբէկեան |
| Մոզդոկ | Թադէոս ա. քհնյ. Խոսրովեան |
| Յօսէրապօլ | Բարթուղիմէոս քհնյ. Բէկուլեան |
| Պեսրովսկ | Վահան քհնյ. Տ. Մելքիսեդեկեան |
| Վլադիկաւկազ | Գեորգս քհնյ. Կուսիկեան |

*Բնաբանական բաժ.*

| | |
|---|---|
| Ակկերման | Աբրահամ քհնյ. Մարութեան |
| Դրիգորիօպօլ | Գաւիթ քհնյ. Շահինեան |
| Եկատերինօդար | Մինաս ա. քհնյ. Բարեան |
| Եյսկ | Մարդար ա. քհնյ. Սուքիասեան |
| Թրիմ Հին | Դաւիթ քհնյ. Բէշիշեան |
| Կարասուբազար | Յովհաննէս քհնյ. Սարըյեան |
| Կերչ | Օգոստինոս քհնյ Զորայեան |
| Պեյիսօպօլ | Պ. Գէորգ Խարամրզեան |
| Մօսկվա | Յակոբ ա. քհնյ. Սուրէնեան |
| Նախիջեւան Նոր | Հոգեւոր Կառավարութիւն Հայոց |
| Ո. Խաչ Թաղ. | Գէորգ քհ. Ալդայեան |
| Ջ. Պետերբուրգ | Գէորգ քհնյ. Խանձարեան |
| Սիմֆերօպօլ | Օգոստինոս քհնյ. Կոպչակեան |
| Փիշնեւ | Կոնսիստոր Հայոց |
| Օդեսսա | Գրիգոր քհնյ. Խորասանճեան |
| Օրբազար | Օգոստինոս քհնյ. Հայրունի |
| Օրհեյ | Կարապետ քհնյ. Զորայեան |
| Հնդեղ | Յակովբ քհնյ. Թօսունեանց |

# Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ Է. — ՇԻՋԱՆ Ժ.Զ. **1883** ՏԱՐԻ Ժ.Զ. ՅՈՒԼԻՒՍ 31

## ԿՐՕՆԱԿԱՆ

### Բ.

### ՀՐԷՈՒՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԶՈՆ ԵԿԵՂԵՑԵՑԱ ՏՕՆԵՐՈՒ ՀԱՄԲԱՐՁՈՒԹԻՒՆՔ.

*Ես անցեալ անգամ խոստացայ Հրէից տաճարի կազմակերպութեան եւ ծիսակատարութեան ու արարողութեանց համար խօսել. կատարում եմ խոստումս:*

*Միայն քերանացի աւանդական կրօնագիտութիւնը եւ առանց կազմակերպեալ ծիսակատարութեան կրօնական պաշտամունքը չեն կարող ազգային ամբողջութեան մի կապ լինել: Մովսէս գիտէր այս, ուստի անապատում թափառելու ժամանակ՝ աշխատեց այս պակասը լրացնել: Ծիսական արարողութեանց սկիզբը եղաւ Հրէից Եգիպտոսից ազատուելու յիշատակը. եւ է նոցա առաջին տօնը: Այդ յիշատակը, որ Պասէք կամ Զատիկ Տեառն է կոչւում՝ կատարւում էր այսպիսի պատրաստութեամբ.*

*չորս օր առաջ (ամսոյ տասին) իւրաքանչիւր տուն մի մի արու տարեկան գառն պէտք պատրաստէին չորրորդ օրը (ամսոյ 15) պէտք մորթէին, արիւնը դրան սեմերի ու բարաւօրնէից վերայ քսէին, իսկ մորթածը խորովէին եւ իրիկնապահին գօտին մէջքին կապած, կոշիկները ոտերին եւ ձեռնափայտը ձեռքերին շուտ շուտ ուտէին. (Ելից գլ. ԺԲ: Ղեւ. ԻԳ. 5—6): Պասէքից յետոյ Բ. տօն է Բաղարջակերաց տօնը. այդ տօնին նոքա պէտք է եօթն օր բաղարջ ուտէին. խմորուն հաց պէտք է նոցա տանը չըգտնուէր եւ ոչ օտարի համար, եւ այս իսկ պատճառով էլ այս տօնը Բաղարջակերաց տօն է կոչվում. եւ Բաղարջակերաց օրերը Աստուծոյ նուիրած լինելով՝ Հրէաները սուրբ պէտք է պահէին եւ համախմբուած՝ Աստուծոյ (իրանց ազգին արած) բարութիւնները պէտք պատմէին: Ինչպէս Պասէքին, նոյնպէս եւ Բաղարջակերաց տօնը Հրէաները յաւիտեան պէտք տօնէին իբրեւ իրանց ազատութեանը յիշատակ, եւ նոցա տարեգլուխը պէտք համարուէր Ապիլ (կանխոց) ամիսը. (Ելից գլ. ԼԴ. 18): Մինչեւ Բաղարջակերաց ու Պասէքի տօները, հրէայք միայն մի համազգային նշան ունէին, այնէ թլպատութիւնը՝ որ սկսուեց նոցա առաջին նահապետից՝ Աբրահամից (Ծննդ. գլ. ԺԷ. 10—14) իբրեւ ուխտ Աստուծոյ եւ Աբրահամի ու նորա ազգի մէջ յաւիտեան: Թլպատութիւնը պէտք կատարվէր ամեն ութնօրեայ արու մանուկների վերայ: Ուրեմն հրէաների համազգային նշանը պէտք է համարել նախ՝ թլպատութիւնը Աբրահամից մինչեւ Մովսէս. իսկ Մովսէսի ժամանակով՝ եւ այնուհետեւ առաջին տօնը՝ Եգիպտոսից դուրս գալու յիշատակը՝ իբրեւ տարեգլուխ: Երրորդ տօնն է Պենտեկոստէի կամ Յիսներորդի տօնը, որ կատարումէին Պասէքից կամ Եգիպտոսից դուրս գալու յիշատակի յիսուներորդ օրը, երբ Աստուած Սինայի անապատում Մովսէսի ձեռքով իւր պատուէրները յայտնեց ժողովրդին: Այդ տօնին ժողովուրդը պէտք է պատրաստուէր ներքին եւ արտաքին մաքրութեամբ եւ լուացմամբ երեք օր առաջ, իսկ խոստացեալ երկիրը մտնելուց յետոյ՝ հունձքին՝ անասնեղինաց եւ այլ նուէրներ պէտք անէին տաճարին եւ քահանային (երեխայրիք): (Ելից ԺԲ. Ղեւտ. ԻԳ. 16—26):*

*Չորրորդ տօնն է քաւութեան տօնը, որ եօթներորդ ամսի տասներորդ օրը պէտք կատարուէր սուրբ պահելով նոյն օրը*

ըօրոր աշխատանքներից: Հինգերորդն՝ Տաղաւարահարաց տօնը, որ պէտք սկսուէր եօթներորդ ամսի 15 ից։ Եօթն օր ժողովուրդը ծառի ոտերից շինած տաղաւարների մէջ պէտք է քնակէր եւ ուրախութեան տօն կատարէր՝ ի յիշատակ անապատի մէջ թափառման ժամանակ վրանաբնակ լինելուն. (Ղեւ. ԻԳ. 34—44): Վեցերորդն է Շաբաթը, որ եօթներորդ օրը ժողովուրդը սուրբ պէտք է պահէր ի յիշատակ աշխարհի վեցօրեայ ստեղծագործութեան եւ Աստուծոյ՝ եօթներորդ օրը հանգստանալուն (Ելից Ի. 2—4: Ղեւտ. ԻԳ): Բացի սորանից ամեն եօթներորդ հրէից համար սուրբ էր, Հրէայք իրանց ազգային բարեբարներին յիշելու համար՝ նոցա մահուան օրը տօնումէին սուգ պահելով եւ նոցա վարքագրութիւնը կարդալով. օր. Մովսէսի եւլն. այլ եւ սուգ Երուսաղէմի առման եւ աւերման համար եւլն:

Հրէից Զատկի տօնին մենք տօնումենք Յիսուսի Յարութեան տօնը: Հրէից Զատկական գառը եւ նորա արիւնով սեմերի ու քարաւորների օծելը յիշեցնումէ նոցա ազատութիւնը սատակիչ հրեշտակի կոտորածից եւ Եգիպտական ծառայութեան երկրից. իսկ Յիսուսի խաչի վերայ թափած արիւնը մեզ յիշեցնումէ մեր ազատութիւնը կռապաշտութեան խաւարից. եւ Յիսուսի միառաւոր Յարութիւնը առհաւատչեայ է մեր յաւիտենական կեանքին:

Հրէից եօթնօրեայ Բաղարջակերաց տօնը յիշեցնումէ նոցա Եգիպտոսից դուրս գալը, Կարմիր ծովը անցնելը եւ այդ ժամանակի՝ նոցա ուտեստի պաշարը: Եւ որովհետեւ Յիսուս Քրիստոս այդ Բաղարջակերաց տօնին ի յիշատակ լինքեան տուեց աշակերտներին ի տեղի իւր մարմնոյ՝ բաղարջ հաց, եւ ի տեղի նոր արեան՝ անապակ բաժակ. Հայոց Եկեղեցին սրբութեամբ ընդունեց այդ պատուէրը եւ կատարումէ Հօր ի հաշտութիւն՝ պատարագելով թարմ բաղարջ հաց՝ եւ անապակ գինի:

Հրէից Պենտեկոստէի տօնը յիշեցնումէ Աստուծոյ պատուիրանագրութիւնը Հրէից ազգին Սինայի անապատում. այդ օրը մեզ յիշեցնումէ Ս. Հոգու գալուստը Վերնատան մէջ առաքեալներին մխիթարելու եւ բոլոր աշխարհին Աստուծոյ օրէնքը սորվեցնելու եւ շնորհքը տալու համար:

Քաւութեան եւ Տաղաւարահարաց տօները յիշեցնումէին հրէից՝ անապատում վրանաբնակ լինելը, իսկ Վարդավառի տօնը

յիշեցնումէ մեզ Քրիստոսի այլակերպութիւնը եւ աստուածային փառքով իւր աշակերտներին երեւելու դէպքը նաեւ հին տօպատնակի եւ Քրիստոնէական եկեղեցու հիմնարկութեան տօնը. յիշեցնումէ որ քրիստոնեաներս պէտք է բաց թօթափենք մեր չարութիւնները եւ Յիսուսի լուսափայլ վարդապետութեամբ դաստիարակուած՝ առաքինանանք:

Եաբաթը Հբէից տուրբ օրն էր, նուիրեալ Աստուծոյ. իսկ շաբաթի տեղ մենք ունինք կիւրակէն՝ որ նշանակումէ տէրունական, եւ այդ օրը նուիրեալ է Աստուծոյ ի յիշատակ Յիսուսի յարութեան եւ Ս. Հոգւոյ գալստեան:

Թլպատութեան խորհուրդը յիշեցնումէ Աստուծոյ ուխտը Աբրահամին, թէ Աբրահամը այդ ուխտը պահելով մեծ ազգ պէտք է դառնայ եւ թլպատութիւնն էր հրէաների համար ազգային յատկանիշ: Դորա տեղ Մկրտութիւնը յիշեցնումէ մեզ՝ մեր որդեգրութիւնը Աստուծոյ. — եւ Քրիստոսի վարդապետութեան բոլոր հետեւողներին, թէեւ լինէին դրքա զանազան ազգութեան պատկանող՝ միացնումէ մի տուրբ անուամբ եւ եղբայրական յարաբերութեամբ:

Հբէայք իրանց բարերարների յիշատակը տօնումէին սգալով նոցա մահը եւ նոցա վարքագրութիւնը կարդալով. նոյնը մենք անումենք մեր ազգի եւ եկեղեցու բարերարների յիշատակը տօնելով եւ նոցա վարքագրութիւնը ընթերցնելով:

Իսկ եթէ քրիստոնէական եկեղեցին պէտք է հրէականին հետեւելով անէր, ինչ որ այժմ անումէ, անշուշտ պէտք է, հետեւեալ պատճառներով.—

Նախ՝ որ մեր կրօնի վարդապետն Յիսուս Քրիստոս այդ տեսակ տօներին միշտ նշանակութիւն տալով ինքն մասնակցել է տօներին.

Ե. Ջատկական գառը ուտելիս կամ Պասեքի տօնը կատարելիս պատուիրել է իւր փրկագործութիւնները յիշելու համար կատարել այն՝ ինչ որ իբրեւ կտակ աւանդեց իւր աշակերտներին. այսինքն Հացի բեկանելը եւ Ոռնալուան: Աւետարանից երեւումէ որ Յիսուս Քրիստոս ոչ միայն տօները աւելորդ չէր համարում, այլ աւելի կարեւորութիւն էր տալիս՝ յատկապէս այդ օրերը կատարելով իւր երկրաւոր կեանքի փրկագործութիւններին:

*Թողնենք այն որ զգայականը միշտ աւելի մեծ ազդեցութիւն ունի քան իմացականը, եւ այս բանը իմացել են ամենամեծ օրէնսդիրներն։*

### Հրէական եկեղեցին և նորա պաշտամունքը։

*Հրէից համազգային աղօթատեղին՝ քանի որ նոքա հաստատուն բնակավայր չունէին, եւ այնուհետեւ մինչեւ թագաւոր եւ մայրաքաղաք ունենալը, մինչեւ Սողոմոնը, մի վրան էր երեք բաժանմամբ (Ելից Լե.—Խ.) ըստ այսմ—Ա. Սրբութիւն սրբոց, որտեղ էր տապանակ ուխտին, որի վերայ միմեանց հանդէպ թեւատարած դրուած էին երկու քերովբէներ։ Այդ տապանակի մէջ գըտնըվումէին երկու քարեղէն տախտակները, մանանայի ոսկի սափորը, Ահարօնի ծաղկեալ գաւազանը եւ յետոյ՝ Մովսէսի հրնգամատեանը. վարագոյրներով անջատուած էր այս մասը։ Բ. մասում դրուած էին հիւսիսային կողմը՝ առաջաւորաց հացերի սեղանը, հարաւային կողմը՝ եօթնաջահեան աշտանակի սեղանը, իսկ տապանակի վարագուրի հանդէպ՝ խնկոց սեղանը։ Այս մասն եւս վարագոյրներով բաժանուած էր։ Գ. մասում դրուած էին դրան մօտ ողջակէզի սեղանը իւր պարագայիք։ Այդ մասում դրուած էր նաեւ լուացման աւազանը, ուր սրբազնագործ պաշտօնեայք պէտք էին իրանց ձեռքերն ու ոտքերը լուային։ Վկայութեան խորանը ունէր նաեւ սրահ։ Եւ վկայութեան խորանի բոլոր սրբութիւններն ու կահկարասիքը օծուած էին օծման իւղով։ (Ելից Լ. 26)։*

*— Օծման իւղը պէտք էր լինէր պատրաստուած ձէթից (ձիթենի), զմռսից, կինամոնից, խնկեղէգնից եւ կասիայից յատկացեալ չափերով։ (Ելից Լ. 22—25)։*

*— Խունկը յատկացեալ պատրաստութեամբ՝ միայն վկայութեան խորանի մէջ պէտք գործածուէր։ (Ելից Լ. 34—38)։*

*— Ճրագուսի եղը ձէթ պէտք է լինէր եւ ժողովուրդը պիտի տար, իսկ քահանայք պէտք էին վառէին վկայութեան առաջը (Ելից Իէ. 20)։*

*— Վկայութեան խորանի սպասաւոր կամ պաշտօնեայ ընտրուեցին Ղեւիի ցեղից Մովսէսի եղբայր Ահարօնը եւ իւր որդիքը յաղագ յաղագ։ աւագագոյնը քահանայապետ պէտք լինէր, իսկ մնացեալքը քահանայ պէտք կոչուէին։ (Ելից ԻԸ. գլ.)*

Ա. Հարօն եւ իւր յաջորդները պէտք ունենային յատկացեալ ղգեստ, որ կոչիւմք սրմատայ եւ փառաց՝ սոքա են—յանջապանակ՝ որի վերայ չորս կարգ երեք երեք ակների վերայ պէտք վարագրուած լինէին Իսրայէլացւոց ցեղերի անունները. (Ելից ԻԸ): Եփուա՝ որի ուսերի վերայ եկած սեղերը պէտք մի մի եղնգնաքարեր լինէին իւրաքանչիւրի վերայ Իսրայէլացւոց ցեղերից մեց մեց անուն գրուելով, Պատմուճան՝ որ պայծառ գուներատոր անկուածներից ոսկեթել բանուած պէտք լիներ եւ փորանկեալ դրութիւն ունենար, միայն գլուխը անցկացնելու պատուանաքով. գոգնոցը պէտք բուժուժներով զարդարուած լիներ, եւ այս զգեստը պէտք հագնէր քահանան Սրբութիւն Սրբոյ մտնելու համար: Նախիկ որ դարձեալ նրբաթել նկարագործ պէտք լիներ. Խոյր՝ որի ճակատին պէտք մի ոսկեայ թիթեղի վերայ Սրբ-ութ-ն Տեառն բառերը գրուած լինէին. նոյնպէս Թումին պէտք նկարագործ լիներ: Ա. Հարօնի որդւոց համար (քահանայից համար) պէտք շապիկներ, գօտիներ լինէին, եւ փառաց ու պատուի համար՝ տպարօշներ: Ա. Հարօն եւ իւր որդիքը քահանայանալու համար պէտք օծուէին ու օրհնուէին: Ի քահանայութիւնն պաշտօնը կատարելու համար 25—50 տարեկան պէտք լինէին (Թուոց գլ. Ը.) քահանայք պէտք առանձին պարապմունք չունենային բացի կրօնի պաշտամունքից:

— Հրէայք սուրբ եւ անսուրբ կենդանիների մի օրէնք ունէին, որով բաժանւում էին խաւնակեր այլազգիներից, իսկ սուրբ կենդանիները ըստ այմ կարելի էր գոսպատորել.

Ա. Բոլոր չորքոտանիները՝ որոնք կճղակաբաշխ են եւ որոճումեն:

Բ. Բոլոր թռչունները, որոնք կարթակատուց եւ մագլատոր չեն.

Գ. Բոլոր ջրային կենդանիները՝ որոնք թեւ ու թեփ ունին.

Իսկ սեռունների մէջ նեռք՝ որոնք շարժելին թռչկոտում եւ ոտոտոտումեն ու աղդր ունին, որոնցմեն են մարախը եւլն. (Ղեւ. ԺԱ.):

— Որդեծնութեան դէպքում, արու մանուկը եօթներորդ օրը պէտք թլպատուէր եւ թլպատութիւնից յետոյ ծննդեան քառասներորդ օրը մայրը իւր սրբուելու համար պէտք ներկայանար Լոտրանին ու մի տարեկան գառն կամ մի աղաւնու ձագ կամ տատրակ պէտք տար քահանային դոհելու համար,

*իսկ ազգիկ զաւակի ծննդաբերութեան արբութեան օրերը վաթսուն եւ վեց օր պէտք է լինէր, որից յետոյ մայրը զաւակի հետ պէտքէ ներկայանար խորանին այն պատրաստութեամբ՝ մինչ որ ուղայի համար յիշուած է։ (Ղեւ. ԺԲ.)։*

*Հրէական եկեղեցին եւ պաշտամունքը եղան քրիստոնէական եկեղեցու եւ նորա պաշտամանց նախագաղափարը, որի մասին իւր ժամանակին կը խօսեմ։*

ՅՈՒՍԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ.

# ՊԱՏՄԱԿԱՆ

## ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆՆ ԵՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ։

(Ազբաթ. պէս Ը. Զ. 1885)։

—

*Իբրահիմ փաշայի յարձակումը Մօրէայի վրայ 1824—1825։ Թողնենք մեկուսի այն թշուառ խռովութիւնները և դառնանք վերստին դէպի ազատութեան պատերազմը։ Երբ Մեսօլօնգին յետ վանեց Օմէր Վրիօնու յարձակումները, Սկուտարի փաշան զօրաժողով արաւ Դալմացիայի մէջ։ Օմէր Վրիօնին էլ բազմաթիւ նոր գնդեր հասաւ Էպիրոսի կողմերում, մինչդեռ մի քանի սպառազինուած նաւատորմ էլ գալիս էր սաստել Յունաստանի ափերին և կղզիներին։ Օմէր Վրիօնին յառաջ խաղաց Արտայի վրայով, իսկ Սկուտարի փաշան Աքէլոսեան ձորի միջով։ Այդ միջոցին աւստրիական մի յանդուգն վճիռ տեսաւ Մարկոս Բոցարիս՝ յարձակուելու մի փոքրիկ վաշտով վերջին փաշայի զօրքերի դէմ, և մի քանի Էտոլեան լեռնաբնակ զինուորներ իւր կողմը գրաւելուց յետոյ, գիշերուայ մէջ, երբ թշնամին իջևանած էր Կարպենիցի անձուկ հովտում, յեղակարծում խուժմամբ ընկաւ նորա բանակի վրայ։ Սոսմ՝ քաջագործութիւն, որ դժբախտաբար գնուելու էր երիտասարդ հերոսի թանգ մահուամբ (21 Օգոստ. 1823)։ Օմէր Վրիօնին միացաւ Մուսթայի փաշայի հետ։ Սոքա դրոհ տուին դէպի Անատոլիկօ, բայց այս կղզիական փոքրիկ քաղաքն ամբողջ մէկ ամսուկէս ընդունայն պաշարելուց յետոյ, նորա և Մեսօլօնգու արիասիրտ դիմադրութիւնից, պարէնի պակասութիւնից և աշնանային յորդ անձրևից դժուար կորուստներ կրելով, ետիպուեցան դառնալ դէպի Հիւսիս։ Ընտանի երկպառակութեամբ պարտաստուած պատերազմը նորից դժ առաջ 1824 և 1825 թուականներին։ Եգիպտոսի Մեհմետ փաշան, որ վաղուց*

արգէն ստիպողական պատուէր էր ընդունած Բ. դրնից՝ Մօրէան կրկին նուաճելու, սպառազէն զօրքով իւր լուծի տակ դրաւ Կրէտան 1824 թ. Գրեթէ նոյն միջոցին (Յունիս) դուրս չոգաւ Դարդանելլից և Կափուդան փաշան, որ ունէր 200 առագաստաւոր նաւ և 14,000 զօրք. Սա ընկաւ միայն մի քանի տկար եզերային մարտկոցներով պաշտպանուած փոքրիկ Փսարա կղզու վրայ, հարուածեց կողոպտեց քաղաքն և երբ Ս. Նիկողայոս վանքի անվեհեր պահապանները յօդս ցնդեցին թէ իւրեանց և թէ պաշարողներից հաղարաւոր մարդիկ, հրամայեց բռնել բնիկներին և Քիօսից ու միւս կղզիներից Փսարայի վրայ պատսպարուող փախստականներին և սպանել նոցա իսկ նոցա նաւերը, թուով մի հարիւր, մասամբ այրել, մասամբ գերի տանել. Այս պատուհասից ազատուած Փսարացիները ճողոպրելով ապաւէն գտան Էգինայի մէջ. Տասն օրից յետոյ Միաւլիս մի հազար նաւաստիներով կրկին տէր դարձաւ քաղաքի աւերակներին, կոտորեց Տաճիկների պահապան զօրքը, որ ունէր 1600 մարդ, խորտակեց կամ նուաճեց 23 թշնամական նաւ և վերջապէս 30 հատ Թնդանօթ յափշտակելով, հեռացաւ այն տեղից, որովհետև անհնարին էր դիմանալ կղզու ժանտաբեր օդին. Այժմ նորից եկաւ Կափուդան փաշան, խցեց նաւահանգստի մուտքն և ամայի անապատ դարձրեց կղզին.

Այդ միջոցին եկաւ Ալէքսանդրիայի նաւահանգստից Մեհմեդ Ալիի որդեգիր Իբրահիմ փաշան. սա ունէր 54 պատերազմիկ և բազմաթիւ բեռնակիր նաւեր, 16,000 ցամաքային զօրք և 150 դաշտային և օրմակած Թնդանօթ. Օգոստոս ամսի կէսին այս զարհուրելի նաւատորմը խարիսխ ձգեց Բուդրումի առջև (Հալիկարնաս), Կոսի Հանդէպ. Միաւլիս յանդգնեցաւ 70 հատ փոքրիկ նաւերով խիզախելու Իբրահիմ փաշայի մեգումար սոսկալի զօրութեան դէմ. Մի քանի անվճռական կռիւներից յետոյ Յոյները վերջապէս այրեցին Թունիսեան ծովակալի մեծ նաւը. Նոյն իսկ աշնան Մօրէայի վերայ արշաւել երկնչեց Իբրահիմ փաշան, որ հանապազ պաշարվումէր յունական մեծ ու փոքր նաւերից. Հոկտեմբերի վերջերում նա չոգաւ իւր զօրքով, որ թէ ջերմից և թէ դասալքութիւնից շատ նուազած էր, դէպի Կրէտա. Մերթ յաջող և մերթ անյաջող յարձակումներով Միաւլիս այնքան նեղեց եգիպտական նաւատորմը, որ վերջապէս Նոյեմբերի 2-ին իսպառ ցրեց նորան և գերի բռնեց մի քանի նաւեր. Իբրահիմ փաշան հասաւ Սուդա միայն Նոյեմբերի վերջերում, երբ Յունաց նաւերը ձմերային փոթորիկներից ստիպուած պարտ էին վերադառնալ դէպի կղզիները.

Այսպէս հատուցին Յունաց քաջ նաւաստինները Փսարայի վրայ կրած դառն կորուստների վրէժը. Ուր էլ Տաճիկները յաղթանակ կանգնէին, այդ լինումէր միայն նոցա թուական գերազանցութեան և Փսարիօտների անհոգութեան շնորհով. Մինչդեռ Յոյներին յաղթանակ շնորհողն էր տոկունութիւնը, արիութիւնն ու կորովը — յատկութիւններ, որոնք

*թերևս ոչ մի ծովային պատերազմի մէջ չեն երևացել առաւել վսեմ կերպով, քան թէ Ծոյների այդ պատերազմում։*

*Սակայն Ծունաստանի չար բախտից սորա դէմ զինուած թշնամական զօրքերի գլխում կանգնած էին սրտով անվկանդ և գործով յաջողակ երկու մարդիկ — Ռէշիդ փաշան և Իբրահիմ փաշան. Կափուդան փաշան էլ նոր նոր պատրաստութիւններ տեսնելով առաւել ժրաջան յամառութիւն էր ցոյց տալիս այժմ քան թէ սպասելի էր նորանից. մինչդեռ Ծունաց կառավարութիւնը ոչ բաւականին հեռատեսութիւն էր երևցնում, ոչ էլ կարողանում էր ճշտիւ գնահատել թշնամու ոյժը — երկու թերութիւններ, որոնք առաւել նպաստեցին թշնամուն ձեռք բերելու 1825 Յունուարի աղետաւոր յաջողութիւնները, քան թէ նորա բոլոր զօրքերն միասին առնուած։ Ձմեռուայ երկու ամիսների մէջ արագ արագ նոր գնդեր կազմելուց և կորած ու սպառած պատերազմական պաշարները լրացնելուց յետոյ, Իբրահիմ փաշան 1825 Թ. Փետրվար ամսին խաղաց դէպի Սուդա և առանց մի որ և իցէ ընդդիմութեան հանդիպելու և կամ գէթ մի Ծունաց պատերազմիկ նաև նշմարելու հասաւ Մօդօն։*

*Նուաճելով միանգամայն Մօդօնի և Կօրօնի շրջակայքը, նա դարձրեց իւր աչքը Նէօկաստրօնի (Նավարինի) վրայ։ Այս բերդի, որպէս և Սբ-ֆակիթերիա կղզու և հանդիպակաց հին Նավարինի (Ստանքիօ) կիսաւեր մարտկոցի մէջ այնքան Ռումելիացիներ և Մօրէացիներ տրուեցան Ծոյների կողմից, որքան որ կարելի էր ձեռք բերել շտապ տագնապով։ Թշնամին կանգնեց Սֆակիթերիայի առջև 70 նաւերով և բուռն սաստկութեամբ գրոհ տուաւ հին Նավարինի և Նէօկաստրօնի վրայ ծովեզրից և ցամաքից միանուագ։ Սակաւաթիւ պատնէշներից վատ պատսպարուած Ծոյները, առանց նահանջու որ և իցէ օգնութիւն, չէին կարող դէմ դրնել ընդ երկար Սֆակիթերիա կղզու վրայ։ Զնայելով որ նոքա շատ անգամ ուժգնապէս յետ վանեցին ներս խուժելու հետամուտ թշնամու յարձակումները, բայց վերջ ի վերջոյ չորս հազար զօրականներից բաղկացած մի Օսմանեան գունդ ոտք դրաւ կղզու վրայ (27 Ապրիլի)։ Ծոյների մեծագոյն մասը, որոնց թիւումն էր և Պիկմնոտացի ազնիւ կոմսն Սանտա Ռօզա, սուր ի ձեռին շահատակ ընկան իւրեանց զօրապետի կողքին, որ էր Հեթիրայի հիմնադիրն Անագնօստարաս, միւսներն ընկղմեցան ալիքների մէջ մինչդեռ փորձուէին լող տալով անցնել դէպի հին Նավարին։ Սֆակիթերիայի և հին Նավարինի առնուելուց յետոյ Նէօկաստրօն էլ, այժմ իւր գլխաւոր պատուարից զուրկ և միմիայն մի հասարակ որմ ունեցող միջնաբերդով պաշտպանուած, ստիպուեցաւ անձնատուր լինել, թէ և քաջ էին նորա պահապանները։ Ամբողջ պահապան գունդը ստացաւ ազատ ելք և երկար բանագնացութիւններից յետոյ տարագիր եղաւ դէպի Կալամաթա (23 Մայիսի)։*

Երբ Իբրահիմ փաշան նուաճեց Կալամմատօն և բովանդակ Մէսոենիան և տէր դարձաւ Նէօկաստրօնի վրայ, այնուհետև չուեց դէպի Արկադիա, անցնելով լեռնային կիրճերի միջից, ուր կանգնած էր Թ. Կոլօկօտրօնիս։ Յունիսի 7 ին նա մտաւ անպաշտպան և բնակիչներից թափուր եղած, բայց պարէնով առատ Տրիպօլիցայի մէջ։ Օգոստոսի սկզբում նա որոշեց մի նոր ասպատակ սկսել Մէսսենիայի դաշտավայրի վրայ։ Ամեն բան կողոպտելով և հրոյ ճարակ անելով անցաւ մինչև Մօնէմվազիայի սահմանը, այն տեղ նա մասամբ կոտորեց, մասամբ էլ գերեց 800 այր մարդիկ, կիներ և մանուկներ, որոնք թաքչած էին մի փապարի մէջ Կիպարիսի մօտերքում, և ուրիշ 400 մարդիկ, որոնք ապաւինած էին Վրօնտանու քարայրին։ Իբրահիմի բացակայութեան ժամանակ Յոյները կամեցան յանկարծուստ ընկնել Տրիպօլիցի վրայ և Ֆարիէ զօրապետն իւր տակտիկներով արդէն մօտեցել էր գիշերուայ մէջ քաղաքի պարիսպներին, բայց և այնպէս այս քաջութեան գործը ի դերև ելաւ, որովհետև Յոյները չկարողացան ի դէպ ժամու թիկունք տալ նախապշաւ զօրապետին։ Սեպտեմբերի 10-ին Իբրահիմ փաշան յետ եկաւ հարուստ աւարով և բազմաթիւ գերիներով և իսկոյն մի նոր հրոսակ արձակեց Մէսսենիայի ճահճային հարթավայրի և Կիպարիսեան գաւառի վերայ։ Նորա նպատակն էր կողոպտել այն տեղերի գինու և ձէթի պաշարները։ Սեպտեմբերի վերջերում մի Օսմանեան նաւատորմ նոր օգնութիւն և նոր պարէն հասցրեց նորան։

Մեսօլօնգիի պաշարուիլն եւ յարձակմամբ առնուիլը 1825—1826։ Մօրհայի մէջ մինչև այժմ մնացել էին անառիկ միայն Նաուպլիան և սորան մերձակայ Հեդրա կղզին, իսկ միջին Յունաստանում տակաւին անյաղթ էին երկու բերդեր — Մեսօլօնգին և Աթէնքի ամրոցը։ Իբրահիմ փաշան արշաւեց դէպի Մեսօլօնգի, որի առջև արդէն 1825 Թ. Ապրիլից սկսեալ կանգնած էր Ռէշիտ փաշան, Օսմանեան զօրավարներից ամենաքաջը, որոշ հրամանով՝ անշուշտ նուաճելու Յունաց ապստամբութեան այդ գլխաւոր նեցուկը։

Մեսօլօնգի բերդաքաղաքը գտանվում է ծովագոգի հիւսիսային եզերքում, Պատրասի հանդէպ։ Ծովն այստեղ ծանծաղ է, ինչպէս և Վենետկի մօտերքում, և տղմուտ ջրերը կազմում են այնպիսի եղտիւրներ, որ ոչ մի նաւատորմ կարող չէր մերձենալ քաղաքին և ռմբակոծել նորան այն ժամանակուայ գնդաձիգ անօթներով։ Ցամաքի կողմից քաղաքն ունէր մի ցած պարիսպ և երկու փոս։ Օգոստոսի 2-ին 1825։ Յոյները յաջողաբար յետ վանեցին Ռէշիդ փաշայի յարձակումը։ Այնուհետև Օսմանեան զօրքն ու նաւատորմը պատուէր ստացան շրջապատել քաղաքն ամբողջ ձմեռ և տանջել նորան սովով։ Բայց Հեդրայի ծովակալն Միաուլիս հնար գտաւ փոքրիկ վաշտով երեք անգամ շաւիղ բանալու Օսմանեան նաւատորմի միջից և պարէն հասցնելու պաշա-

րուածներին։ Ցանտէ կղզու Հարևան բնակիչներն էլ առաքեցին ի նպաստ նոցա ինչ որ կարացան։

Ձմեռուայ մէջ եկաւ ինքն Իբրահիմ փաշան պաշարման գործն անձամբ վարելու համար։ Սկզբում նա ծաղր էր անում Ռէշիդ փաշայի վրայ, որ սա չէր կարողանում ոտնահար անել քաղաքի որմիկները։ Ո՛ր կողմ էլ հայէին պաշարածները, ամեն տեղ տեսնում էին կամ Թշնամու վրանները ցամաքի վրայ, կամ նորա կայմերը ծովի երեսին։ Ռէշիդի գաղտնութիւնը, որ հրամայել էր Տաճկի սովորութեամբ ի ցից նստեցնել նոցա աչքերի առջև մի քահանայ, երկու կին և մի քանի երեխայ, առաւել սիրտ էր տալիս նոցա ոչ մի պայմանով անձնատուր չլինելու։ Երբ Իբրահիմ պահանջեց, որ նորա Թարգմաններ առաքեն իւր մօտ բանակցութեան համար, նոքա պատասխանեցին. «Մենք անուս մարդիկ ենք, շատ լեզուներ չգիտենք, բայց վարպետ ենք հրացանի»։ Իբրահիմի Արաբները, որոնք դեռ ձիւն չէին տեսած, շատ նեղվում էին ձմեռուայ խստութիւնից, և Ռէշիդ ուրախանում էր իւր սրտում տեսնելով նորա յարձակման ապարդիւն մնալը։ Ցոյների համար գլխաւոր վտանգն այժմ ծովակողմից էր, ըստ որում Եգիպտական և Օսմանեան նաւերը իրար հետ միանալով, իսպառ փակել էին անցքերը։ Բերդի միջից վերջին լուր հանողն էր դոկտոր Մէյեր անուն զուիցերական Փիլհելլէնի նամակը, որի հեղինակը մի լրագիր էր հիմնած Մեսօլօնգի մէջ և այժմ հրամանատարի պաշտօն էր վարում պատնէշների վրայ։ Նորա գրութեանը նայելով մեռածների թիւը հասնում էր 1740, բոլոր տունները դարձել էին շեղջակոյտ աւերակ. ռումբերի հարուածից և օդի բռնութիւնից չէր պատսպարում ոչ մի յարկ, ոչ մի կայան, մարդիկ կերակրվում էին մկներով, կատուներով, ծովային դալարով, ամեն տեղ լիքն էին հիւանդներ։ Ապրիլի 1 ից սկսած՝ էլ ոչ ոք չէր ստացել օրական նպար։ Ամենքը վստահ էին վանելու Թշնամուն, եթէ միայն գէթ երեք շաբաթուայ ուտելուստի պաշար գտնէին։ Բայց ահա բնակիչներին էլ ոչինչ չմնաց անելու, բայց թէ թափել վերջին ճիգն, այսինքն կամ միասին գոյթ տալով մի ելք բանալ կամ մեռնել։ Եւ նոքա փորձեցին այդպէս անել գիշերուայ դէմ 22 Ապրիլի 1826 թ։ Որոշուած էր որ տակաւին առ ձեռն գտնուած մասամբ վիրաւոր և մասամբ դեռ բուժուող 3000 զօրականները յառաջ խիղախէին և ճանապարհ կտրէին Թրամատների և Թշնամու բանակի միջից. նոցա ետևից հուպ առ հուպ պիտի երթային 5000 կանայք և մանուկներ — կանայքը տղամարդի շորերով և ձեռքերում գաշոյն բռնած, այսպէս էլ մանուկները։ Սակայն շատերը նախադասեցին յետ մնալ և մեռնել մայրենի յարկի տակ։ Մեկնողներն ու մնացողներն առ միշտ հրաժարական ողջոյն էին տալիս միմեանց։ Արևի մայր մտնելուց առաջ փոսերի վրայ տախտակներ դրուեցան և ամենքը, որոնք անցել էին, պառկեցան գետնատարած, մինչև որ նշան տրուի գրոհելու։ Հազիւ թէ լուսինը սկսել էր շողալ

երկնքից և աւասիկ ձայն որոտաց «Ցառաջ, յառաջ — մահ Թշնամուն», և ելքը սկիզբ առաւ։ Պալիկարները նորից ցոյց տուին իւրեանց վաղեմի քաջութիւնը։ Ինչ մարտկոց որ կար նոցա առջև՝ տապալեցին, գնտաձիգ զինուորներին սպանեցին — բացին ազատութեան ճանապարհ։ Բայց Թշնամու միջով Թափ անցնելուց յետոյ Ցունաց քաջերը յանկարծ ըմբռնուեցան դաշտի վրայ Տաճիկների հեծելազօր գնդից և այս տեղ առաւել այր մարդիկ, կանայք և տղաներ զոհ եղան օսմանների հարուածին, քան Թէ նոյն իսկ անցքի ժամանակ։ Իսկ որոնք կարողացան կենդանի հասնել լեռներին — ամենքն էլ սովամահ մեռան։ Այս աղիողորմ տառապանքի ժամանակ մի Ցոյն աղջիկ, որ շալակած տանուէր իւր հիւանդ եղբօրը, տեսնուէ հեռուից իւր վրայ սլացող մի Տաճիկ զօրական։ աղջիկը գետնի վերայ է գնում հիւանդին, վերցնուէ նորա հրացանը, դէմ է կենում Տաճկին, գլորուէ նորան երիվարից և ապա Թէ շարունակուէ հեռու տանել իւր եղբօրը, — Քաղաքի մէջ հրետների բոմբիւնն և պատերազմի շառաչիւնը տևեց մինչև առաւօտ։ Կեճալիս ինքն իւրեան և Թշնամիների մէկ մասը յօդս ցնդեց վառօդով։ Իբրահիմ փաշան ընդունեց 3,000 կտրուած գլուխներ, 3,000 կին ու մանուկ գերի վարուեցան։

Մեսօլօնգին ամբողջ հինգ ամիս տոկաց պաշարման բոլոր աղէտներին։ Ցոյների յոյսը դեռ երբէք այնպէս չէր նուազել, ինչպէս որ այժմ։ Նոցա գործի վրայ Եւրոպայի և նոյն իսկ Ցունաստանի մէջ խօսուէին արդէն իբրև մի վերջացած բանի վրայ։

Աննկուն Հիդրիօտներն անգամ սկսան վհատիլ այժմ, իւրեանց կողմն էլ նոյն վիճակը սպասելով, ինչ որ հասել էր Փսարային։ Նոցա քաղաքի առջև գումարուած մի ազգային ժողով արդէն որոշել էր Թողնել հայրենիքն և նաւել Ամերիկա։ Բայց նոյն միջոցին Լաղարոս Կոնտուրիօտիս անունով պատուելի և մեծանուն մարդը, որ ամենքից շատ զոհեր էր բերած հայրենիքի պաշտպանութեան համար, տեսնելով Հիդրայի քայքայումն և Ցունաց գործի անկումը, ոտքի ելաւ և դոչեց։ «Դուք ինչ կուզէք, այն արէք, բայց ես և եղբայրս և մեր խմբի մարդիկը կամենում ենք մեռնել, և մեռնել այստեղ, ուր ծնուած ենք»։ Այս խօսքերը վախճան տուին վէճին։ Բոլորքեան ամաչած և միանգամայն ոգևորուած աղաղակեցին «Մենք էլ, մենք էլ կամենում ենք այստեղ մեռնել»։

Երրորդ ազգային ժողովը հաւաքուած էր Եպիրոս, երբ Մեսօլօնգի անկման լուրն այն տեղ հասաւ։ Ամբողջ կէս ժամ լռութիւն տիրեց ակումբի մէջ և ապա Թէ ճառել սկսաւ Կոլօկօտրօնիս ծերունին, մխիթարութեան ամբիծ խօսքեր ասելով։ Այս ժողովը մի խնդիր ուղղեց Բրիտանիայի դեսպանին Կ. Պօլսի մէջ, որպէս զի Անգղիայի միջամտութեամբ առ ժամանակ դադար տրուի զէնքերին։

Արևմուտքի մասնակցութիւնը Յունաստանի ազատութեան գործին 1826—1827։ Յոյների ցոյց տուած ոգևորութիւնն և համբերատար տոկունութիւնը բոլոր տառապանքների մէջ վերջ ի վերջոյ գրաւեց յօգուտ նոցա Եւրոպական ազգերի համակրութիւնը, թէպէտ և կառավարութիւնները դեռ անտարբեր էին «ապըստամբների» վերաբերմամբ կամ թշնամական ոգով էին զինուած նոցա դէմ։ Յոյների շարքում Տաճիկների դէմ մարտնչելու համար արդէն պատերազմի սկզբից եկած էին ամեն ազգի յօժարակամ զինուորներ (փիլհէլլէն), և այս օտարականներն էին, որոնք կազմեցին Յոյների կանոնաւոր զօրքը (տակտիկ)։ Նեղութեան ամենադառն ձգնաժամում (1823) հասաւ Մեսօլօնգի սքէնհօր գնդապետը, բերելով իւր հետ Անգլիայի Յունասէր ընկերութեան ձեռքով գնուած հրէաններն և այլ պատերազմական պէտքերը։ Փոքր ինչ յետոյ նորա օրինակին հետևեց Լօրդ Բայրօն տիեզերահռչակ բանաստեղծը, նուիրելով Յոյներին իւր հանճարն և ոսկին։ Նա արժանի չեղաւ հասնելու իւր նպատակին, որ էր հաշտեցնել իրարուց գանգատաւոր խմբակները, կանոնաւոր վաշտեր կազմել իւր յատուկ և ապա գերմանական և միւս յունասէր ժողովներից իւրեան յանձնուած դրամով և, վերջապէս, օգնութեան հասնել Լէպանտօ (Նաուպակտոս) ամրոցին, որ ի մեծ վնաս Յոյների միշտ պաշարուած էր Տաճիկներից,—որովհետև մեռաւ արդէն 19 Ապրիլի 1824, զոհ լինելով մի ուժգին ջերմի 38 ամեայ հասակում։ Արտայի արքեպիսկոպոսը, Մաւրօկորդատոս, Սուլիօտներն և նոյն իսկ Բայրօնի հոգատարութեամբ զրահաւորուած զինուորները յուղարկաւորեցին նորա մարմինը մինչևի հանգստարան և փառաւոր շքով թաղեցին Նօրմանն կոմսի և Մարկոս Բօցարիսի գերեզմանների կողքին, հասարակային սուգը տևեց 21 օր։ Բայրօն մեռաւ, բայց նորա օրինակի բարոյական աղդեցութիւնը շարժեց շատերի բարի նախանձն և ապարդիւն չմնաց Յոյների համար։

Անգլիայի Գէորգ Գ. թագաւորի առաջին նախարարն Գէորգ Կանինգ չէր կամենում այն տեղ հասցնել բանը, որ Մետտերնիքի պօլիտիկան իսպառ յաղթանակէր բովանդակ ցամաքի վրայ։ 25 Դեկտեմբերի 1825 թ. Ալէքսանդր Ա.-ին յաջորդեց Նիկողայոս կայսրը, որ անվեհեր մէկն էր, և գործունէութեան եռանդով լի մի այր մարդ, հակամիտ ականջ դնելու իւր զօրքի և հոգևորական դասի հրաւիրակաչ ձայնին՝ Յոյներին նպաստելու համար։ Այս կայսրի հետ բանակցելու մտքով Կաննինգ առաքեց Ս. Պետերբուրգ Վէլլինգթօն դուքսին, Նապօլէոնի դէմ մղուած ընդհանուր պատերազմի ախոյեանին, որ թէ բովանդակ Եւրոպայում ականաւոր էր և թէ նոյն իսկ Ռուսաստանի մէջ լաւ աչքով դիտուած։ Դեռ Մեսօլօնգիի նուաճումից առաջ, արդէն 4-ին Ապրիլի, Նիկողայոս և Վէլլինգթօն ստորագրեցին այն դաշնադիրը (protocole), որով երկու պետութիւնները յօժարու-

ժէին միջամտել Յունաստանի գործերին և վերջ տալ պատերազմին։ Սակայն Յոյները Փիլհէլլէնների օգնութեամբ դարձեալ տանուլ տին Շարունակեցին մարտը։ Նոյն միջոցին Բավարիայի մէջ աթոռ նստաւ Լիւդվիկ Թագաւորը, որ Եւրոպայի ամէն վհատականներից առաջ և մեծագոյն կանգնել էր Յոյների կողմը։ Փարիզի պէրերի ժողովում (chambre des pairs) Շատոբրիան դերակոմսը կշտամբեց Ֆրանսիայի մեծաւորներին, որոնք Իբրահիմ փաշայի առաջնորդութեամբ մարտնչում էին Մեսօլօնգի դէմ։ Ֆրանսիայի, Գերմանիայի և Շուիցերիայի մէջ ամէն տեղ Փիլհէլլէնական ընկերութիւններ կազմուեցան, և սոցա գլխաւոր կառավարիչն էր աղնուամիտ Էյնար Ծրնէվացին։ Յունաստանին օգնելու համար ուղարկվում էին մեծագին գումարներ, բարձրաստիճան զինուորական անձինք գնում էին սրով աջակցելու Յոյներին։ Լորդ Կոխրան քաջարի ծովակալը, որ անուանի էր իւր յաղթանակներով Պորթուգալցիների և Սպանիացիների վրայ Հարաւային Ամերիկայում, եկաւ հրամանատար լինելու Յունաց նաւատորմի վրայ իսկ Սիր Րիչարդ Շուրչ յանձն առաւ ցամաքային զօրքերի հրամանատարութիւնը, և այս մարդիկն իւրեանց բոլոր ազդեցութեամբ ոտքի ելան ջնջելու Յոյների երկպառակութեան հոգին։

Կոխրանի և Շուրչի խորհրդով էր, որ Տրօցէնի ազգային ժողովի մէջ 11 Ապրիլի 1827 ամի Յունաստանի նախագահ կամ լաւ ասել — կառավարիչ ընտրուեցաւ Կապօ դ' Իստրիաս, որի բարի համբաւն ասես թէ, կարող պիտի լինէր երաշխաւոր կանգնելու Յունաստանի ներքին հանգստութեանը։ Բայց նա դեռ չէր եկած, երբ ընկաւ ցամաքային Յունաստանի ամուր ամբարտակն Ակրօպօլիս — Աթէնքի բերդը։ Մեսօլօնգիի ընկճումից յետոյ Ռէշիդ փաշան պաշարել էր այդ բերդը, և բոլոր Յոյների միտքն ու զօրութիւնն ուղղուած էր այժմ նորա փրկութեան վրայ։ Այդ միջոցին ընկաւ Կարաիսկակիս, որի մասին հիացեալ թշնամիներն անգամ ասած էին, թէ «Միայն մի Ռէշիդ ունին Տաճիկները, մի Կարաիսկակիս Յոյները, — երկուքն էլ մարտնչող առիւծներ, ո՞վ որին կյաղթէ արդեօք»։ Վայրապար մարտ մղեցին Կոխրան և Շուրչ, իսկ ֆրանսիացւոց Ֆաբրիէ հազարապետը թէև կարողացաւ իւր երկու հարիւր զինուորներով ճեղքել թշնամիների բանակն և անցնել դէպի Ակրօպօլիս, բայց չգտաւ այս տեղ այն տոկունութիւնը, որ ցոյց էր տուած Մեսօլօնգին, և 7 ին Յունիսի 1827 Ակրօպօլիս անձնատուր եղաւ Տաճիկներին։ Յոյն պահապանները ստացան պատուաւոր իրաւունք կամ կարասիքով ու զէնքով դուրս գնալու բերդից, որովհետև սերասկերը լսած էր, թէ Իբրահիմ փաշան, Խմիթից գալով, կամենում էր խլել նորանից յաղթութեան փառքը, ինչպէս որ արած էր Մեսօլօնգիի մօտ

Մինչ այս մինչ այն դիւանագիտութեան մանրակրկիտ գործերն այնքան յառաջացել էին, որ 6 Յուլիսի 1827 ոչ թէ միայն երկու, այլ ե-

րեք ծովակալ պետութիւնները աջակից եղան խաղաղութիւն հաստատելու Յունաստանի և Բ. Դրան մէջ։ Նոցա դաշնագրի միտքը նոյն էր ինչ որ և Ս Պետերբուրգի պրօտօկոլինը, այսինքն զինադադար և ինքնուրոյն կառավարութիւն Յունաստանի համար, սակայն Տաճկաստանին մի որոշեալ տուրք վճարելու պայմանով։ Ասել է թէ դաշնագիրը կամենում էր տալ Յունաստանին մի չափաւոր անկախութիւն կամ մի այնպիսի դրութիւն, որ արդէն ունէին Մոլդովիայի և Վալախիայի հօսպօդարութիւնները։ Բայց Բ. Դուռը զայրացմամբ և լիրբ խօսքերով մերժեց դաշնագրի պայմաններն, և նորա այս ընթացքը Յունաստանի փրկութեան պատճառ եղաւ։

Պատերազմը Նավարինի նաւահանգստում 1827։ Միջերկրական ծովի վրայ գտնուող երեք ծովակալներն՝ Կոդրինգթօն, դը Րինյի և Հեյդն կոմսը իւրեանց նաւատորմները միաւորեցին։ Նոցա նպատակն էր թոյլ չտալ որ պատերազմը շարունակուի։ Իբրահիմ փաշան ստացաւ Եգիպտոսից նոր նոր զօրքեր։ Եգիպտոսի և Տաճկաստանի նաւատորմը Նավարինի նաւահանգստում կանգնած մտադիր էր խաղալ դէպի Հիդրա, Այդ միջոցին աւստրիկ եկան երեք ծովակալներն և երեսաւ երես յայտնեցին փաշային, որ նա անպատճառ դադար տայ զէնքերին։ փաշան խոստացաւ առ ժամանակ հանգիստ մնալ, մինչև որ պատասխան ընդունէ Կ. Պօլսից։ բայց չնայելով այս խոստմունքին հրամայեց ասպատակել Մեսսենան։ Ծովակալները մի ազդարարական թուղթ գրեցին նորան (17 Հոկտ.) որպէս զի չհամարձակուի իրագործել այդ խորհուրդը։ Սակայն Իբրահիմ արդէն մի օր առաջ մեկնել էր Նավարինի բանակից, թերևս Էլպանոջի ծովագոգում Ութիդ փաշայի հետ անձամբ խօսակցելու մտքով և կամ գուցէ ֆռանգների պահանջմունքից խորշելու համար։ Ուստի դաշնակից ծովակալներն որոշեցին միահամուռ զօրութեամբ մտնել Նավարինի նաւահանգստի մէջ և ստիպել, որ թէ օսմանեան նաւատորմը յետ դառնայ դէպի Պօլիս և թէ ցամաքի վրայ վախճան տուրւ պատերազմին *)։ Ներս մտնելիս նոքա տեսան յանկարծ, որ Տաճկաստանի և Եգիպտոսի նաւային գումարտակը սըմբակաձև կանգնած էր նաւահանգստի մէջ, ճակատելու կազմ և պատրաստ նոցա նաւերի թիւն էր 130, սոցանից 89 պատերազմիկ նաւեր էին 2438 հրետներով, մինչդեռ դաշնակիցներն ունէին միայն 27 նաւ 1276 հրետներով։ Կոխրան հրամանատարը պատուիրած էր իւր զօրքին որ ոչ մի թնդանօթ չարձակուի, մինչև որ Տաճիկներն ինքեանք առիթ չտային։ Այն ինչ երկու կողմից էլ յորդոր էր լսվում ի զուր արիւն չթափելու, յանկարծ, արդեօք ըստ հրամանի՞ թէ ոչ, Նափուդան բէյի զինուորները հուր տեղացին Կոխրանի նաւի դէմ, որ այնուհետև ինքն

(*) Պատերազմի հետագայ նկարագրութիւնն արուած է հետեւելով Գիրվինուսին (հատոր VI. 346)։

էլ Լենդանօթ արձակելով խորտակեց Թշնամու նաւը։ Օսմանեան նաւատորմը ոչ շարժել կարող էր այն անձուկ տարածութեան մէջ և ոչ փախչիլ, այլ սոսկալած էր միայն պաշտպանութեան վրայ հոգ տանել։ Բայց որովհետև Տաճիկները ոչ կարգապահութիւն ունէին, ոչ էլ սառնարիւն համբերութիւն, որ ամեն բանից աւելի պէտք էր նոցա այս դիպուածում, և որովհետև նոցա բուն առաջնորդը բացակայ էր, ուստի մեծ շփոթութիւն ընկաւ նոցա մէջ և նաւապետների պատուէրները սկսան իրար հակասել։ Անընդհատ կատաղութեամբ չորս ժամ տևեց պատերազմի գոռը ռումբների խլացուցիչ որոտմամբ, որոնց սոսկալի արձագանքը ուժգին թնդում էր լեռնափակ նաւահանգստի մէջ, մինչև որ գիշերը վերջ էդրաւ մարտին։ Ծաղթողների գրեթէ բոլոր նաւերը վնաս կրեցին այս տեղ և նոցանից շատ մարդիկ ընկան։ պարտուողները զոհեցին վեց հազար մարդ, իսկ նոցա նաւատորմը բոլորովին կործանուեցաւ։ Լէպանտոյի օրից ի վեր (1571 թ.) այսպիսի մի խորտակիչ հարուած դեռ չէր ստացել Տաճկաստանը։ Ամբողջ նպաստանդիստը ծածկուած էր բեկորներով, աւերակներով և նաւերի կմախքներով։ Տաճիկները հրկիզեցին պատերազմի անպէտք նաւերը, և սոցա պայթիւնն ու բոմբիւնը լսվում էր մինչև առաւօտ։ Արդէն երեկոյ էր, երբ Իբրահիմ փաշան վերադարձաւ դէպի այս աւերածութեան ասպարէզը։ Ծովակալները տեսնելով որ նա հրամայել էր իւր գնդերին բերդը քաշուելու, կարծեցին թէ կրկին պէտք կլինի մի նոր մարտ մղելու միւս օր, և իմաց տուին փաշային, թէ նոքա չեն եկած իբրև Թշնամի և թէ այժմ էլ պատրաստ են խնայել Օսմանեան նաւերի մնացորդին, միայն թէ ինքըն փաշան Թշնամութիւն չսկսէր։ Եթէ ոչ՝ նոքա կըջախջախեն թէ այդ նաւերն և թէ մարտկոցները, և Իբրահիմի արարմունքը կըհամարեն իբրև պատերազմի յայտարարութիւն՝ Սուլթանի կողմից։ Նոցա նաստն աղդեց, և ահա բերդի աշտարակների վրայ պարզուեցան սպիտակ դրօշակներ։ Քռանգների նաւատորմը յետ չդաւ իւր կրած վնասներն ուղղելու, իսկ Եգիպտական նաւերի փոքրիկ մնացորդը փաշայի հրամանով դարձաւ դէպի տուն։

**Կապօ դ' Իստրիասի նախագահութիւնը 1827 — 1831։** Յովհաննէս Անտօն Կապօ դ' Իստրիաս կոմսը ծնաւ Կօրֆու կղզու վրայ 1796 թ։ Յոնիական կղզիներն այն ժամանակ գտնվում էին Վենետկի իշխանութեան ներքև։ Երիտասարդ կոմսը կրթութիւն ստացաւ Պատուայի համալսարանում, ուսանելով գեղարուեստներ և բժշկական գիտութիւն։ Երբ Բոնապարտ տապալեց Վենետկի ծերակոյտը 1796 թ. կղզիները դարձան Ֆրանսիայի հպատակ, սակայն յետոյ նոքա մտան Ռուսաստանի հովանաւորութեան տակ, և այդ միջոցին Կապօ դ' Իստրիաս սկսաւ իւր փառաւոր ասպարէզը։ Մօցենգօյի *) դեսպանութեան

*) Սա Ռուսաց դեսպան էր Վիեննակում։

ժամանակ նա եղաւ իւր Հայրենեաց պետական ատենադպիր. իսկ երբ Տիլզիտի հաշտութիւնից յետոյ կղզիներն անցան Նապոլէոնին, Կապօ դ' Իստրիաս, չկամելով մնալ ֆրանսիական ծառայութեան մէջ, 1809 թ. գնաց Ս. Պետերբուրգ. 1813 թ. նա խաղաց Ռուսաց գործերի հետ Գերմանիա. նոյն միջոցին Ալէքսանդր կայսրը շնորհեց նորան իւր հաւատարմութիւնն և առաքեց նորան Զուիցերիա, այս երկրի չեզոքութիւնը ձեռք բերելու համար. Յետոյ նա նստաւ մեծ դիւանագէտների հետ Վիէննայի կոնգրէսում, և ապա Փարիզի երկրորդ հաշտութեան ժամանակ Գերմանիայի դէմ ուղղեց իւր աղեցութիւնը. Ալէքսանդրի մտքերը նա այնպէս քաջ ըմբռնած էր, որ Կայսրը նորան յանձնեց յօրինել սրբազան դաշնագրութեան ծրագիրը 26 սեպտ. 1815 ամի. Նեսսելրօդէ կոմսի օրով նա վեց տարի պետական ատենադպրի պաշտօն վարեց Պետերբուրգում, երբ սկիզբ առաւ Յունաց շարժողութիւնը, և նա ինքն էր Վենետկի հեթերային հոգի տուողը. Որովհետև Ալէքսանդր չէր կամենում ոչինչ լսել ապստամբ Յոյների մասին, իսկ Կապօ դ' Իստրիաս չէր ուզում հեռու մնալ նոցանից, ուստի նա արձակուրդ առաւ և գնաց Ժընէվ, որտեղից ուշի ուշով հետևում էր յեղափոխութեան ընթացքին. 1827 թ. մինչդեռ նա շրջում էր Եւրոպայում և Փարիզից Բեռլինի վրայով Պետերբուրգ վերադառնալու վրայ էր, նորան հասաւ Յունաց ազգային ժողովի գրութիւնը, որ կոչում էր նորան գլուխ կանգնել Յունաստանի. Պետերբուրգի մէջ նա ստացաւ իւր պատուաւոր հրաժարականը պաշտօնից և ապա գնաց Փարիզ ու Լօնդօն, որպէս զի կարող լինի կապել Յունաստանը Եւրոպական տէրութիւնների հետ և դրամական միջոցներ գտնել ազատութեան գործի համար. Տասնամեայ թափառումներից յետոյ 2 Փետր. 1828 թ. նա վերջապէս ոտք դրաւ Յունաստանի հողի վրայ.

Իբրահիմ դեռ Պելոպոնեսի մէջ էր, Ռումելիայի բոլոր բերդերը դեռ Տաճիկների ձեռքում էին և սահմաններն որոշելու մասին պետութիւնները դեռ ոչինչ արած չէին. Պելոպոնեսում մշակելի հողերից միայն երեսներորդ մասը հերկուած էր, արքունի գանձարանը դատարկ էր, եկամուտը չնչին և գողերի ձեռքում. ամեն տեղ երևում էին աւերակներ, անտուն անտէր աղքատներ, խումբ խումբ այրի կիներ և որբեր, օգնութեան կարօտ գեղջուկներ, անթիւ նժդեհներ և վերջապէս որ ամենաչարն էր — ամեն ուրեք տիրում էր նեղքին հետ և առտնին թշնամութիւն.

Անհնարին էր մի ոք և է պետական մարդու առջև մի առաւել դժուար գործ դնել քան թէ այն, որ Համարձակ յանձն էր առնում Կապօ դ' Իստրիաս. Նորա փորձառութիւնն և մեծ համբաւը հաւատ էին յարուցանում դէպի նա. անընկճելի էր նորա կամքի զօրութիւնը, նա սակաւապետ էր և աշխատասէր, նորան հերիք էին մի պատերազմական անկողին և մի սեղան. Եւ նորա սկզբնական յաջողութիւնները ար-

դարև սքանչելի էին. բոլոր գժտութիւնները ասես թէ իսպառ վերջացան նորաչգալուց յետոյ և մարդիկ, ուր որ չէր կանգնած թշնամին, գնքերը վայր դնելով, սկսան մշակել երկիրն և վերաշինել աւերակները։

Արտաքին բարկացող հանգամանքներն էլ նպաստաւոր էին նորան։ Ֆրանսիացւոց Մէզօն մարաջախտն իւր գնտով Մօրէա մտած մարտնչում էր Իբրահիմի դէմ. այս այն ժամանակն էր, երբ փիլհելլէնական ըղգացմունքներն ամենազօրեղ արձագանք էին գանում Ֆրանսիացւոց սրտերում։ Մի ուրիշ պէտք էլ, որ գրեթէ վեց տարի անհամբեր սպասվում էր, տեղի գտաւ այդ միջոցին, այսինքն Ռուսաստանը յարձակւեցաւ Օսմանեան պետութեան վրայ Եւրոպայի և Ասիայի կողմերից։ Այս պատերազմին յաջորդեց Ադրիանդուպօլսի հաշտութիւնը 14 Սեպտ. 1829 թ. որով Բ. դուռը վերջ ի վերջոյ ստիպվում էր ընդունել յօգուտ Յունաստանի Լօնդօնի պրօտօկօլը (արձանագիրը), մոռանալով իւր գոռոզ խօսքերն որ ասած էր երկու տարի առաջ, թէ «մեր անդառնալի վճիռն է ոչինչ չըլսել ըմբոստ Յոյների մասին մինչեւի կատարած աշխարհ»։

Կապօ դ' Իստրիասի հրամանով Իպսիլանտիս և սիր Րիչարդ Չուրչ գնացին Թուրքիա և ամեն տեղ յաղթող հանդիսացան։ Մեսօլօնգին վերստին ընկաւ Յոյների ձեռքը. Յոյները մաքրեցին նորան և մի հոյակապ եկեղեցական հանդիսով տօնեցին նորա վերադարձը։ Այս էին ազատութեան պատերազմի վերջին կռիւները։

Նոյն միջոցին երբ կատարվում էին այս դէպքերը, կոմսի ներքին վարչութեան եղանակն որոշ կերպարանք ստացաւ։ Նա ուղղեց իւր գլխաւոր ուշադրութիւնը շինականների և արհեստաւորների բարեկեցութեան վրայ և հիմնեց Տիրինթի մօտ մի օրինակելի տնտեսութիւն, հասցնելով մշակներին ամենայն ինչ երկրագործական գործիք, անասուն և հունդ։ Աշխատեց բանալ ամեն տեղ ազգային վարժարաններ փոխադարձ դասատուութեան ոճով, որ երբեմն սովորական էր Զուիցերիայի մէջ. հաստատեց մի զինուորական գպրոց Նաուպլիայում, մի հոգևորական սեմինար Պօրօսում, մի հոյակապ որբանոց և մի կետրոնական գիմնազիոն Եգինա կղզու վրայ, ուր կարճ միջոցում դումարուեցան 1500 համբակներ։ Այս էր Կապօ դ' Իստրիասի կառավարութեան եղանակի լաւ կողմը։

Սակայն մինչդեռ նա ամեն տեղ ջան էր դնում հոչակելու, թէ ինքն էր Յունաստանի միակ փրկիչն և ապաւէնը, մի և նոյն ժամանակ արհամարհանք էր ցոյց տալիս դէպի այն բանը, որ ամենից թանգ էր ազգի աչքում, և այսպիսով հեռացնում էր իւրեանից ազնիւ սրտերը։ Նա արհամարհում էր ազատութեան պատերազմի եռանդն և ազգի բարձրագոյն կրթութիւնը, ասելով թէ «Եւրոպայի ճոխ գիտութիւնները պէտք չէին Յունաստանին»։ Նա ինքն հին Յունաց լեզուին և գրականութեանը անգէտ էր, խօսում էր միայն Կորֆուի բարբառն և գրու-

մէր միայն ֆրանսերէն։ Նորա մէջ էլ արմատացած էր այն թշուառ մոլորութիւնը, որ ունէր Նապոլէօն Ա., նա էլ սորա և բոլոր բռնակալների նման հաւատ չէր ընծայում գաղափարների զօրութեանը և առաւել մարդիկներին։ Ինչպէս որ փոյթ էր տանում Նապոլէօն բարձրացնել իւր եղբայրներին, սոցա վրայ յենվելու և սոցա իրրև գործիք բանեցնելու համար, այնպէս անում էր և Կապօ դ' Իստրիաս։ Սա էր որ կուսակալ նշանակեց կղզիների վրայ գժնդակ և ամենքին ատելի Վիտարօ կօմսին, իսկ Ռումելիայի վրայ սպարապետի աստիճանով կուսակալ կարգեց իւր կրտսեր եղբօր Ավգուստին, թէև սա ի մանկութենէ դաստիարակուած էր վանքի համար և երբէք ոչ մի պատերազմ չէր տեսած, և սորա իշխանութեան ներքև պիտի ծառայէին Իպսիլանտին և Զուրչը։

Պատերազմական դրութիւնը պատճառ բերելով Կապօ դ' Իստրիաս խափանեց առ ժամանակ Տրիօցէնի ժողովով հաստատուած սահմանադրութիւնը, չընայելով որ հէնց այդ ժողովն էր նորան իշխանութեան կանչողը։ Նա հիմնեց մի պետական ատեան, Պանհելլէնիօն անունով, որի անդամները թէպէտ և շատ նշանաւոր մարդիկ էին, բայց զուրկ վճռողական քուէ տալու իրաւունքից։ Հերիք չէր այս։ 1829 թ. նա գումարեց Արգօսի մէջ մի նոր ազգային ժողով, և նորա վարկը դեռ այնքան մեծ էր, որ կարողացաւ այն ժողովումն էլ քուէների երկու երրորդ մասն իւր կողմն գրաւել և սահմանել ինչ որ միայն կամենում էր։ Նա դարձաւ գրեթէ մի ինքնակալ իշխան։ Օսմանեան տիրապետութեան ժամանակ Յոյների ժողովրդական վարչութեան հին ձևը տակաւին տևում էր։ ամեն մի ժողովուրդ ազատ քուէով ընտրում էր իւր դեմոգերօնտներին և սոցա ձեռքով տնօրինում էր իւր գործերը։ Կապօ դ' Իստրիաս սոցա էս իւր իշխանութեան տակ ձգեց, հրամայելով որ ընտրելիների ցուցակը նախ իւրեան ցոյց տրուի և ընտրել տալով միայն այնպիսիներին, որոնց որ ինքը կըցանկար։ Ֆրանսիական եղանակին հետևելով' ամեն տեղ նշանակեց գաւառապետներ և ոստիկանութեան տեսուչներ։ Ազգային ժողովը կամենում էր հաստատել մի անկախ դատարան. բայց Կապօ դ' Իստրիաս այնպիսի դատաւորներ ստեղծեց, որոնք բոլորովին կախ էին իւր կամքից. բացի այսմանէ քաղաքական յանցանքների քննութեան համար էլ հաստատեց մի ջոկ ատեան, որ իւր վճիռները բոլորովին կառավարութեան հաճոյքին համեմատ էր դնում։ Ապա թէ սահմանեց մի գաղտնի ոստիկանութիւն, որ հին Վենետկի ոստիկանութեան պէս՝ ահ ու սարսափ էր ազդում քաղաքացիներին։ Շուտով նորան շրջապատեցին այնպիսի արբանեակներ, որոնք իւրեանից էլ վատ էին և առաւել չարիք էին նիւթում քան թէ նա ինքն կըցանկար։ Ցունաստանի ազնիւ անձինքը, ինչպէս էին Իպսիլանտին և այլք, միանգամայն հրաժարուեցան նորանից, իսկ Զուրչն ու Փարիսէն դառնութեամբ թողին նորան։

Այսպէս Կապօ դ' Իստրիաս նկրտումեր մի փոքրիկ բռնակալութիւն շինել Յունաստանից, յուսալով թերևս, որ իշխանութեան գաւազանը իւր տոհմին կմնայ առ միշտ։ Բայց սորա կորուստն արդէն մօտենում էր։ 8 Փետրվարի 1830 թ. հաստատուեցաւ Լօնդօնի վերջին և վճռական դաշնագիրը (protocole)։ Ադրիանօպօլի հաշտութեան պայմանով Յունաստանը դրուած էր դեռ Օսմանեան վեհապետութեան ներքև. իսկ այժմ նա պիտի դառնար անկախ պետութիւն իւր սեփական թագաւորով։ Այս թագաւորի գահն առաջարկուելու էր Կորուրգեան Լէոպոլդ իշխանին, որի ձեռքի տակ Բելգեան ամբողջ 34 տարի վայելեց մի օրինաւոր, անաչառ և ազատամիտ կառավարութիւն։ Այս բարենշան որոշումների հետ դաշնագրի մէջ ամփոփուած էին նա և մի քանի սևաթոյր կէտեր։ Օրինակի համար, Հոյակապ Կրէտա կղզին, որ ամեն միւս գաւառներից աւելի գոհեր էր բերած ազատութեան գործին և հէնց այժմն էլ մարտնչումեր թշնամու դէմ, առանց նկուն լինելու,—և Սամօս կղզին, որ պատերազմի սկզբից ի վեր ինքն իւրեան ազատ քարոզելով՝ ազատ էլ մնացել էր տակաւին,—վերստին յետ էին տրվում Թ. Դռան, որի իշխանութեան ներքև դեռ երկար ժամանակ պիտի հնձէին Յունաքային սահմանները չէին նշանակում Արտայից մինչև Վօլօ, այլ Ասպրօպօտամոս գետի բերանից սկսեալ մինչև Զէյթունի, որով մի քանի քաջ ցեղերի հայրենիքը կրկին ընկնումեր տաճկային լուծի տակ։

Ծանր էր Կապօ դ' Իստրիասին հրաժարուիլ իւր պաշտօնից յօգուտ մի օտար իշխանազնի. ուրեմն այսքան տարուայ նեղութիւնները զո՞ւր պիտի կորչէին նորա համար։ Նա ընտրուած էր նախագահ եօթն տարուայ ժամանակով, բայց այս ժամանակի կէսն անգամ դեռ չէր անցած։ Լէոպոլդ ընդունեց առաջարկութիւնը։ Կապօ դ' Իստրիաս ներքուստ լի մի նամակ գրեց իշխանին և շնորհաւորութիւն յայտնեց նորան, կցորդելով որ Յունաստանն երբէք չի պիտի կարողանար զօրեղ դառնալ և հանգիստ գտնել իւրեան որոշուած աշխարհագրական սահմանների մէջ։ Վերջապէս նա գրում էր, թէ Լէոպոլդ պարտ էր յուսացց եկեղեցու գոգը մտնել։ Այս թղթի հետևանքն այն եղաւ, որ Լէոպոլդ իւր յօժարութիւնը յետս կոչեց։

Այս դրութեան մէջ էր Յունաստանը, երբ յուլիսեան յեղափոխութեան պատճառով եւրոպական դիւանագիտութեան առջև այդ փոքրիկ երկրի վիճակից առաւել միտք գրաւեցնող կարևոր գործեր ծագեցան։ Ազատութեան մտքերն օրէցօր այժ առնելով Եւրոպայի մէջ, Կապօ դ' Իստրիասի դէմ ուղղուած ընդդիմութիւնը սաստկացաւ։ Ազատութեան պատերազմի նշանաւոր մարդիկներից միայն Կոլօկոտրօնին և Կանարիսն նորա կողմն մնացին, միւսներն խոպան նորան հակառակ էին։ Մավրոկօրդատոս, որի մայրն նորա ձեռքով աքսորուած էր, Դեմիտրիոս Իպսիլանտիս, Ռումելիայի զինապետներն և սոցա ժողովրդական առաջնորդն Յովհաննէս Կոլլէտիս, կոմսից մի առանձին նախանձով

չարակնուած ազնուազարմ Պետրոս Մավրօմիքալիս իշխանն և վերջապէս Հիդրայի բոլոր ականաւոր անձինքը պատկանուէին ընդդիմակ դասուն։ Նաուպլիայի մէջ գտանվուէին երեք պետութիւնների պատուիրակներն՝ միստր Գաուկին, բառօն Ուէն և բառօն Րիւկմանն, իսկ Ճունաստանի ծովերի վրայ երեք ծովակալներ, որոնք էին Հօդամ, Գիլյօն և Րիկորդ։ Սոցանից Կապօ դ' Իստրիասին կուսակից էին միայն Ռուսիայի Րիւկմանն և Րիկորդ պաշտօնատարները, իսկ Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները համակրուէին նորա դէմ կանգնած դիմադրական խմբին։

Առաջին երկու տարիների ընթացքում ամեն բան խոնարհուէր Կապօ դ' Իստրիասի առջև։ Բայց երբ նորա վարչութեան եղանակը փոքր առ փոքր ամենքին յայտնի եղաւ, այն ժամանակ ահա հնչեց նորա դէմ « Ձմիւռնիայի Սուրհանդակի » առաջին բողոքը, որ սակայն ֆրանսերէն տպուած լինելով՝ չկարողացաւ մեծ ազդեցութիւն գործել Ճունաստանի վրայ։ Այնուհետև նոյն իսկ Նաուպլիայի մէջ սկսաւ հրատարակուիլ մի դիմադրական լրագիր « Ապօլլոն » անուամբ։ Նախագահն արգելեց նորան։ Խմբագիրը Հիդրա փախչելով՝ իւր թերթն այն տեղ շարունակեց տպել։ Նախագահը պահանջուէր, որ նա իւր ձեռքը մատնուի։ Հիդրացիները այս պահանջը մերժեցին և յայտնապէս ուրացան հնազանդութեան հարկը։ Սոցա օրինակին հետևեցին և Սիրացիները, որոնք էլ չէին կամենում տուրք վճարել Սիրայի մաքսանոցին։ Մայնայի մէջ էլ ժողովուրդն ընդվզուէր նախագահի դէմ։ Սորա հրամանով Մավրօմիքալիսի տոհմից երկու անդամ բանտարկուեցան և Պօրոսի մօտ կանգնած նաւատորմը պատուէր ընդունեց՝ գնալ և ընկճել Հիդրայի վտարանդութիւնը։ Սակայն յառաջ քան թէ մեկնել էր նաւատորմը՝ Միաուլիս իւր զօրականների հետ Պօրոս հասնելով՝ նուաճեց թէ նաւերն և թէ կղզին։ Եւրոպական պետութեանց ներկայացուցիչներին այնպիսի հրահանգ էր տրուած, որ նոքա պարտ էին համերաշխ միաբանութեամբ գործ տեսնել. բայց Ռուսիայի ծովակալն Րիկոր այս հրահանգի հակառակ շարժելով՝ առանց միւսների յօժարութեան միջամտեց յօգուտ նախագահի, պաշարեց Պօրոսի նաւահանգիստն և սկսաւ հուր տեղալ Հիդրացիների վրայ։ Միաուլիս, որ անզօր էր դէմ դնելու Ռուսերի պէս հուժկու ոսոխներին, յօդս ցնդեց « Հելլաս » կոչուած կրկնայարկ նաւը, հրկիզեց սորա հետ և ուրիշ 27 նաւեր և այսպէս ինքն իւր ձեռքով խորտակեց այն ղէնքերն, որոցմով այնքան ժամանակ յաղթանակ էր տարած Օսմանեան և Եգիպտական նաւատորմի վրայ։ Կապօ դ' Իստրիաս կամեցաւ ծանր դատաճանութեան մեղապարտ կացուցանել նորան և չէր գոշակուում, թէ ինչ էր հասնելու իւր գլխին։ Նոյն միջոցին Կոնստանդին և Գէորգ Մավրօմիքալիս եկած էին Նաուպլիա՝ բանտարկուած ազգականների համար բարեխօս լինելու կոմսի առջև։ Սակայն նոցա աղերսներն ընդունելութիւն չգտան և մինչև ան-

գամ նոյն իսկ Ռուսաց պատուիրակն Բիւկմանն, որ աշխատուէր ողոքել նախագահի սիրտը, չկարողացաւ նորան ի գուէ շարժել։

Հոկտեմբերի 9ին, առաւօտեան 6 ժամին, Կապօ դ' Իստրիաս մի հինօրեայ Կրէտացի Թիկնապահի ուղեկցութեամբ գնուէր եկեղեցի Կոնստանտին և Գէորգ Մավրօմիքալիս, լայն վերարկուով փաթաթուած, անցան նորա առջևից և կանգ առին եկեղեցու մուտքի մօտ։ Ճանկարծ Գէորգ կտրեց կոմսի ճանապարհը, միւս եղբայրը հրացան արձակից նորա գլխին, Գէորգն էլ նոյնը արաւ. և ապա թէ մխեց իւր դաշոյնը նորա փորի մէջ։ Կապօ դ' Իստրիաս ընկաւ դիտապատ և եկեղեցի տարուեցաւ։ Սպանիչները փախան։ Կրէտացի Թիկնապահը, որի առաջին գնտակը չէր դիպել Կոնստանդինին, դէն ձգեց իւր տրճանակը, արձակեց երկրորդից և դիպաւ։ Կոնստանտին երերաց, Թիկնապահը գետին տապալեց նորան և սկսաւ ոտնահարել և խոշտանգել։ Այսպէս մնաց նա հողի վրայ տարածուած։ Իսկ Գէորգ, ամբոխի մոլեգնութիւնից խուսափելով, աճապարեց դէպի Ռուէնի տունը։ Երեկոյեան դէմ Ռուէն երբ խոստմունք ստացաւ թէ Գէորգ դատուելու էր կանոնաւոր ատեանի առջև, մատնեց նորան Ալմէյդա զօրավարին։ Ցաւն օրից յետոյ նորան բերին զինուորական դատարան, իսկ Հոկտեմբերի 22ին հրապարակ հանեցին սպանելու։ Բանտի պատուհանից դուրս նայելով՝ հայրը տեսաւ նորա մահը։

Կապօ դ' Իստրիասի կուսակիցները փութացին համբաւել, թէ ամբողջ հակադիր խումբն էր նորա սպանութեան պատճառը։ Իսկ Ավգուստին կոմսն ասաց մի օր, թէ նորա եղբօր սպանիչներն էին Ֆրանսիան և Անգղիան։ Սակայն դատաստանի խուզարկութիւնը չկարողացաւ յերևան հանել և ոչ մի փաստ, որ ցոյց տար թէ մի դաւաճանութիւն եղած լիներ նախագահի կեանքի դէմ, և կոմսի ընկերները մնացին անձեռնհաս՝ դատապարտելու գէթ մի մարդ հակադիր խմբից։ Նախագահի մահից յետոյ մի քանի շաբաթ խորին հանգստութիւն տիրեց Ցունաստանի մէջ։

Թարգմ. Գերմաներէնից Փ. ՎԱՐԴԱՆԵԱՆ.

# ՆՈՑԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆՑ ԱՂԷՔՍԱՆԴՐ Գ-Ի ԵՒ ՄԱՐԻԱ ՖԷՕԴՕՐՈՎՆԱՅԻ ԹԱԳԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԾՄԱՆ ՀԱՆԴԷՍԻՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ*)։

Մայիսի 15 ին կատարուեց Ռուսաստանի նախկին մայրաքաղաքում ԱՂԷՔՍԱՆԴՐ Գ. Կայսեր եւ ՄԱՐԻԱ ՖԷՕԴՕՐՈՎՆայ Կայսերուհու Թագադրութեան եւ Օծման շքեղ Հանդէսը։

Մոսկվան իւր տխրալի տարեկան սուգը վերկացած օրից սկսել էր իւր մեծամեծ պատրաստութիւնները այդ Հանդիսի համար եւ արդէն Մայիսի առաջին օրերից իբրեւ պճնազարդ նորահարս զարդարուած ըստ ամենայնի պատրաստուել էր ընդունել իւր Օգոստափառ Փեսային։ Մայիսի 5-ից սկսան գալ աշխարհի ամենայն ծայրերից Պետութեանց ներկայացուցիչները, բարձրաստիճան պատգամաւորները, Ռուսիոյ ազնուական եւ ժողովրդական երեսփոխանները. իսկ 7-ին՝ հասաւ Հայոց Մայր Աթոռի ներկայացուցիչը, Սինոդի աւագ անդամ, Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիոյ Առաջնորդ Գեր. Մակար Արքեպիսկոպոսը։ Ինչպէս Մոսկվան մեծաւ յարգանօք եւ պատշաճաւոր դիմաւորութեամբ ընդունեց իւր բարձրաստիճան հիւրերին, նոյնպէս եւ Հայոց սակաւաթիւ հաւատակութիւնը ընդունեց իւր սրբազան Այցելուին։ Առաւել հանդիսաւէհութեամբ Մոսկվան ընդ առաջ դուրս եկաւ երբ բերին կայսերական Թագը, գայիսոնը, եւ Հանդիսին վերաբերեալ զարդերը (регаліи)։ Այս ամենը պատրաստութիւն էին Կայսեր ընդունելութեան։

Մայիսի 8 ին եւ 9 ին Կայսրը՝ իւր Օգոստափառ լծակից, երկու որդւոց եւ դստեր հետ գիշերեցին Պետրովսկի ամարանոցի պալատում, իսկ միւս օրը 10-ից մուտ գործեց Մոսկվայ ամենաշքեղ Հանդիսիւ եւ համբուրելով ի վերակի մատուռի Աստուածածնի հրաշագործ պատկերը, լքեւանեցաւ Կրեմլիի պալատը։ Հետե-

(*) Այս նամակը թէեւ տպուած է Մշակ լրագրի 94 համարում, սակայն և Արարատի խմբագրութիւնս Արժ. նամակագրից ընդունած լինելով ձոյնը, շնորհակալութեամբ հանդերձ հրատարակում է։

*ւեալ երեք օրերին առանձնացաւ մի վանքում աղօթելու, իսկ 14-ին շաբաթ օրը վերադարձաւ Կրեմլի: Այդ երեք օրերում հանդիսաւոր կարգաւ կարդացուեց Մոսկվայի բոլոր հրապարակներում թագադրութեան յայտարար հրովարտակը: Մինչ այս մինչ այն՝ Գերապատիւ Տ. Մակար Արքեպիսկոպոսը հարկաւոր այցելութիւնները կատարեց եւ վոխադարձն ընդունեց քսա սովորութեան: Նա այցելեց Կայսեր Հօրեղբայր մեծ իշխաններին, Մետրոպոլիտներին, Վրաստանի եկզարխին, կոմս Լօրիս-Մէլիքեանցին, Կայսերական Դրան, ներքին գործոց, արտաքին գործոց եւ ազգային լուսաւորութեան մինիստրներին, Մոսկվայի ընդհանուր կուսակալին, Կովկասեան գլխաւոր կառավարչին, Օբեր Պրոկուրօրին, երեք գլխաւոր արարողապետներին, կոմս Միլի—Նեսին, այլագաւան աղանդ բաժնի կառավարչին, Թուրքիոյ երկու փաշաներին եւ քանի հայ պատուաւոր ժողովրդականաց: Նա այցելեց նոյնպէս առանձին վերաբննութեամբ Հայոց երեք եկեղեցեաց, Հոգեւոր կառավարութեան եւ Լազարեանց Ճեմարանին: Այս ամեն ազդեցութեանց ժամանակ Գերապատիւ սրբազանին պատիւ ունեցայ իբրեւ թարգման՝ ուղեկից լինել: Մայիս 14 ին Նորին սրբազնութիւնը ստացաւ առանձին հրաւիրական տոմսակ թագադրութեան տնօրէն ժողովից եկեղեցական եւ պալատական հանդէսներին ներկայ գտնուելու, եւ 15-ին 8 ժամին արդէն գտնվումէր Վերափոխման մայր եկեղեցումը: Ոչ յունադաւան վեց եկեղեցականաց համար նշանակած էր առանձին պատուաւոր բարձր տեղ, առաջին տեղը Հայ եկեղեցականաց, ուր Նորին բարձր Սրբազնութիւնը գլուխ կանգնեց իսկ ես իբրեւ թարգման՝ նորա մօտ, ապա կանգնեցին Պետրբուրգի եւ Վարշաւայի Հռոմէական ծիրանազգեաց եպիսկոպոսունք եւ լուտերական երկու գեներալ պաստորները, եկեղեցւոյ մէջ շինած էր կարմիր մահուտով ծածկած ընդարձակ բարձրավանդակ մի, որոյ մէջ տեղում դրած էին կայսերական երկու գահերը: Ժամը 9 սկսեց եկեղեցական պաշտամունքը եւ պատարագը, կարդացին աւետարանը եւ ապա լուծիւն: Երեք մետրօպոլիտներ տասն եւ եօթն արքեպիսկոպոսներ, որոնց մի քանիսը Սլաւեանց երկիրներից էին, երեք վարդապետներ եւ երեք աւագ քահանայք, որոնք մի քանի սարկաւագներով եւ երգեցիկ երկու խմբով կատարում էին հոգեւոր հանդէսը, սեղանից*

մինչեւ եկեղեցւոյ Հարաւային դուռը կանգնած սպասում էին Հանդիսաւոր մուտքին եկեղեցւոյ պարսպի մէջ բարձր կացարանների վերայ Հաղարաւոր Հրաւիրականների եւ պարսպից դուրս անՀամար ժողովրդեան եւ դօրաց կեցցէները թնդանօթի եւ դանգակների որոտալից ձայների Հետ գոչդոչդին եկեղեցին, երբ Հանդէսն սկսաւ պաշտօնից շարժել: Մինչեւ այդ ժամանակ եկեղեցումը կանգնած էին միայն եկեղեցականները, Հանդիսի կարգադիր բարձրաստիճան անձինք, պալատականներ եւ սենեկապետներ: Իսկ արեւմտեան պատին կից շարուած էին մի գեներալի Հսկողութեան ներքոյ լրագրների թղթակիցները եւ նկարիչները, որոնց մէջ նկատելի էր Վերեշչակինը: Հանդէսը սկզբում կարգաւ մտան եկեղեցի արարողապետ սենեկապետների եւ Փոքի մաշտլների առաջնորդութեամբ Կայսերական գերդաստանը զոյգ զոյգ եւ բարձրանալով կանգնեցին այլագաւան եկեղեցւոյ պատգամաւորների կանգնած տեղի առաջ (եկեղեցւոյ Հարաւակողմը), յետոյ եկան օտարերկրեայ քրիստոնեայ արքայական Հիւրերը եւ կանգնեցին Հիւսիսային Հանդիպակաց կարգում. եկան Ռուսիոյ նախարարք եւ բարձրաստիճան անձինք եւ կանգնեցին արեւմտեան կողմը, պալատական կանայք եւ օրիորդք կանգնեցին այլագաւան եկեղեցականաց տեղից վերը յետ կոյս, իսկ Ռուսաստանի առաջնակարգ իշխանները, որոնք ոսկի բարձերի վերայ կրում էին Կայսերական երկու թագերը, Ծիրանիները, Անդրէի առաքեալական բրիլեանդ շղթայքը, գայլոսոնը եւ երկրագունդը, կանգնեցին գահերի երկու կողմերը: Երբ եկեղեցւոյ դրան առաջ Հովանաւ տակից դուրս եկան Կայսրը եւ Կայսրուհին, ընդ առաջ գնացին Պետրբուրգի մետրոպոլիտը խաչով եւ ջրով, իսկ Մոսկվայինը կարդաց մի ճառ, որը վերջանալից յետոյ երբ մտան եկեղեցի, ամբողջ քաղաքը դարձեալ շարժեց թնդանօթներին, զանգակներն եւ կեցցէների որոտմամբ: Կայսրը եւ Կայսրուհին խորին յերմեռանդութեամբ կարգաւ Համբուրեցին սեղանի արքայական Դրան անձրպետ պատկերները եւ բարձրանալով աստիճաններից կանգնեցին գահերի առաջ: Պետրբուրգի մետրոպոլիտը, որ Հանդիսապետն էր ու պատարագիչ կարգաց մի աղօթք, իսկ Կայսրը կարգաց Նիկիոյ Հանգանակ—Հաւատամքը. յետոյ ծնկան վերայ աղօթեց, Առաջ եկաւ կայ-

սեր եղբայր Մեծ Իշխան Վլադիմիրը, հանեց Կայսեր պարանոցից Անդրեի շղթան, ծածկեց արքայական ծիրանին եւ նորա վերայ ձգեց Անդրեի արքայական բրելիանդ շղթան. Կայսրը ոտքի կանգնեցաւ, ոսկեթել բարձերի վերայ մատուցած թագը առաւ եւ իւր ձեռքովը դրեց իւր գլխին, գայիսօնն առաւ աջ ձեռքը, իսկ երկրագունդը ձախ ձեռքը, ու բազմեց գահի վերայ. յետոյ շուտով կրկին կանգնեց, — դրեց բարձերի վերայ գայիսօնն ու երկրագունդը: Այս ժամանակ մի ամենաշքեղ եւ հմտեստ կիսաշրջան առնելով յառաջ եկաւ Կայսրուհին, որ մինչեւ այդ ժամանակ անշարժ կանգնած էր Կայսեր հանդէպ, եւ ծնկան վերայ չոքեց դէմ առ դէմ: Զորս պալատական կանայք հանեցին Կայսրուհու պարանոցից Անդրեի շղթան: Կայսրը պալատական կանանց օգնութեամբ ծածկեց իւր լծակցին արքայական ծիրանիովն, հագցրեց պարանոցին Անդրեի բրելիանդ շղթան, հանեց իւր գլխի թագը եւ դրեց Կայսրուհու գլխին եւ իսկոյն վերառնելով եւ իւր գլխին դնելով Կայսրուհու գլխին դրեց երկրորդ փոքր թագը, որ կանայք ամրացրին: Սորանից յետոյ Կայսրը բռնելով Կայսրուհու ձեռից բարձրացրեց եւ բազմացրեց գահի վերայ ինքըն եւս բազմելով իւր գահը ձեռքը առնելով գայիսօնը եւ երկրագունդը: Այս բոլոր ժամանակը եկեղեցում լռութիւն էր տիրում, որին վերջ դրեց խրոխտաձայն սարկաւագապետը բարձրը քարոզելով «Վասն ամենաբարեպաշտ ինքնակալ Մեծ Թագաւորին եւ Կայսեր ամենայն Ռուսաց . . . . » թուելով Ռուսիոյ միացեալ բոլոր հին եւ նոր նահանգների անուանքը: Քարոզը վերջանալուց յետոյ, յառաջ եկան կարգաւ ծառանգը, կայսրորդիք, եղբարք, հօրեղբարք եւ բոլոր կայսերական գերդաստունը, մետրոպոլիտք եւ քանի արքեպիսկոպոսունք, որոնք շընորհաւորեցին համբուրելով Թագապսակների աջերը, շնորհաւորութիւնը որ բաւական ժամանակ տեւեց, վերջանալուց յետոյ սկսաւ պատարագի շարունակութիւնը սովորական կարգաւ, երբ հասաւ հաղորդութիւն ընդունելու ժամանակը, առաջ գնացին բարձրանալով աստիճաններից երկու մետրոպոլիտները, եւ հրաւիրեցին հաղորդութեան բարձրաձայն ասելով «Երկիւղիւ եւ հաւատով յառաջ մատիք եւ սրբութեամբ հաղորդեցարուք»: Կայսրը հանեց եւ թողեց այն տեղ իւր մէջքի սուրը եւ Կայսրուհու հետ հրաւիրողաց առաջնորդութեամբ

գնաց նոր սիրած Թաւիշի վրայով մինչեւ սեղանի արքայական դուռը, ուր դիմաւորեց նոցա պատարագիչը օծման սուրբ իւղը ձեռին, եւ օրհնելով՝ օծեց երկուսի էլ ճակատները: Կայսրը յառաջ գնաց դէպի սեղան եւ իւր ձեռքով ընդունեց Հաղորդութեան սուրբ խորհուրդը, իսկ կայսրուհուն հաղորդեց մեծարօպոլիտը արքայական Դրան առաջ: Օծեալները երկրպագելով սեղանին՝ դարձան իւրեանց տեղերը: Պատարագը վերջանալուց յետոյ վերջացաւ եւ Հանդէսը: Կայսրը եւ Կայսրուհին նոյն շքեղ Հանդիսով դուրս եկան եկեղեցուց, կանգնեցին Հովանոցի տակ. Թնդանօթների, զանգակների, եւ կեցցէների որոտմունքով մոտն մերձակայ երեք եկեղեցիները, մատուցին իւրեանց մաղթանքը եւ սանդուխներով բարձրացան պալատը պաշտօնական մեծ Հանդիսականների ուղեկցութեամբ: Մինչ Կայսերական ամբողջ առանցնացած փոքր ինչ Հանգստանում էին, պալատի մի քանի ընդարձակ դահլիճները դղրդում էին Հաղարաւոր Հանդիսականաց շնորհաւորութեան եւ տեսակցութեան ուրախ ձայներով: Ժամը 2ն էր, աւետաբերը աւետեց Կայսեր գալուստը, որ այդ միեւնոյն շքեղ Թաւիշով եղաւ մի դահլիճից միւսը՝ մինչեւ սեղանատունն: Երկու օծեալ Լծակիցները սեղանի օրհնութիւնից յետոյ բազմեցին իւրեանց համար պատրաստած բարձր տեղում, իսկ հրաւիրականք՝ կարգաւ իւրեանց համար նշանակեալ տեղերում: Ռուս եկեղեցականք սեղանի վերայ եւս կրումէին իւրեանց ծիրանի վիլոնները (мантіи): Ճաշը սկսաւ պալատական կանոններով, սկսան կեցցէներ Կայսեր, Կայսրուհու, Ժառանգի, կայսերական տան, արքայազն հիւրերին, եկեղեցական դասուն եւ այլն, եւ վերջացաւ Հանդէսը՝ բաժանելով Հանդիսականաց այդ աւուր յիշատակ ոսկի մեծ մեդալներ:

Երկրորդ օրը նշանակուած էր՝ արքայական հիւրերի, Ռուսիոյ երեսփոխանների եւ Հոգեւորականների շնորհաւորէքը: Երբ երեսփոխանք կարգաւ մատուցին աղ ու հացերը, Թանկագին մատուցարանների վերայ եւ կարգը եկաւ Հոգեւորականաց՝ Կիեւի Մետրոպոլիտը կարգաց մի ընդարձակ ճառ, յետոյ մետրօպօլիտք եւ քանի արքեպիսկոպոսունք շնորհաւորելով համբուրեցին երկու օծեալների աջերը. եւ մինչ Կայսրը շնորհակալութեան ցոյցով վերջ դրեց մինչեների յառաջ գնալուն, նեղքին գործոց մինիստրը եւ Կովկասու գլխաւոր կառավարիչը

յառաջ հրաւիրեցին Դեր. Մակար Արքազանին. Կայսրը մի քանի խօսքերով եւ հարցերով բարեհաճեց մեծարել Հայոց Մայր Աթոռի ներկայացուցչին: Եկեղեցականք միւս. անգամ պատուասիրուեցին պալատումն ճաշով հետեւեալ հինգշաբթի օրը 19 ին Մայիսի:

Ինձ ցանկալի էր իրրեւ ականատես համառօտիւ նկարագրել միայն եկեղեցական հանդէսը, բայց թոյլ ներուի որ ընդարձակեցնեմ, ուստի մի համառօտ խօսք եւս, վերջացնելէս Թուլթուրճիեվօ հանդիսի քոյոր օրերում բայց առաւելապէս առաջին երեք օրը հիանալի էր Մոսկուայի ճրագաւառը, այս բառի նշանակութիւնը տակաւ է, լաւ է ասել ամբողջ Մոսկուան լոյս էր զանազան գոյներով եւ նկարներով, երեքտարական արեւներով եւ Մոսկուա գետից օդի մէջ բարձրացած ջրերի ծխածաններով: Այս պէս պայծառ եւ ուրախ էր ժողովրդեան սիրտն ու երեսը եւ ամենայն տեղ փայլում էր վայելուչ կարգապահութիւն: Ինչպէս էր հանդիսաւոր մուտքը, այնպէս եղաւ եւ հրաժեշտը, որ շաբաթնակուեց մինչեւ ամսի վերջերը: Իսկ մեր սրբազան հիւրը—Տ, Մակար Արքեպիսկոպոսը—իւր հրաժեշտը տուեց Մոսկուային 27 ին Մայիսի:

30 Հոկտ 1883 Մոսկուա.

ՅԱԿՈՎԲ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՍՈՒՐԽՆԵԱՆՑ

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## Պ. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԹԱՇՃԵԱՆԻ ՅՕԴՈՒԱԾԻ ԱՌԹԻՒ:

—

Մօտ օրերս իմ յարգելի ուսուցիչ պ. Նիկողայոս Թաշճեանի ստորագրութեամբ լոյս տեսաւ Կ. Պոլսում հրատարակուող «Հայրենիք» լրագրի մէջ մի երկարաձիգ յօդուած, որի մէջ պ. Թաշճեանը ամենայն անարդ և անպատիւ խօսքերով յարձակուելով էջմիածնի Սինօդի Սրբազան անդամոց վերայ, չարաչար պարսաւում և յանդիմանում էր նրանց իրենց այն մոռադրութեանց համար, որ իբր այժմեան ձայնագրուած Շարականի եղանակներ և այլ երգեցողութիւնք իրենց անճշտութեամբ և սխալ կազմակերպութեամբ անհաճոյ թուելով Սինօդականաց, ուստի և նրանց գործածութիւնը խափան դադարեցնելու նպատակաւ, խորհուրդ կազմելով արդէն վճռել են ինձ ուղարկել Երընջակ Գեր. Գրիգոր Եպիսկոպոս Ծովրեանի մօտ, որ այս անուանի քաջ

երաժիշտ Եպիսկոպոսից ձայնագրեմ մեր հին շարականի ձայները, որոց պ. Թաշճեան հանգուցեալ Հայրապետի պէս պարսկական խառնաշփոթ եղանակներ է անուանում, չըգիտեմ ինչ ապացոյցով. Այսպէս, նոյն յօդուածի մէջ պ. Թաշճեանի հայրենի աւանդութեանց վրէժխնդիր սիրտը կարեվէր խոցուած ենք տեսնում և այն մասին, որ նոյն շարականի ձայները բազմաշխատ Մխսրովբի ճիշտ երգուած եղանակներըը լինելով, ցաւում է որ, Սինօդի անդամք ի զուր նոցա ոչնչացնելու պատճառ պիտի լինեն անխոհեմարար, և նորէն եկեղեցական երգեցողութիւնք պարսկական և ռուսական անճաշակ և անախորժ եղանակների պիտի վերածեն. և այս ի հարկէ ոչ այլ ինչից ստիպուած, եթէ ոչ առ հանգուցեալ Հայրապետը ունեցած անչափ կրքից և ատելութիւնից։

Պ. Թաշճեանի այն յօդուածը վշտացրեց որպէս իմ՝ նոյնպէս և շատերի սիրտը. վշտացրեց այն պատճառաւ, որ բոլորովին սուտ և սխալ էր «Հայրենիքի» պ. խմբագրի իրեն դիտողութեան յանձնած այս անհեթեթ և անախորժ լուրը. Սինօդը ոչ ատելութիւն ունի առ հանգուցեալ Հայրապետը, և ոչ նորա մեծագործութիւնները ոտնակոխ անելու ցոյցեր արած է մինչև ցայսօր. Ահա այս և սորա նման յարգելի պատճառներից ստիպուած, պ. Թաշճեանի այս կեղծուպատիր գրութեան դէմ ակամայից պարտաւորվում եմ պատասխանելու. ուստի թող ինձ ներէ պ. Թաշճեանը, որ փորը ինչ խիստ պիտի խօսեմ իր հետ։

Պ. Թաշճեան, ես ձեզ ճանաչում եմ մինչեայն իրրև քաջ ձայնագրագէտ, ինչպէս Հ. Եղուարդ Հիւրմիւզեան հայկաբանութեան մէջ անուանի է, այնպէս և զուք ձայնագրութեան մէջ. Այո՛, երկինքը շնորհած է ձեզ այն պարգեւը, որ մահկանացուների սրտի հետ համարձակ խաղ անելու բաղդն ունիք այսօր, որին ձեր թովչական արհեստով կարող էք դիւրաւէս շարժել և յուրախութիւն և ի տրտմութիւն. Այո՛, մահկանացուների սրտի համար և կենսաբեր գարուն էք և ցրտաշունչ ձմեռ. վասնորոյ ինչպէս դիտէք իւրաքանչիւր գրուածքի ոգու և զօրութեան յարմար և ներդաշնակ ձայն դնել, նոյնպէս դիտէք և ձեզ ամենայն ծանօթ և անծանօթ եղանակ արագ և դիւրութեամբ ի գրի առնել. Այդ ունեցած թանկագին շնորհդ, որպէս ապիկար աշակերտիս, նոյնպէս և բազմոց իսկ յայտնի է. բայց գալով թէ կանոնաւոր և անսխալ շարական գիտէք, որ այս օրուան օրս ձեր գրածներն ևս ստոյգ և բուն իսկ Մխսրովբի ոգեշունչ եղանակներ համարելով, անարգուանք ուրիշ եղանակներն ևս, այդ մասին քաւ լիցի ինձ ձեզ համար երաշխաւորել. Շարական չըգիտենալուդ համար, վկայ ուրիշ մէկը չեմ հանի ձեր դէմ, բաց ինձանից և մի ճշմարտասէր անձից։ 1874 թուին, երբ ձեռնամուխ եղաք շարականներ գրելու, ինչպէս ես, նոյնպէս և Էջմիածնի ամբողջ միաբանական Ուխտը այն յոյսն ու ակնկալութիւնն ունէինք ձեզանից, որ հմուտ և տեղեակ գոլով շարականներին, պիտի մեզ

լսեցնել տալիք տօնելի Մեսրովբի քաղցրահնչիւն եղանակները. բայց բանից ինչ դուրս եկաւ, Պալատցի հայկի կարապետ քահ երաժիշտ տիրացուն, որ խիստ ընդել և հմուտ էր Պօղոսի եղանակներին և շարականներ գրելուն ձեզ աչակից, համբաւեց ձեր մասին որ, ինչպէս ասում են, բոբիկ էք եղել շարականներից. և այն ինչ որ դիտէք, ինչպէս թռչունները մարմնով և գունագեղ փետուրով զատ և որոշ են միմեանցից, այսպէս ձեր գիտեցածն էլ շարականների մի խառնուրդ լինելով, ձայնով և եղանակով խիստ տարբեր են եղել թէ նոյն իսկ վերոյիշեալ Կարապետի և թէ Հանգուցեալ Հայրապետի գիտեցածից. Այս ստուգեցինք նոյն իսկ ձեր բազմաթիւ սեագրութեան տետրակներից, որ շարականները ձայնագրած միջոցդ հաւան չըկենալով Հանգ. Հայրապետի գիտեցածին, ձերն էիք նախապատիւ համարել և գրել. Հանգ. Հայրապետը էս հաւան չըկենալով ձեր գիտեցածին, իրեն էր գրել տուել, ձեր և Հանգ. Հայրապետի գիտեցածներին էս չ'հաւանելով Հայջի Կարապետը, իրեն էր անսխալ համարել և գրել տուել, Երանի թէ ձեզ հետ այդ միջոցին Վ.հարան գնալու բաղդն էի ունեցել, գուցէ և իմ գիտեցածն էլ գրած կըլինէիք, ինչպէս նոյն իսկ այդ բանի համար ձեր այստեղից ժամգոհութեամբ մեկնելուց յետ, էլ ձայնաւոր և քիչ շատ շարականին տեղեակ մարդ չըմնաց, որ չբարձրացաւ Վ.հարան և իրեն շնորհքը ցոյց չըտուեց. Այսպէս պ. Թաշճեան, ձեր և ձեղանից յետ կազմած շարականը նմանուեց ճիշտ այն խղճալի աղքատ մարդոյ պատառոտուն հանդերձին, որ զատիկ օրը նոր հանդերձ շինելու կարողութիւն չունենալով, ի պատիւ զատկի իւր հինն էլ գոյնզգոյն շորերով էր կարկատել. որին կատակերգուն մինը պատահելով առաջին անգամ, ասել էր այն սուր և ծիծաղաշարժ խօսքը թէ, «տեղ տեղ շնորհաւոր», և նա ոչ նուազ զուարճալի խօսքով պատասխանել էր թէ, «օր ու մէջ ապրիս». որոնք և ինձ շատ յարմար են գալիս և ձեզ ասել.

Վերոյգրեալ առաջին ծիծաղաշարժ առածի նմանութեամբ յիշում եմ ես մի ցաւալի դէպք, որը իսկապէս կատարուել է հէնց մեր խեղճ շարականների գլխին, այն է, Հանգուցեալ Հայրապետը, սուրբ Գէորգի տօնը աւելնայն կերպով վայելուչ կատարելու համար, առանձին ուշ էր դարձրել և նորա շարականների վերայ յատկապէս մի զարդարանք տալու. ուստի և իւր թեթև եղանակ «Ով սուրբ Գէորգ» հասարակ մանկունքը ծանր չափով է գրել տուել ձեզ, որ սխալ է. Պէտք է ասել որ, սուրբ Գէորգ զօրավարի համար շինուած «Քաջամարտիկ» շարականը մեր երանաշնորհ նախնիքներից ընդունելութիւն գտած չէ եկեղեցում երգուելու. և շարականից դուրս ձգուած է եղել՝ մինչև ձայնագրեալ շարականի տպագրութիւնը. Պետրոս եպիսկոպոսը հաւան չըկենալով Պետրոս և Պօղոս առաքեալների «Ցնծա այսօր եկեղեցի» շարականի թեթև և սահուն եղանակին, սա ևս չըգի-

տեմ ինչ նպատակաւ ի պարիս Պետրոս առաքեալի այդ շարականն էր կոկել տուել։ Ստեփան եպիսկոպոսը ուրտունջ յայտնելով սուրբ Ստեփաննոս նախատարկաւագի «Նահատակ բարի քրիստոսի» շարականի գողտրիկ եղանակի դէմ՝ պատճառելով իւր անախորժ եղանակ, սա ևս ի պատիւ իւր անուանակցի, այդ շարականն էր ընդդիմ տուել (յղկել)։ Ո՞վ չէ կարող երաշխաւորել որ, դուք ևս պ. Թաշճեան, Նիկողայոս սքանչելագործի շարականը չէք կոկած, չէք զարդարած։ Կարծեմ թէ, եթէ Վեհարանի՝ տօն ունեցող ծառաները տեղեակ լինէին այս բանին, անշուշտ նոքա ևս իրենց անուանակից սուրբերին պատուելու համար, պիտի ձևով շնորհքով, դրստել տային նոցա շարականները։ Վերջապէս այս բարեյաջող դէպքում միայն Վահրամն է անբաղդ մնացել, որ տօն չէ ունեցել։ Ուրեմն պ. Թաշճեան, դուք ի՞նչպէս էք վկայում որ այժմեան շարականները Մեսրովբի պարզ և անպաճոյճ շարականներն են. և ևս ի՞նչպէս չըհաւատամ որ բոլոր շարականները ձախ ու ծուռ և այլանդակ եղանակների վերածուած չեն։ Եթէ այս իմ բոլոր ասածներն կրքից յառաջացած զրպարտութիւն կըհամարէք, բաղդատեցէք ձեր գրած շարականը Երուսաղէմում գտնուած ձեռագիր ձայնագրեալ շարականի հետ. կամ գրածներիս համար երգել տուէք Հաջի Կարապետին. գուցէ և այն ժամանակ կըհասկանաք թէ խօսքերս իրօք ստոյգ խօսքեր են, եթէ աւելորդ բարբանջմունք։ Այս ձեր օրերում պատահածները, գամ իմ տեսածներիս։

Պ. Թաշճեան, ինչպէս ձեր վերայ այն հաստատ համոզումն ունիմ որ օրինաւոր շարական երգել չըգիտէք, նոյն հաստատ համոզումն ունիմ և հանգուցեալ Հայրապետի վերայ որ, թէ մի օրինակ շարական երգել չըգիտէր, և թէ գիտեցածներն ևս ձեր սովորական խօսքով ասեմ ուլդուրմայ *) էին։ Օրինակ, երբ 1881 թուին հանգուցեալ Հայրապետի ներկայութեամբ ձայնագրուվեի բոլոր օրհնութեանց քաղուածքները, հանգուցեալ Հայրապետը դժուարանալով երգել շատ և շատ շարականք, անգամ դիւրիններն ևս, երբեմն երբեմն ընդհատելով երգելիք շարականը «Ծօ տղաս օգնէ՛ ք, օգնէ՛ ք» փաղաքշական խօսքերով քաջալերուվեր ինձ, և իրաւունք էր տալիս նոցա կոպիտ տեղերն ուղղելու. ես ևս ըստ իմ բարեհաճ կամաց և քմաց կապկպում էի նրանց այնպէս՝ ինչպէս իմ վարպետութիւնն ինձ ներուվեր։ Այս թողնենք։ Պատահեց մի քանի անգամ ևս, որ բոլորովին չըգիտենալով մի քանի շարականների ձայները, հրամայեց ինձ նոյն իսկ իւր առաջ ուլդուրմայ անել այդ շարականները. և ես երբ աւարտած կարդուվեի իւր առաջ, դառնայ ի՞նչ ասէ ինձ լաւ է պ. Թաշճեան, «Ապրի՛ ս տղաս, աղէկ գրեր ես, ճիշտ իմ գիտեցածն ալ այդպէս է»։ Այս խօսքերը լսողը

(*) Ուլդուրմայ անել, կը նշանակէ յարմարացնել, սազացնել։

Եթէ դուք վինէիք Ըըպիտի՞ ծիծաղէիք։ Մխով բանիւ ինչպէս ձեր գրածների մեծ մասը ուղղութեամբով են կազմուած, նոյնպէս և իմ գրածների մեծ մասը լոկ իմ ուղղութեամբով են կազմուած։ Այժմ ենթադրեցէք թէ այդ շարականները Մեսրովբի՞ եղանակները կըկրեն թէ Սահակ սարկաւագի։ Եւ այս խօսքերի մէջ եթէ ստուգիւն կայ, հանգուցեալ Հայրապետի դէմ ունեցած մեղքս ղղջմամբ կապաշաւեմ իւր ցուրտ գերեզմանի վերայ։ իսկ ձեր դէմ ունեցածն ևս կըքաւեմ սուրբ Էջմիածնի մէջ։ Ուրեմն Պ. Թաշճեան, այստեսակ մի խառնիճաղանճ եղանակների համար դուք ի՞նչպէսհաստատուեցաք իրրև մի երանաշնորհ նախնիքների ոգեշունչ եղանակներ ջատագովելով, անդոսնուելիք և նրանց՝ որոնք նոցա կանոնաւորելու ձեռնամուխ կլինին։ Թող թէ այդպիսի մի խօսք մի առարկայ չէ եղել ոչ վանքիս մէջ և ոչ վանքից դուրս։

Պ. Թաշճեան, ձեր յօդուածի մէջ անընդհատ և անխոհիր գովում էք այն ամենայն երգ և երգեցողութիւնք, որոնք առ հասարակ հանգուցեալ Հայրապետի և ձեր աշխատութեամբ և խմբագրութեամբ լոյս տեսան Էջմիածնի մէջ։ վասնորոյ և համարուելիք նոցա անյեղլի և զերծ և անվնաս մնացած ժամանակի կորստաբեր պարագաներից։ և այս խօսքերը այնպէս էք արտասանում որ, կարծես թէ դուք և հանգուցեալ Հայրապետը երգեցողութեան առարկան ուսումնասիրելու համար հէնց այժմ Մեսրովբի շինած վարժարանից էք գալիս։ Եւ այդ երգերի մասին տուած գովասանքներդ բաւական չըհամարելով, երաշխաւորում էլ էք որ, նոքա ամենքը ռուսաստանի և տաճկաստանի հայերից յարգուած և ընդունված են իրենց անեղծութեանց և ներդաշնակ կազմակերպութեանց համար։ ուստի ևմի միայն Սինօդն է որ հաւան չըկենալով, մտադրուել է իւր ատելութեան կնիքը դնել դրանց վերայ։ և եղանակների կանոնաւորութեան մասին ապացոյց էք բերում Յակովբ Մծբնայ Հայրապետի մի կտոր շարականը, որը առաջին անգամ Ձայնագրուած 40 ի չափ աշակերտներիս խմբովին երգել տուիք եկեղեցում իւր տօնի օրը ի ներկայութեան Կաթուղիկոսի և բազմաթիւ ժողովրդեան։ առ որ աւելացնում էք թէ, «ժողովուրդը խնդութենէն հրաշք կարծեց մինչև շարականի աւարտումը»։ Բայց պ. Թաշճեան, դրանով չէ ապացուցվում որ, այդ շարականն ևս անեղծ պահած է իւր եղանակը։ և եթէ ժողովրդին ախորժ է թուել, ո՛չ այնքան եղանակն է որ ախորժ է թուել, որչափ 40 աշակերտներիս եռանդուն հոգւով և միաբերան երգելը։ Այսպիսի տպաւորութիւն առհասարակ գործում են մարդիս վերայ այն նոր երգերը կամ օտար եղանակները, երբ առաջին անգամ ենք լսում։ Փորձեցէք հապա մի ձեր շնորհալիները, ոտքը դնել ռուսաստանի հողի վերայ, տես թէ այդ եղանակներին հաւանող մէկը կըգտնէք։ Եւ ո՞ր մէկը արդեօք մինչև ցայժմ շնորհակալութիւն մատոյց ձեզ, ձեր այդ ծանր աշխատութեան համար։ Ո՞ր հնախոյզ հայը մինչև ցայժմ հետաքրքրուեց այդ Աստուածային մատեանը բանալ և

պետեղ Մեսրովբի եղանակները որոնել. եթէ կարողէք, յայտնեցէք ինձ նոցա անունները. Եւ եթէ իրօք այդ սուրբ գիրքը կրումէ իւր մէջ ռուսաստանի և տաճկաստանի հային հաճելի եղանակներ, հապա ի՞նչ անենք դրանց շինծու և անճոռնի կազմակերպութեանց մասին ռուսաստանի հայերի կողմից արդէն յարուցված այն ահագին տրտունջները և աղմուկները, որոնք ամենայն օր դրեթէ լսվում են, չեմ ասում եկեղեցիներում այն պատճառաւ, որ Ռուսաստանի ամեն մի եկեղեցի գրեթէ ունի այդ գրքից, բայց գործ չէ գնում նորան ժամասացութեանց ժամանակ, և այս ո՛չ թէ ձայնագրագէտ քահանայ կամ դպիր չունենալու պատճառաւ, այլ տաղտկալի են առհասարակ նորա վատ և անդիւրևկան ձայները. Իսկ տաճկաստանցւոց համար միայն այսքան կասեմ որ, եթէ նորա ընտիր և միանգամայն տաճկաստանի բուն ախորժալուր եղանակները լինէին, անշուշտ 600 օրինակ տպուած շարականներից գէթ մի քանիսը կըգտնուէին Տաճկաստանում. բայց կարո՞ղ էք ուղարկել ինձ եղածների թիւը.

Աններկբայ եմ որ, այսպիսի մի բան, որպիսին է Շարականը երբէք նախատինք չէր բերիլ ձեզ, եթէ նորան ձայնագրելու ժամանակ ձեզ երգող միայն ընտրէիք հայի Կարապետին, որը իւր երաժշտական հըմտութեամբ, անփոփոխ և միակերպ երգեցողութեամբ, գրեթէ գլուխ և առաջինն է Պօլսոյ մէջ. կամ աջակից ձեզ ունենայիք երաժշտական խաղերին խիստ հմուտ այն համբաւաւոր երգիչները, որոնք կան այժմ թէ Պօլիս և թէ Պօլսից դուրս. ասել կուզեմ, որ կարող էիք վերագառնալ Պօլիս ձայնագրել, ապա էջմիածին տպագրել տալ, բայց այստեղ դուք չէք մեղաւոր. . . . . .

Իսկ գալով այն խնդրին, որ նախ քան ձեր էջմիածին գալը Աբքիրմանէն Պ. Մարկոս Ղուկասեանը հանդուցեալ Ջալալեան Սարգիս եպիսկոպոսի միջոցաւ ուղարկած է եղել Հ. Հայրապետին ձայնագրուած մի պատարագի տետր, որին և դուք ընթռնելով գտել էք բոլորովին ռուսական եղանակներով շարայարուած մի անպիտան բան, և որին քամահելով այս կուզէք հասկացնել թէ, «ռուսական հոտ կուգար միջէն» և որով չափում էք թէ մեր հին եղանակները ևս նոյն են կամ այն պիտի լինին ինչ որ է այդ տետրը, այստեղ ինձ ոչ այլ ինչ խօսք չէ մնում ձեզ ասել, բայց թէ ձեր քմահաճ ենթադրութեան վերայ զարմանալով զարմանալ. ի՞նչ տեղից արդեօք իմացաք որ նորա ռուսական եղանակներ էին, կարելի է թէ Հալէբի եղանակներ էին. միթէ ռուսաստանում մի որևիցէ երգ ձայնագրուելով ռուսական եղանակ պիտի ճանաչէք. Հապա ինչո՞ւ ձեր գրած շարականների մէջ չը կաթեց, չմտաւ ռուսական այդ բազմազեղ շնորհքը. Մարկոս Ղուկասեանի այդ տետրակից դուք կարդացել էք միայն «խորհուրդ խորին» երգը, որի համար ասում էք թէ ռուսական եղանակ էր. պիտի հաստատաք որ ռուսները «խորհուրդ խորին» չունին, որի եղանակին հետևելով թերևս գրած լիներ և պ.

Մարկոս Ղուկասեանը. ուրեմն դուք այդ երգի մէջ զանազանութիւն գտել էք ոչ թէ եղանակը, այլ հեղինակը, որ տարաբաղդաբար ռուսահատանցի է եղել. սրանով ևս հաստատւում է թէ ոչքան խանդակաթափ եր և հոմակիր սիրտ ունէք դէպ ռուսահպատակ տաղանդ ունեցող մարդիկ. Բայց ապ. Ղուկասեանը չեմ կարծում որ այն պարզնկատ և տնափառութիւն սիրող անձերից լինէր, որ իր ճիտութեան չափը չը ճանաչելով գրած լիներ այդ տեսարանը. կը ներէք յարգելի ուսուցիչ, ռուսահատանցիք այդ կողմից շատ խոհեմ են ևս գիտէք։

Պ. Թաշճեան, մեր հին շարականների ձայներին պարսկական եղանակ էլ էիք անուանել որի մասին յիշեցի յօդուածիս սկիզբը. Մեր եղանակների մասին տուած է այս պարսկական անունը ինչպէս ձեր, նոյնպէս եւ շատ տաճկահատանցիք ըներից լսած եմ. և որպէս մի նախատակաց անուն գրեթ գործ էք դնում ոչ թէ իսկապէս եղանակների վերաբերմամբ, այլ մեր ռուսահայերիս. բայց միեթ չը պիտի հասկանաք որ ոչ մեկիս հայրը ոչ պարսիկ է եղել և ոչ պարսկի որդի. ինչ և իցէ. Եւ որպէս զի մի որոշ գաղափար ունենաք մեր հին եղանակների վերայ թէ նոքա պարսկական չեն, թէ նոքա ինչպէս խնամով և անկորուստ պահուած էին մինչև Ս. Գէորգ կաթուղիկոսի Էջմիածին գալը, լսեցէք հետևեալ կարճատօտ պատմութիւնը։

Ինչպէս նկնղնյոյ յարդելի Տէրն լարդ ունեցող ժամանակին մեր յարգելի եպիսկոպոսները և վարդապետները նկնղնյական ամեն մի ծէս և արարողութիւն անվնաս և անկորուստ պահպանելու համար յատկապէս չանք են ունեցել, այսպէս և երաժշտութեան արհեստը անխաւանակ և անխոտոր պահպանելու համար խիստ զգոյշ են եղել Էջմիածինը ամեն ժամանակ հայ մանկտոյ ուսումնատուութեան կեդրոն լինելով, ինչպէս մեծ գիտութիւնը, տաւանել և երաժշտութիւնը յանշխուսած են եղել և նորան ևշիմ և զգաստ պատանին իւր վերայ ոչ այնքան իւր եռանդուն գրչով գործերած է եղել իր ուսուցչի ուշադրութիւնը, որչափ իւր հիանալի ձայնով և անոյշ երգեցողութեամբ։ Կան այժմ հայութեամեայ ծերունիներ, որոնք գեռ ևս սրտաճմլուկ հոգւով յիշում են այն եկեղեցասէր երգիչները, որոնք ժողովրդի համակրանքը վայելելու և նրանից առատապէս պարգևատրվելու յուսով չէին խնայում ամենայն չանք և միջոց երաժշտութիւնը ճիշտ եւ անսխալ սովորելու համար։ Ոչ մի առարկայ զգալի կերպով բարգաւաճելու և ծաղկելու համար այնքան ժրաջան հետևողներ չէ ունեցել, որչափ երաժշտութիւնը։ Մինչև Գ. կաթուղիկոսից սկսած մինչև Մատթէոսի վախճանը, երաժշտութեան պատանդութեան համար մեր վանքերում մանաւանդ էջմիածնում տիրած է եղել օրինաւոր կարգ ու կանոն։ Եւ երաժշտութիւնը ուսանողաց է եղել միշտ զանազան եւ երաժշտական խազերին խոտ հմուտ վարդապետների կամ քահանաների ձեռքով։ իսկ ուսանողներ եղել են առ հասարակ այնպիսի զուարթամիտ

և չափահաս պատանիք, որոնք իրենց քաղցր և գրաւիչ ձայնով գերազանցել են մին քան զմիւսն։ Ձայն չունեցողը դիտմամբ ըրկուած է եղել այս առարկայի գիտութիւնից, և այս այն նպատակաւ, որ երգեցողութեան ժամանակ չը խանգարէ կամ չը խեղաթիւրէ այս կամ այն շարականը իւր կոպիտ և տգեղ ձայնով։ Երկոյ և առաւօտ եկեղեցական բոլոր ժամասացութիւնք մի մի գասապետի առաջնորդութեամբ բերանացի կատարել են միշտ ձայնաւորները՝ եկեղեցւոյ դասի մէջ միշտ առանձին համով կանգնելով բազաձայներից։ Մի որ և իցէ շարական երգելու ժամանակ, բազաձայներին խիստ արգելուած է եղել ձայն հանել. իսկ շարական խառնող կամ շփոթող երգիչը ըրկուած է եղել իւր օրուան մի տնտակ կերակրից։ Ահա այսկերպ առանձին խնամքով պահպանուել է նրաժշտութիւնը Էջմիածնում, և ընդհանրացել ուսատատանում պ. Թաշճեան, որին Հմուտը և աւելի տեղեակը ուսատատանի ամբողջ հայ եկեղեցականների մէջ, այժմ է միմիայն Գեր. Կրիգոր Եպիսկոպոս Յովհաննը. որին մի ժամանակ վանքիս կառավարութիւնը յանձնած էր ինչպէս եկեղեցական պաշտամանց, նոյնպէս և ժամասացութեանց վերայ խիստ հսկելու բոլոր լիազօր իրաւունքը։ Ուրեմն պ. Թաշճեան. Սինօդը այսպիսի մի եղանակ եթէ ձայնագրել տալու լինի, յանցանք պիտի գործած լինի. և ի՞նչն է իւր «հեղինակութենէն բարձր», որ գուք անկշիռ խօսքերով յարձակվում էք Սինօդի վերայ ասելով թէ, «ո՞վ իշխանութիւն տուեր է Սինօդին այդպիսի գործ մը ձեռնամուխ լինելու»։ Սինօդը եթէ իրաւունք ունի Կանոնագրական հարցերի մէջ ձայն բարձրացնելու. եկեղեցական կնճռոտ խնդիրներ լուծելու, մինչ իրաւունք չունի՞ մի շարական ձայնագրել տալու։ Իսկ գալով այն խնդրին, որ մեր եղանակները պարսկական եղանակ են, այդ մասին ես և դու հասկաւ շատ փոքր ենք, որ կարողանանք միաձայն պնդել մեք իսկապէս այդպէս է. միայն այսքան կասեմ որ, ինչպէս շատերից՝ նոյնպէս և Հ. Հայրապետի բերանից լսած եմ որ երաժշտութիւնը սկիզբը տաճկաստանում ընդհանրացել է Սուրբ Էջմիածնի նուիրակների ձեռքով։*) ուրեմն եթէ մեր. եղանակները պարսկական են, մերը՝ մայր, իսկ ձերը՝ զանազան թերութիւններով լի սխալական որդի պիտի հաշուել։ Եւ ինչպէս է եղել որ, նոյն նուիրակների այստեղից տարած եղանակները Պոլսում անկորուստ է պահպանուել, իսկ Էջմիածնում փոփոխութիւն է կրել. այս մասին ապացոյց ունի՞ք, մեք խոսք է որ ասուեմք։ Գոնէ մեր եղանակները ձերի վերաբերութեամբ այն առաւելութիւնն ունին, որ սըրտաշարժ, ներդաշնակ, սահուն և թեթեւ են։

Վերջացնելով յօդուածս ինչպէս շատերի, նոյնպէս և Սրբազան Սինօդի անդամից ուշադրութիւնը գարձնում եմ հետևեալ խնդրի վերայ,

(*) Տես ձայնագրեալ շարականի յառաջաբանի մէջ երես գ։

որ ես ամենայն նեղութիւն յանձն առնելով կը կամենամ գնալ Երընջակ, և որքան կարելի է շուտով ձայնագրել վերոյիշեալ եպիսկոպոսից մեր հին շարականների եղանակները, և այս այն նպատակաւ, որ եթէ տպագրութեամբ լոյս տեսնելու բաղդ չի ունենայ, գոնէ իրրև մի հնութիւն կը պահուի վանքիս մատենադարանի մէջ. ապա թէ ոչ կը գայ մի օր, որ կորցրած կը լինենք մեր հին շարականի ձայները և ի զուր տեղի տուած կը լինենք մեր յաջորդներին մեզ վերայ ծիծաղելու և մեր անհոգութեան համար մեզ իրաւամբ յանդիմանելու և նախատելու։ Ուստի ժամանակաւորապէս վանքիցս հեռանալու լոկ թոյլտուութիւն եմ խնդրում նոյն Սրբազան Սինոդի անդամներից, իսկ պ. Թաշճեանի հետ ունեցած վերջին խօսքս ու խնդիրս այս կը լինի որ, ինչպէս «Հայրենիքի» պ. խմբագիրը, «Թիֆլիզի հայ աշխատակցի» իրեն հաղորդած Սինոդի անդամից հանգուցեալ կաթուղիկոսին և նորա շինած շարականին արհամարհելու սխալ լուրը յանձնել էր պ. Թաշճեանին որ իւր դիտողութիւնն անէր զգուշաբար, որ և արել էր շատ անզգոյշ. պ. Թաշճեանի միջնորդութեամբ Հայրենիքի պ. խմբագրի դիտողութեան յանձնում եմ և ես հետևեալ հարցը թէ, արդեօք Մանկունու Էջմիածին մնալը մեզ օգուտ է, թէ Պօլիս վերադառնալը. որը կարծես ուզելով մոռանալ տալ իւր տանն և վկ տարուայ բարեկական կեանքը և արածները Էջմիածնում և հոգևոր իշխանութեան բոլոր շրջաններում, անվայել իւր կոչման և աստիճանին անհաստատ և սուտ լուրերով և զրպարտութիւններով, կաթուղիկոսի մեռած օրից հետէ չէ դադարում խրդահն և անաղնիւ մարդոց միջոցաւ լրագրութեանց մէջ արատաւորել թէ Էջմիածինը, եւ թէ իւր սիրելի միաբանաց անունը։

ՍԱՀԱԿ ՍԱՐԿԱՒԱԳ.

1883 8 ց–լ–ի
ի Ս–ըբ Էջմ–ծին։

# ԱԶԳԱՅԻՆ.

## ԵՐՈՒՍԱՂԷՄ ԵՒ ԵԳԻՊՏԱՀԱՑՈՑ ՎԻՃԱԿ.

Կ. Պօլսոյ Մասիս լրագրի Մայիսի 9 թերթի մէջ գրուած է հետևեալը.—

«Վսեմ. Սահեթան վիաշա տակաւին պատասխանած չէ Ս. Պատրիարքը Հօր հեռագրին, որոյ վերայ տեղեկութիւն տուինք անցեալ օր. բայց կկարծուի եղեր թէ Ն. Վսեմութիւն պիտի ընդունի ազգային պատուիրակի անուամբ Եգիպտոսի առաջնորդական

պաշտօնը վարելու համար Ն. Սրբազնութեան կողմանէ անձնապէս իրեն եղած առաջարկին»*):

«Այս առթիւ կրնանք յիշեցնել թէ Հոգեւոյս Տ. Ներսէս Աշտարակեցի կաթողիկոսին պաշտօնավարութեան միջոցին Ռուսահայոց քանի մը վիճակներն երկար ժամանակ աշխարհական տեսուչներու ձեռօք կառավարած են, որովհետեւ Ներսէս կաթողիկոս «վստահելի» եկեղեցական չ'ունէր իր հրամանաց ներքեւ»։

Աշխարհական կառավարիչ նշանակելը ոչ թէ «վստահելի» հոգեւորականներ չունենալու համար էր, այլ ուրիշ նպատակաւ, որ այժմ բացատրելու կարիք չկայ եւ շատ շատերին յայտնի է նպատակը: Թէ ինչ անյարմարութիւն ունի աշխարհական անձի առաջնորդական պաշտօն կատարելը, առ այժմ թողում ենք: Յայտնի է որ Եգիպտոսը Երուսաղէմի թեմ էր եւ Երուսաղէմի Ս. Յակոբեայ վանքը մի ընդարձակ կալուածք ունէր Եգիպտոսում: Եգիպտահայոց վիճակը Երուսաղէմայ իրաւասութեան տակից դուրս գալու եւ Կ. Պօլսոյ պատրիարքարանի իրաւասութեան տակ մտնելու պատճառն էր Երուսաղէմի կողմից Եգիպտահայոց առաջնորդ նշանակուած ոմն գերմանիկոսի (Մարաշ) Գաբրիէլ վարդապետի եպիսկոպոսանալու խնդիրը, որին ընդդէմ էր Երուսաղէմայ վարչութիւնը: Գաբրիէլ վարդապետի ջատագովն էր եգիպտոսի խդիվ Մէհմէտ Ալի փաշայի թարգման հայազգի Պօղոս բէյ Եուսուֆեան, որ առնելով խդիվի հաճութիւնը, Գաբրիէլ վարդապետին ուղարկեց Սիս, ուր եւ Գաբրիէլ վարդապետ Երուսաղէմից անկախ եպիսկոպոսացաւ եւ Երուսաղէմի կալուածոց արդիւնքը, որ պէտք է հասցնէր Երուսաղէմին՝ զլացաւ: Այսպէս Երուսաղէմը կորցրեց իր իրաւասութիւնը թէ իր կալուածների եւ թէ իր թեմի վերայ, Երուսաղէմայ վարչութիւնը շատ աշխատեց գոնէ իր կալուածների իրաւունքից չը զրկուել, բայց ապարդիւն: Իսկ այս գործողութիւնը սկսուել է դեռ 1832 թուից:

---

(*) «Կ. Պօլսոյ Ձայն» վերնագրով բաժնի մէջ կըտեսնեն ընթերցողք որ խառն ժողովը որոշել է Սահեան փաշային ճանաչել ազգային պատուիրակ առժամանակեայ կերպով ազգային գործերի վերայ հսկելու և առաջնորդական ընդունելութիւն կատարելու։ Ե. Վ.

Այժմ մինչեւ Երուսաղէմը ահագին պարտքի տակ ընկնելուց յետոյ վանականները մանաւանդ եպիսկոպոսներն ու նշանաւոր վարդապետները զանազան չնչին պատճառներով հակառակ վանական առաքինութեան հեռանալումն Երուսաղէմից, հասատա համոզուած լինելով որ, մի մի ընդարձակ վիճակների առաջնորդ կը դառնան եւ եպիսկոպոսութեան աստիճանին կ՚արժանանան, ինչպէս եւ լինում էր,—լաւ չէր լինել որ Պօլսոյ Պատրիարքարանը եւ ազգային ժողովը Եգիպտոսը Երուսաղէմայ կաթուածներով վերադարձնէին Երուսաղէմին, որ կը կառավարէր իւր թեմը իւր եպիսկոպոսների ու վարդապետների ձեռքով. եւ ատանալով իւր կալուածների եկամուտը ազգի վերայ այլ եւս չէր ծանրանայ. Պատրուգ բարձման յանձնաժողովը Երուսաղէմի քարոզուած պարտքը վճարելու համար միակ ելք ընդունելով ուրիշ նոր յաւելցումները չէր պարտաւորուիլ անհրաժեշտ համարելու, առանց նորան եւս ժողովրդեան գժուար կացութիւնը անտանելի դարձնելու պատճառ դառնալով։

Այսպիսով Երուսաղէմայ վանքը իւր արդար իրաւունքի տէր կը դառնար, հայ ժողովուրդը կազատուէր մի նորահնար ծանր քեռից. իսկ Երուսաղէմը իւր թեմը կառավարելու համար կը նշանակէր մի վարդապետ կամ եպիսկոպոս, որի կոչման հետ իրրեւ հոգեւորականի մի քանի առանձնաշնորհութիւններ եւ աւանդական առաւելութիւններ կապուած են. մինչդեռ բժ. Ստեփան փաշա իրրեւ աշխարհական եւ յատկապէս իրրեւ աստիճանաւոր Տաճկ. տէրութեան՝ մի քանի անյարմարութեանց ենթակայ է։ Տաճկահայոց անհրաժեշտ է եկեղեցւոյ եւ եկեղեցականութեան նուիրականութեան հետ անձեռնմխելի պահել մի քանի առանձնաշնորհութիւնները, որոնք մատչելի կը լինին՝ եթէ յանձնուին աշխարհականի, մանաւանդ մի տաճկական աստիճանաւորի։ Դեռ կարելի էր մի կերպով ներելի համարել գործը, եթէ առ ի չը գոյէ հոգեւորական անձին, Եգիպտահայք իրանց միջից մէկին ընտրէին՝ իրանց հոգեւոր ազգային գործերին առժամանակեայ վերահասութիւն գործելու համար։

Խօսելով Երուսաղէմայ վանքի եւ Ստեփան փաշայի վերայ, լ դէպ հարկ է յիշել, որ երկու տարի առաջ, երբ Ստեփան փաշա Տաճկաց կառավարութեան կողմից նշանակուած էր գնալ Սիրիա, Պատրիարքարանը յանձնարարեց նորան Երուսաղէմի գործերի

վերայ ուշադրութիւն դարձնել, տեղեկագրելով թէ ինչպէս է այդ ահագին պարտքը գոյացեր, ինչպէս պէտք է այդ ահագին պարտքը վճարել, ինչպէս կարելի է Երուսաղէմի գործերը կարգի գնել: Բայց մինչեւ այսօր մեզ — Ռուսահայոց յայտնի չեղաւ թէ Սահեման փաշային հետաքննութիւնը ինչ եզրակացութիւն յառաջ բերեց: Պարտքի խմբագրութիւնը իրան չի ներում կարծել թէ, այդ անօրինութիւնը յատկապէս նորա համար էր, որ Սահման փաշայի դէմ Սիրիա երթը նկատուելով որպէս մի տգգայնի պաշտօնական գործի կատարման յանձնարարութիւն՝ Նորին Վսեմութեան յատկացուեր դրամական օժանդակութիւն կամ Երուսաղէմայ համ այլ արդիւնքից: Պարտքի խմբագրութիւնը յանդգնեք է համարում այդ տեսակ ենթադրութիւն, որովհետեւ յիշեալ փաշան կառավարութեան որոշմամբ գնալով Սիրիա՝ ի հարկէ կառավարութիւնից էլ պէտք է ստանար իւր ճանապարհածախքը եւ ամենայնը: Եթէ Սահման փաշային տգգայնի պատուիրակի անուամբ պէտք է յանձնուի Եգիպտահայոց առաջնորդութեան իրաւունքը դրամական օժանդակութիւն ստանալու համար միայն՝ այդ կը լինի մի շատ անհաւատ գործ, եւ թերեւս վիրաւորական Նորին Վսեմութեան համար: Ամեն պէս նա իւր տակաւին աշխատութեամբ փաշայական բարձր աստիճանին հասած լինելով՝ կարող է իւր ապրուստը հայթայթել առանց իւր կոչմանը անյարմար պաշտօնների ակնկալութիւն ունենալու: Իսկ եթէ Սահման փաշային յանձնուի եգիպտահայոց առաջնորդութիւնը առ ի չգոյէ հոգեւորական անձին՝ այն ժամանակ թող Երուսաղէմայ միաբան եպիսկոպոսներից մինը նշանակուի եգիպտահայոց առաջնորդ ընդ իրաւասութեամբ Երուսաղէմայ պատրիարքութեան: Իսկ Երուսաղէմայ միաբան եպիսկոպոսներ շատ կան՝ որոնք զանազան տեղեր առաջնորդութիւն են առնում: Բայց մենք դառնանք դէպի Երուսաղէմի «պարտուց բարձման» խնդիրը, որ ահա երկար ժամանակ է գոյութիւն ունի եւ Ռուսահայոց էլ է վերաբերում նախ՝ որ Երուսաղէմը իբրեւ Փրկչի անօրինական տեղիք՝ նուիրականութիւն է ամեն մի քրիստոնէի համար. երկրորդ՝ Ռուսահայքս ըստ մերոլ-ոանն կարեւոր չենք ղ այլ մեր նկատական եւ բարոյական պարտաւորութիւնները կատարել դէպի Երուսաղէմայ Ս. Յակոբեայ վանքը, քանի որ հասկանալով որ Երուսաղէմում՝ եկած

նուիրական տեղերը մի շատ կարեւոր ազգային հաստատութիւն են: Երուսաղէմայ վանքը իբրեւ մի ազգային հաստատութիւն արժանի է որ ազգը գիտենար նորա ներկայ դրութեան հանգամանաց մանրամասնութիւնը, որքան եւ հնար է:

Երուսաղէմայ պարտուց բարձման համար Երուսաղէմայ միաբան երեմիա եպիսկոպոսն երկու անգամ նուիրակութեամբ եկաւ Ռուսաստան, յայտնի չէ թէ այդ նուիրակութեան հետեւանքը ինչ եղաւ եւ գոյացած դրամների քանակութիւնը որքան եղաւ, եւ ինչ բանի գործադրուեց: Հենց այժմ Երուսաղէմի երկու վանականներ Ռուսաստանում նուիրակութիւն են անում, Երուսաղէմայ Գեր. Պատրիարքը Պօլսում է աշխատում, պարտուց բարձման յանձնաժողովը իւր գործն է շարունակում. սակայն այդ բոլոր ջանքերը ինչ հետեւանք ունեցան, դեռ յայտնի չէ:

Կ. Պօլսոյ մամուլը, որ սովոր է անտեղի նկարագրութիւններով եւ զրպարտիչ յօդուածներով լցնել իւր էջերը, բոլորովին լռում է այդ կարեւոր խնդիրների մասին, նոյնը անում են եւ Ռուսահայոց մամլի Կ. Պօլսոյ թղթակիցները՝ աւելի կարեւորութիւն տալով պարահանդէսներին, անհամ բանակռիւների եւ ըմբշամարտութեանց նկարագրութեան, քան այնպիսի կենսական խնդիրների՝ որոնք յօդուածծ են եւ սակայն թաքնութեան մէջ են ընթացք գործում. իսկ յայտնութիւնը լինում է միայն դրամոյ պահանջմամբ:

Հետաքրքիր է գիտենալ պատճառը թէ ինչու՞ Երուսաղէմայ վանականները երբ մի փոքր դիմադրութիւն են ստանում անմիջապէս հեռանում են Երուսաղէմայ իրաւասութեան տակից: Հայոց վանական սովորութիւնն է որ վանականները մինչեւ մահ պէտք է նոյն վանքի վարչութեան իրաւասութեան տակ մնան, որի վանականն են. պարզ խօսելով՝ վանքերը պէտք է իրանց վանականների համար՝ նոյա տունը համարուէին: Այդ սովորութեամբ Հայոց վանքերը ամենագառն եւ կործանիչ ժամանակներին՝ դիմացել են բիւրաւոր արկածներին եւ իրանց գոյութիւնը պահել են: Իսկ այժմ մինչ ամենայն կողմից անգործութիւն է, եւ պէտք է ասել որ վանքերն էլ ունին իրանց եկամուտները եթէ ոչ աւելի՝ գոնէ ոչ պակաս, հենց այս բարեյաջող հանգամանաց մէջ՝ վանքերին վաանգ է սպառնում. սորա պատճառը այն է, որ վանա-

կանը կապուած չը լինելով իւր վանքի հետ, վանքը իրան տուն չէ համարում, եւ՝ հետեւաբար վոխանակ վանքի վերայ մոածելու ու հոգալու՝ վանականները մոածումեն միայն իրանց անձին վերայ:

Այժմ չը կայ մի նշանաւոր վանք՝ ուր Երուսաղէմի մի վանական չը լինէր, եւ այն եւս՝ համեմատաբար աւելի բանագէտը: Տաճկահայոց շատ թեմերի առաջնորդները Երուսաղէմայ վանականներն են: Արդեօք արդարութիւն է, որ դոքա Երուսաղէմայ վանքի յաջողութեան ժամանակ նորա բարիքը վայելելով յօրանան, իսկ այժմ նորա ձախորդութեան ժամանակ չը կամենան մատակարել այն թշուառ կացութեանը, որին ենթակայ է Երուսաղէմ: Արդարութիւն է որ դոքա խնայեն իրանց օգնութիւնը այն տանը, որի շնորհիւ դիրք են ոտացել: Երուսաղէմայ պարտուց բարձման յանձնաժողովը արդեօք այս հանգամանքի վերայ ուշ դարձնում է:

Երուսաղէմի վանականները մոհուամբ չափ պնդումէին որ դրսեցի չը լինի Երուսաղէմի պատրիարքը, եւ իրաւունք ունէին: Ժամանակ չէ արդեօք պնդել որ Երուսաղէմայ միաբաններն էլ իրաւունք չունենան Երուսաղէմի պատրիարքութեան իրաւասութիւնից դուրս ճանաչուելու եւ պաշտօն կատարելու: Ժամանակ չէ արդեօք որ Երուսաղէմի յաջողութեանը եւ հարստութեանը հաղորդ գանուող միաբանները հաղորդ գտնուէին նաեւ նորա ձախորդութեանն ու աղքատութեանը:

Ժամանակ չէ արդեօք հետաքրքիր լինել իմանալու թէ ինչո՞ւ են հեռանում այդ վանականները. կամ Երուսաղէմի Վարչութիւնը ինչո՞ւ է հեռացնում եւ ի՞նչ իրաւունքով. արդեօք միշտ մեղապարտ հեռացողներն են թէ հեռացնողներն էլ մեղադրուելու տեղիք ունին:

Ամփոփելով մեր խորհրդածութիւնը, կը ցանկայինք որ Կ. Պոլսոյ պատրիարքարանը լուրջ ուշադրութիւն դարձնէր Երուսաղէմայ գործերի վերայ. վանականութեան վերաբերութեամբ նախնեաց նուիրական սոլորութիւններն ու աւանդութիւնները, որոնք հետեւութիւն են դարաւոր ժամանակայ հաղարաւոր փորձառութեան՝ հաստատուն պահուէին, պարտաւորիչ խրատութեամբ հետեւելով՝ որ վանականները չնչին պատճառներով չը թողնէին իրանց կրօնաւորութեան վանքերը: Այս տեսակէտով

թեամբ իւրաքանչիւր վանական կը կապուէր իւր վանքի հետ եւ նախանձախնդրութեամբ կը հետեւէր իւր վանքի պայծառութեանը: Ա յսպիսով ազգը կազատուէր ականատես, նշաւակ եւ ենթակայ լինելու թափառական վանականների անվայել գործողութեանց, վանականների՝ որոնք անսահման ազատութեամբ ել եւ մուտ գործելով ամեն տեղ՝ ի գայթակղութիւն ժողովրդեան՝ հանդիսադիր են լինում զանազան անտեղութեանց:

Կը ցանկայինք որ Կ. Պօլսոյ լրագրութիւնը վոխանակ զրպարտչի դերը ստանձնելու՝ խաղալիք դառնալով անամօթ զրպարտիչներին, աւելի եւս լուրջ դիրութիւն ստանար, գործի վերայ նայէր մարգուվայել Հայեացքով:

Կը ցանկայինք որ Կ. Պօլսոյ Ռուսահայոց մամուլի թղթակիցները վոխանակ զանազան հանդէսների նկարագրութեամբ զբաղեցնելու ընթերցողներին, նրանք տային տեղւոյն գործերը գիտենալու եւ հետեւելու—մանաւանդ այն գործողութեանց՝ որոնք ընդհանուր մտանակցութիւն են պահանջում՝—որպիսի են Միացեալ ընկերութեանց, երուսաղէմայ եւայլն գործերը:

Կը ցանկայինք որ Պօլսոյ Պատրիարքարանը վերահսկողի պաշտօնը ստանձնած լինելով հետեւէր բոլոր գործողութեանց, կանոն եւ ուղեցոյց ունենալով հշմարտութիւնը, արդարութիւնը եւ եկեղեցական ազգային աւանդութիւններն ու սովորութիւնները:

ՅՈՒՍԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ

---

## Կ. ՊՕԼՍՈՑ ՉԱՑՆ

Ա. Երեկ, (11-ն Մայիսի) Վարչութեան Քաղաքական և Խառն ժողովները գումարեցան ի Պատրիարքարան ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր,

Խառն ժողովը, նկատելով որ Գահիրէի Ազգային Վարչութեան մէջ տիրած շփոթութեանց և դատական գրաւմանց պատճառաւ եկեմտից խանգարում յառաջ եկած է, և դատական նոր արգելքներ ազգային հաստութից վերջին աղբիւրները ցամքեցուցած են, եկեղեցին քայքայման եւ վարժարանը փակման վիճակի ենթարկուած են—Վսեմ. Ստեփան փաշան, որ ի Գահիրէ է, պատուիրակ կարգեց և անոր պաշտօն յանձնեց փոխանորգարար բարեկարգել Եգիպտոսի Ազգային Վարչութիւնը, պարտուց և գրաւման խնդիրները կարգադրել, ըստ ազգային օրինաց՝ վարչական մարմին մը հաստատել, թէ Գահիրէի և թէ Ալէք-

*սանդրիոյ եկեղեցեաց մատակարարութիւնն և ազգային ներքին գործոց տնտեսութիւնն ազգային օրինաց շրջանին մէջ սահմանափակել, և առաջնորդական ընտրութիւն կատարել տալ։ Սոյն պաշտօն հեռագրաւ ծանուցուեցաւ անմիջապէս Վսեմ. Սահիան փաշային, որ անձնուիրաբար ստանձնեց զայն, առանց փոխարինութեան, և Ազգային Կեդրոնական Վարչութիւնն որոշեց ամեն դիւրութիւն ընծայել Վսեմ. պատուիրակին իւր կարևոր պաշտօնին յաջողման համար։ Միանգամայն Խրտիվական կառավարութեան պիտի դրուի խնդրելու համար որ իւր կողմէ ճանչէ և հնար եղածին չափ դիւրացնէ Վսեմ. Սահիան փաշայի պաշտօնը։*

*Բ (Մայիսի 18) Քաղաքական ժողովը գումարեցաւ ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, և ատենապետութեամբ Վսեմ. Սիմոն պէյի, հետևեալ տնօրինութիւններն ըրաւ։*

*1։ Քաղաքապետութիւնը կը պահանջէր որ Մխիթարները ժողովրդէն ընտրուելով Քաղաքապետութեան ներկայացուին ի վաւերացումն։ Քաղաքական ժողովը նկատելով որ Քաղաքապետութեան այս պահանջումն հնաւանդ սովորութեան դէմ է, որուն համեմատ Մխիթարները միևչեւ ցարգ Թաղ. խորհրդոց կողմէ կընտրուին և անոր պատասխանատու են, — որոշեց հին սովորութիւնն անփոփոխ պահելու համար հարկ եղած միջոցներն ի գործ դնել։*

*2։ Տիվրիկի թէ Թուրք և թէ Հայ հասարակութիւնք գանգատած լինելով թէ տեղական կառավարութիւնը զոյգ մը եզի համար 21 օխա ցորեն կը պահանջէ ի նպաստ տեղւոյն կրթական հաստատութեանց, Քաղաքական ժողովը նկատողութեան առաւ զայս խնդիր, և որոշեց քննութիւն մը կատարել տեղւոյն վրայ և ստուգել թէ հաւաքուած դրամն ինչ կերպիւ պիտի գործածուի, ինչպէս պիտի բաշխուի և իւրաքանչիւր ազգի բաժինը պիտի յանձնուի՞ իւր Ազգ. վարչութեան։ Այս կէտերու նկատմամբ տեղեկութիւն ստանալէ յետոյ, ժողովը տնօրինութիւն մը պիտի ընէ։*

*3։ Կեդրոնական տնտուկի անձուկ վիճակին, ելմտացոյցի հաւասարակշռման եւ անվճար տրոց հաւաքման նկատմամբ ժողովը խորհրդակցեցաւ Տնտեսական խորհրդոյ ատենապետ Սեթեան Միհրան էֆէնտիի հետ, և ընդարձակագոյն տեղեկութիւններ ստանալու և ըստ այնմ տնօրէնութիւն մ՚ընելու համար, — որոշեց յառաջիկայ նստին ի խորհրդակցութիւն հրաւիրել Տնտեսական խորհրդոյ բոլոր անդամները։*

*4։ Քաղ. ժողովը Բ. Դրան դիմելու կարօտ քանի մը յարաբերական խնդիրներով ալ զբաղեցաւ։*

*5։ Պոյաճի գիւղի Թաղ. խորհրդին սահմանադրական ընտրութեան դէմ գանգատներ եղած և Թաղեցւոց միջեւ դժտութիւն ծագած լինելով, Քաղ. ժողովը նոյն Թաղին համար առժամանակեայ Թաղ. խոր-*

*Հուրդ մը կարգեց, որդ անդամ նշանակեցան նոյն անձինք, որք արդէն Թաղ. խորհրդոյ անդամ ընտրուած էին։*

—

*Գ. Կրօնական ժողովն (Մայիսի 18) գումարեցաւ և հետևեալ տնօրէնութիւններն ըրաւ.*

*1. Հայ Եկեղեցականաց Միաբանութեան Կանոնագիրը Կրնական ժողովը վաւերացման ներկայացուած լինելով, Ս. Պատրիարք Հայրն ինչ ինչ դիտողութիւններ ըրաւ, եւ որոշուեցաւ յիշեալ Կանոնագիրը Ս. Պատրիարք Հօր դիտողութեամբք հանդերձ ետ յղել առ առենապետն Համագումար ժողովոյ։*

*2. Ի դաս Հայ եկեղեցականաց ընդունուելու համար՝ Հ. Սուքիաս Պարոնեան Հռոմէական վարդապետի խնդիրն ընդունուեցաւ։*

*3. Համագումար ժողովոյ պատրաստած ծրագիրն, որ Կրօնական ժողովոյ իրաւասութեան սահմանը կը գծէր, Ս. Պատրիարք Հօր դիտողութեամբք հանդերձ Համագումար ժողովին վերադարձնել որոշուեցաւ։*

—

*Կաթողիկոսական լիազօր Ծանձնաժողովոյ կողմէ կարգեալ մասնախումբն իւր նախընթաց աւուր նստին մէջ, որ Ղալաթիոյ խորհրդարանը գումարեցաւ, բաւական յառաջ տարաւ իրեն յանձնուած աշխատութիւնը։*

—

*Տնտես. խորհուրդն ալ նիստ ըրաւ Մայիսի 18 և Կեդրոնական տնտուկի հաշիւները սահմանադրական տարեգլխի առթիւ փակելով, հաշուետուարաց մանրամասնութիւնը քննելու համար մասնախումբ մը կարգեց որդ անդամ են. —*

*Ցակոբ էֆ. Սվաճեան, Ցակոբ էֆ. Արշակ, Մ֊իհրան էֆ. Զօպանեան. Նշան էֆ. Պօյաճեան, Ղազար էֆ. Հովսեանն։*

*Նոյնպէս Տնտես. խորհուրդը Քաղաքական ժողովոյ կողմանէ իրեն յանձնուած Սամսթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ շինութեան խնդիրը ուսումնասիրեց, սակայն վերջնական տնօրէնութիւնը յառաջիկայ նստին թողուց։*

—

*Բարերդի նախկին առաջնորդ Ռուբինեան Գէր. Ամբրոսիոս վարդապետ Մայիսի 18 ին մայրաքաղաքս հասաւ։*

—

*Յաւելով կը յանուցանենք թէ Վսեմ. Տօքթ. Սերվիչէն էֆէնտի, Վսեմ Սահակ Ապրօ էֆէնտի, և Մեծ. Կիւմիւշկէրտան Տիգրան էֆէնտի Ունճեան, Արիկ էֆէնտի և Շամտանճեան Դրիդոր էֆէնտի հրաժարագիր ղրկած են յԵրեսփոխանութենէ։*

—

*Պալատու Թաղէն Աղգ. Երեսփոխան ընտրուեցաւ Խասգիւղի նախկին Երեսփոխան Թադէոսեան Ռէթէոս էֆէնտի (Մասիս)։*

# ՀԱՅԼԵՒ ՀԱՅԼՔ։

—

Մեծ. Պարոն դոկտոր Մ. Բ. Իւթիւճեան անցեալ 1882 թուի Յուլիս ամսից սկսած պարբերաբար իւրաքանչիւր ամիս հրատարակում է «Մատենագարան ժողովրդեան» վերնագրով առողջապահական գրքոյկը, որ իւր բովանդակութեամբ և դիւրահասկանալի ոճով մեծ բաւականութիւն է պատճառում ընթերցողներին։

Ցանկալի էր որ հայ հասարակութիւնը ուշ դարձներ յիշեալ հրատարակութեան վերայ և այդ օգտաւէտ ձեռնարկութեան յաջողութեան համար ըստ իւրովհասն կարեաց նպաստեր՝ բաժանորդ գրուելով։ Հրատարակութեան պայմանները կը հրատարակենք յայտարարութիւնների կարգում։ Յանկացողները կարող են դիմել կամ ուղղակի հեղինակին կամ խմբագրութեանս, որ ժամանակաւորապէս յանձն է առնում յիշեալ հրատարակութեան գործակալութիւնը Ս. Էջմիածնում և Վաղարշապատում։

***

Շնորհակալութեամբ ստացանք Մեծ. Պ. Գրիգոր Խալաթեանի «Ղազար Փարպեցի և գործք նորին, պատմական և գրական քննութիւն» վերնագրով հրատարակութիւնը։ Տիպը և թուղթը ընտիր են, յանձնարարութիւնները գրուած են գրաբար լեզուով և այնպիսի ոճով՝ որ յատուկ է Մոսկվայի բանասէրներին։ Գրքի գինն է 1 րուբլի 50 կոպէկ (կամ 5 ֆրանկ)։ Հրատարակչի հասցէն է Москва, Армянскій переул. домъ Грачева.

Երիտասարդ հրատարակչին յաջողութիւն և աւելի փայլուն ապագայ ենք ցանկանում հայ գրական աստղարիզում։

***

Խմբագրին հասցնելու համար ուղարկուած գրքոյկը «Կաթուղիկոսի ընտրութիւնը, խորհրդածութիւն և բաղձանք մի քահանայի» շնորհակալութեամբ ստացանք։ Դիրքը տպուած է Մոսկվայում. գինն է 25 կ. Թուղթը և տիպը ընտիր են, սակայն տպագրութիւնը լի է տպագրական սխալներով։ Այդ տեսակ սխալները մեծ չափութիւն են առաջացնում մանաւանդ պատմական գրուածոց ժամանակագրութեանց մէջ։

Դիրքը բաժանուած է եօթն գլուխ։ Եկեղեցու վիճակի վերայ ընդհանրապէս խօսելով՝ Արժ. հեղինակը իւր երկը վերջացրել է վերնագրին պատշաճեալ խորհրդածութեամբ։ Բացի եօթն գլուխներից, կայ և մի յաւելուած, վերաբերեալ Երուսաղէմայ ու Կ. Պօլսոյ Պատրիարքների, Սսոյ և Աղթամարի մասնաւոր կաթուղիկոսութեանց ու բոլոր գաւառակարգերի պարտականութեան՝ և Ս. Էջմիածնի ընդհանրական կաթուղիկոսի հետ ունենալիք յարաբերութեանը։

Տար Աստուած որ հեղինակի բաղձանքը կատարուէր, և Լուսաւորչի Աթոռը գահակալելու համար ընտրուելիք անձը կարողանար արդարացընել այն բոլոր բարի բաղձանքները, որ ամեն հայ ունի և սպասում հասնել իւր հօտապետի արդարասէր, ժողովրդասէր, եկեղեցասէր, ժիր և գործունեայ բնաւորութեամբ։

***

Ստացուած լինելով Ղզլարու փոխանորդ Արժ. Ադամ վարդապետի յանուն Սինոդի Մայիսի 10 ին № 16 յայտարարութեամբ ի նպաստ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի Պ. Յովհաննէս Եսայեանցի ի յիշատակ իւր Հանգուցեալ Մարգարիտ կնոջ նուիրած մի հարիւր րուբլի,— Ս. Սինոդը իւր № 2281 հրամանաւ պատուիրում է հրատարակել ի դիտութիւն։

Կատարելով Ս. Սինոդի պատուէրը, խմբագրութիւնս բարեմաղթում է հանգիստ և երկնից Ս. արքայութիւն հանգուցեալ տիկնոջ. իսկ նորա սգազգաց առն՝ Ս. Հոգւով մխիթարութիւն և բաղդաւորութիւն։

***

Աստրախանայ Մելքիսեդեկ քահանայ Քալանթարեանցը հաղորդում է խմբագրութեանս որ յօգուտ Ս. Էջմիածնի Հոգ. Ճեմարանի հաւաքած լինելով 60 րուբլի հետևեալ անձիքներից, Յունիսի 20 ին ուղարկել է Ս. Սինոդին։

Նուիրատու պարոններն են

| | |
|---|---|
| Նորին գերազանցութիւն Մկրտում Դանիէլեան | 25 րուբլի. |
| Աստիճանաւոր Դանիէլ Մկրտումեան Սարգսեանց | 25 րուբլի. |
| Աստիճանաւոր Գրիգոր Մկրտումեան Սարգսեանց | 10 րուբլի. |

Խմբագրութիւնս հրատարակելով ի միամտութիւն նուիրատու պարոններին,—Ս. Էջմիածնի վարչութեան կողմից յայտնում է հիշել բարեսէր պարոններին իւր խորին շնորհակալութիւնը։

***

Պատահաբար գտնուելով Իգդիրում, բաղդ ունեցայ տեսնել Իգդիրմաւայի ծխատէր հանգուցեալ Սարգիս աւագ քահանայ Մանուկեանի կըտակը, որ ի միջի այլոց Իգդիրու երկսեռ հոգևոր դպրոցներին կըտակել է մի բաւական ընդարձակ գետին՝ շրջապատած բարդի ծառերով. այդ ընդարձակ գետնի եկամուտը մօտաւորապէս տարին 200 րուբլի կարելի է հաշուել։ Կտակի՝ դպրոցներին պատկանեալ յօգուտածն է հետևեալը. «Է. իմ սեպհական այգիների տասն մոմարից բաղկացեալ մեծ կտորը, որ գտնվում Արհայջի և Իգդիրմաւու գիւղերի առուակների միջոցում, և նա ունի մանաւոր պարիսպ և հաղարի չափ միջում տնկված բարդի մեծացած ծառեր արժողութեամբ 300 րուբլուց, և այդ հողնուվամբ մշտնջենաւոր յիշատակ հոգւոյ իմոյ Իգդիրի երկսեռ դպրոցաց, որոյ արդիւնքով Իգդիրմաւայից տասն որդեգիր ուսանողք աղքատ դասակարգից ձրի ուսանին։

Ա յս կտակը հաստատուած է Երևանայ Նահանգական դատարանում 8-ն ներկայ Յուլիսի տարւոյս։

Հանգիստ և երկնից սուրբ արքայութիւն ենք բարեմաղթում յիշեալ Հանգուցեալ քահանային, որ իւր ունեցածից չէ խնայել բաժին հանել ազգի աղքատիկ զաւակաց, յատկապէս ընտրելով իւր ծխականները իւր արած բարեացը հաղորդ գտնուելու։

***

Որչափ մեղ ուրիթ եղաւ պատահել Սուրմալուի և Սարդարապատի գաւառականների եկեղեցիներում, նկատելի է ընդհանուր անմաքրութիւն և անբարեկարգութիւն։ Եկեղեցական զգեստներն ու անօթները բեմի վերայ կամ սեղանի ետևը վայր ի վերոյ թափուած են. անհարազատ ձեռքեր յաճախ շօշափում են այդ գոյքերը յօգուտ անձին և ի վնաս եկեղեցու։ Գործակալների ուշադրութիւնն ենք հրաւիրում այս հանգամանքի վերայ, յայտնելով միանգամայն որ, հոգ տանէին իւրաքանչիւր եկեղեցու զարդ և անօթեղէնքը մի քանի պատուաւոր կամ հասարակութիւնից ընտրուած անձանց ներկայութեամբ վերատուգել արձանագրութեան ժապաւինեալ մատենի հետ, այդ զարդերից ու անօթներից սովորական գործածելիքը ցուցակաւ յանձնելով տեղւոյն քահանային կամ ում որ պատշաճ կըդատուի, մնացեալները զետեղէին սնդուկների կամ պահարանների մէջ, բանալին յանձնէին Երեսփոխին՝ իբրև հասարակութիւնից ընտրուած երաշխաւորեալ անձին. իսկ այդ սնդուկները կամ պահարանները եկեղեցու աւանդատանը պահէին՝ կամ մի այլ յարմար տեղ. բայց ոչ բնաւ բեմի վերայ կամ սեղանի ետևը։ Սովորական զարդ և անօթեղէնքը նոյնպէս պէտք է աւանդատանը (խորան) պահել։

***

Ահա երկու տարի է, որ Սուրմալուի հասարակութիւնը տագնապի մէջ է մի գիշակեր գազանի երեսից, որ գիշերով յափշտակումէ երեխաներ և գիշատում։ Գիշատուածների մէջ պատահել են նաև 10—12 տարեկաններ էլ։ Երկիւղը մանաւանդ լոյսնեակ չեղած գիշերներին է. ծաղովուրդը ի միջի այլ և այլ զգուշութեանց, կտուրներին անկել է մարդաձև հագցրած կեղծիք գազանին վախացնելու համար։ Զրոյցները այդ մասին անհամար և բազմատեսակ են, կարծուժեն որ գիշակեր կենդանին բորենի լինի։

***

Հանգուցեալ Տ. Գէորգ Դ. կաթուղիկոսի մահից յետոյ Ե. Պօլսոյ մամուլը զբաղուել է միայն Ս. Էջմիածնի միաբանական ուխտիս անդամից մասին այն տեսակ լուրեր հրատարակելով, որոնք թէ հրատարակողին և թէ թելադրողին ամօթ են վերաբերում։

Տ. Գէորգ Դ. վախճանելով միթէ պէտք է կարծել որ Էջմիածնում մեռաւ և բոլոր մարդավայել վարմանց նախանձախնդրութիւնը. միթէ պէտք է կարծել՝ որ Էջմիածնի միաբանութիւնը այնքան ստոր աստիճա-

նի մէջ է, որ չի կարողանում իւր պատիւը պահպանելու համար հոգալ և մտածել. ենթադրենք թէ առանց խղճահարուելու կարելի է ամենայն անամօթ ցոփաբանութիւն ստեղծել և հրատարակել հոգևորականութեան վերաբերութեամբ. բայց չէ՞ որ այդ հոգևորականութիւն կազմողները մարդիկ են, և աշխարհիս երեսին չը կայ մի մարդ՝ որ պատուոյ զգացում չունենայ. Վեր առնել և մի ամբողջ միաբանութեան մարդկային պատուոյ հետ խաղալ, եթէ ոչ աւելի՝ կատարեալ անխղճութիւն է։

Գեր. Տ. Վահրամ սրբազան եպիսկոպոս Մանկունի Արձագանքի 16 համարում տպած իւր նամակը վերջացնում է հետևեալ խօսքերով. «Իսկ եթէ ձեր յիշած գրութիւնքը գրողը պ. Թիւլպէնտճեանցն է՝ թէ այլը, ինձ գիտենալոյ պէտք չը կայ, մանաւանդ ո՛ր մէկը փնդռես և գտնես՝ երբ ներկայումս հաղիւ ստորագրութիւնը դնել գիտցող պատանեակն անգամ յօդուածագիր, դիտողագիր, հայհոյագիր և այլն դարձած է և ամեն տեղ կը գտնուի մանաւանդ աստ Ս. Էջմիածնում և գիւղում»։ Մենք մեզ չենք ներում հաւատալ թէ վերոյիշեալ տողերը գրող Գեր. Վահրամ եպիսկոպոսը լինի թելադրողը յիշեալ անամօթ ցոփութեանց թղթակցութեամբ կամ առանձին նամակներով՝ միջնորդների միջոցաւ, որովհետև մենք կաթուղիկոսի խորհրդական քարտուղարից աւելի բանականութիւն և մարդավարութիւն էինք և ենք սպասում. մանաւանդ այն հանգամանքն ևս աչքի առաջ ունենալով՝ որ զրպարտեալները մեծ մասամբ Հանգուցեալ Կաթուղիկոսի օրով և Վահրամ եպիսկոպոսի խորհրդով են դիրք և բարձր պաշտօն ստացել. ի հարկէ Հանգուցեալ Կաթուղիկոսը և Վահրամ սրբազանը ճանաչումէին դոցա։

Ցիշեալ անամօթ զրպարտութիւնները Կ. Պօլսոյ մամուլի մէջ եթէ դեռ շարունակուեն՝ այն ժամանակ խմբագրութիւնս պարտք անձին կը համարի պատճառները փնդռելու համար Ս. Էջմիածնի գործողութեանց վերջին 16 ամեակի գործերը թերթել։

Էջմիածնի միաբանութիւնը գիտէ յարգել իւր Հայրապետի յիշատակը և չը նայելով որ ահագին տարաձայնութիւններ եղան Հանգուցեալ Տ. Գէորգ Դ. կաթուղիկոսի անձնական գանձանակի գատարկ լինելուն պատճառով. սակայն և Էջմիածնի վարչութիւնը պատուելով իւր Հայրապետի յիշատակը, չը կամենալով Նորին Օծութեան քրոջը մուրացիկ դրութեան մէջ թողնել. բարեհաճեց տալ նորան Հանգուցեալ Հայրապետի դրամական գոյից այն վերջին մնացորդը՝ որ որպէս թէ Հանգուցեալ Հայրապետը բերանացի կտակած է եղել իւր քրոջը։—Ցայտնի է որ յիշեալ տիկինը ոչ մի իրաւունք չուներ ստանալու այդ դրամը, ոչ եկեղեցական և ոչ տերութենական օրէնքներով՝ որ սահմանել է կուսակրօն հոգևորականաց գոյքը թողուլ ի ժառանգութիւն այն վանքերի՝ որոնց կրօնաւոր են, եթէ հոգևորականք նախապէս մի որ և է բարեգործական հաստատութեան անունով կտակ չեն արել. սակայն Էջմիածնի վարչութիւնը յարգելով իւր Հայրապետի յիշատակը մարդասիրական զգաց-

մամբ կամեցաւ տիրոջել իւր Հայրապետի քրոջը· իսկ այդ քոյրը հակառակ մարդկային ղգացման օրինաց, և ոչ մի «Հոգւոյ», ասել տուեց իւր եղբօր գերեզմանի վերայ· Այս ամենը լինելուց յետոյ, դեռ կան մարդիկ, որոնք երես ունին խօսելու, և այն էլ իրանցից շատ և շատ բարեմասնութեամբ գերազանց մարդկանց վերայ· Եթէ Կ· Պօլսոյ լրագրներում տեղի գտած շաղփաղփութեանց թեղադիրն հակառակ արձագանքի № 16 համարում տպած իւր նամակին՝ ինքն—Գեր· Վահրամ սրբազանն է այն ժամանակ միայն հետևեալ խօսքերը կը մնայ մեզ ասել·— Էջմիածնի միաբանութիւնը սպասում էր սրբազանից աւելի բանականութեան և երախտագիտութեան ղգացման դէպ ի իւր Հոգւոյ պէս սիրած միաբանութիւնն ու վարչութիւնը, որ դեռ տանում է նորան· . . .

***

Կ· Պօլսում հրատարակուող Հայրենիք թերթի մէջ ըստ յանձնարարութեան թերթի խմբագրին Պ· Թաշճեանի մի յօդուածը կարդացինք· Ծարգելի պարոնը լսելով թէ Էջմիածնի Սինօդը որոշել է Սահակ սարկաւագին ուղարկել Երնջակու վանքը Ծովքեանց Գեր· Տէր Գրիգոր սրբազան Արքեպիսկոպոսի մօտ՝ Շարականը և Հոգևոր երգերը Էջմիածնի հին եղանակով ձայնադրելու համար, յարձակվում է Սինօդի վերայ, համարելով այդ բանը իբրև մի ատելութեան ցոյց դէպ ի յիշատակը Հանդուցեալ Հայրապետի, որի օրով իւր Ձայնագրեալ շարականն ու այլ Հոգևոր երգերը համարելով Ս· Սահակի և Մեսրոպի Հոգեշունչ եղանակների ճիշտ կրկնութիւնը, Էջմիածնի և ռուսահայոց եղանակները համարում է ռուսական, պարսկական և այլ եղանակաց աղջամուղջ·

Ծանկալի է իմանալ թէ, պ· Թաշճեանը ինչ ապացոյցներ ունի իւր Ձայնագրեալ երգոց թարգմանչաց Հոգեշուչ եղանակ լինելուն, իսկ Էջմիածնի երգերին՝ ռուսական և պարսկական եղանակաց աղջամուղջ համարելուն· Թէև Սինօդը դեռ այդպիսի մի տնօրէնութիւն չէր արել, սակայն եթէ անէ էլ, ով է տուել իրաւունք պ· Թաշճեանին առաւել քան իւր չափը խնդիրների մէջ մտնելու·

Ե՞րբ մարդիկ իրանց չափը կը ճանաչեն·

Մի ժամանակ Էջմիածնի միաբաններն էին կառավարում տաճկահայոց շատ թեմերը և պատրիարքական Աթոռը, և Էջմիածինն էր համարվում եկեղեցական երդեցողութեան և կարգաց միակ աւանդապահը· իսկ այժմ այն դրութեանն է ենթադրվում, որ Ն· Թաշճեանի պէս մարդկանց հրահանգութեան պէտք է կարօտի Հայոց ազգի աչքը լոյս·

***

Մասիս լրագրի Մայիս 18 թերթի մէջ հրատարակուած են «Էջմիածնէն հաղորդուած տեղեկութիւնք» վերնագրով մի շարք լուրեր· այդ տեղեկութեանց մէջ ի միջի այլոց տեղեկանում ենք որ Սինօդը Տաճարի վերայ ինչ ինչ շինուածական մեծածախ նորոգութիւններ ձեռնարկած լինելով Ալէքսանդրապօլից մի յատուկ ճարտարապետ րե-

րել է տուել. և յարձակվում էր Սինօդի վերայ ասելով որ Սինօդը փոխանակ մի քանի տասնեակ հազար րուբլի ապառիկները հաւաքելու, — գործը երեսի վերայ թողած՝ գանձարանի պատրաստ դրամներից սկսել է ծախսել, եկրակացնելով. «անշուտ սա համոզմամբ ու հաշուով որ՝ երէկ Գէորգ Կաթուղիկոս կրցաւ Էջմիածնի դատարկ գանձարանը 335,000 րուբլի հարստութեամբ մ՝ օժտել հարկաւ նորա յաջորդն ալ կրնայ նոյն բանն ընել իրենց այժմու դատարկել սկսած գանձարանը լեցնելու համար»։ Իրաւ է Ս. Սինօդի որոշմամբ մայր տաճարի մէջ ուխտաւորների վառած մոմերի սեւացած տեղերը պատերի և սիւների վերայ և խոնաւութիւնից ու հնութիւնից տգեղացած ծեփերը թէթև ծախքով փոխուեցին և անկարելի էր զանց անել այդ բանը, որ ամօթ և անպատուութիւն էր բերում օտար այցելուների առաջ։ Հիմա Ս. Սինօդը որոշել է գարձեալ գանձարանի դրամներով դէտ իւր գոյութեան տասնամեակը չը լրացրած ճեմարանի ու իւր գոյութեան քառամեակը չը լրացրած ննջարանի խախտած տեղերը վերանորոգել մեծալուտ վրտանգի առաջը առնելու համար։ Ցանկալի էր իմանալ թէ արդեօք լրատուն այդ բանի համար էլ կասէր որ յետաձգելու է մինչև նոր Կաթուղիկոսի ընտրութիւնը։ Լրատուն գիտէ որ արդէն հանդուրժել Կաթուղիկոսի կենդանութեան ժամանակ վանքի ծախքերը հոգալու համար գանձարանի պատրաստի դրամներից էր գործադրվում հարկաւոր դրամը։

Արդէն լրատուն գիտէ որ Էջմիածնի գանձարանը բոլորովին դատարկ չէր Հանգ. Տ. Գէորգ Ե. Կաթուղիկոսի Էջմիածին մուտք գործելիս։ Արդէն լրատուն գիտէ որ մի քանի տասնեակ հազար րուբլի ապառիկների համար Ս. Սինօդը Հանգ. Կաթուղիկոսի մահից յետոյ միայն համարձակուեց ուշադրութիւն դարձնել։ Արդէն լրատուն գիտէ որ այդ ապառիկների գործը նոր չէ, այլ սկսուած է գրեթէ 1868 թուից և, այնպէս խճճուած մի գործ է, որ դիւրաւ չի կարող գլուխ գալ։ Լրատուն շատ բան գիտէ. սակայն բեր աղնութիւն, որ մարդ իւր ամէն գիտեցածը խոստովանի։

***

Ճամախու թեմի Գեօչայ գաւառի Ղալաչայ գիւղի հոգևոր ծխական դպրոցի հոգաբարձու Պ Բալասի տէր Գասպարեանի՝ խմբագրութեանս ուղղած նամակից երևում է որ, տեղւոյն Ներսէս Ա. քահ. Տ. Մարկոսեանի շնորհիւ 1872 թուին եկեղեցւոյն կից շինուել է տեղւոյն ուսումնարանը բաղկացած երկու՝ քար ու կրից շինուած սենեակներից։ Դպրոցի մուից գումարն է 370 րուբլի. որ գոյանում է հետևեալ աղբիւրներից Ղալաչայ գիւղից՝ 150 րուբ. Ուշտալ՝ 50 րուբ. Նորաշէն՝ 50 րուբ. Բողաւանդ՝ 20 րուբ. եկեղեցական դրամի տոկոս՝ 100 րուբլիներից։

Ծախուց գումարն է 310 րուբլի — ըստ այսմ 300 րուբ. ուսուցչին, 10 րուբ. «Մշակ» լրագրին. 60 րուբլի մնում է յաւելեալ դրամ։ Դպրո-

ֆոցում եղել են 62 աշակերտ, ուսուցիչն է Պ. Կարապետ տէր Յակովբեան Մեհրաբեանց։ Դասական առարկաներն են՝ ծխական դպրոցներին յատկացեալները։ Հոգաբարձու պարոն լրատուն գովումէ ուսուցչի ջանքը և շնորհակալութիւն է յայտնում։ Տար Աստուած որ մեր դպրոցների բոլոր վարժապետներն էլ սրբութեամբ կատարէին իրանց ըստ անձնած պարտքը։ իսկ հոգաբարձուքը՝ առանց կանխակալ ենթադրութեանց գնահատէին ուսումնարանների անհրաժեշտութեան կարիքն ու ուսուցիչների ջանքը և խաղալիք չը դարձնէին իրանց կրքերին։

***

Արարատ ամսագիրը ուղարկվումէ տաճկաստանի խմբագրներին։ ըստ օրինի, դրա պէտք է իրանց թերթով փոխանակէին։ Թող որ յիշեալ պարոնները ղլանումեն այդ փոխանակութիւնը, էջմիածին ուղարկուելիք թերթերից մի քանիսի անունով չուտ՝ իւր ժամանակին և կանոնաւոր կերպով են ուղարկվում, իսկ մնացեալներինը՝ որպիսի է Սինոդի անուան ուղարկուածը շատ ուշ և անկանոն կերպով է ստացվում։

Այս հանգամանքի վերայ խմբագրութիւնս խնդրումէ ուշ դարձնել։

***

Ցաւանի է որ մինչև վերջին ժամանակներս Ռուս աղանդաւորները զրկուած էին շատ քաղաքական և հոգևոր իրաւունքներից։ Այժմ լրագրներից երևումէ, որ Պետական խորհուրդը ներքին գործոց նախարարի մի յայտարարութեան վերայ պատշաճ է համարել աղանդաւորներին հետևեալ իրաւունքները տալ։

ա. Բացի Սկօպէցներից, բոլոր աղանդաւորներին պէտքէ տրուի ընդհանուր հիմունքի վերայ անցագիր, որով կարող են Ռուսիոյ խորքերը մուտ գործել։

բ. Բոլոր աղանդաւորներին տրվում է վաճառականութեամբ և ամենայն տեսակ արուեստներով պարապելու իրաւունք։

գ. Տրվում է իրաւունք մասնակցելու հասարակական գործերին։ Այն տեղերում, ուր աղանդաւորները ուղղափառների հետ միասին են բնակում, եթէ ստարշինան (գիւղաւագ) աղանդաւոր է, օգնականը պէտք է անպատճառ յունադաւան լինի։ Միայն աղանդաւոր ստարշինաները և նոցա օգնականները իրաւունք չունեն ծխական հոգաբարձութեանց մասնակցելու։

դ. Իրաւունք է տրվում հասարակական աղօթքներ կատարելու հոգևոր պիտոյքներին լրումն տալու համար, և ինչպէս մասնաւոր տներում այնպէս էլ դրա համար առանձին նշանակուած շինութիւններում, նոցա ծէսերին համեմատ ժամ ասելու միայն այն անհրաժեշտ պայմանով՝ որ այդ միջոցին չը գործուին այնպիսի ձևեր, որոնք հակառակ լինէին վայելչութեան և հասարակութեան խաղաղութեանը։

ե. Նոցա տրվում է իրաւունք ուղղելու և վերանորոգելու իրեանց պատկանող մատուռները և այլ աղօթատեղիները — միայն այն պայմա-

նով, որ չիմանան հին ձևը։ Բայց նախ քան դրանց ձեռնարկելը պէտք է կանխապէս թոյլտվութիւն խնդրեն նահանգապետից կամ տեղական գլխաւորից (նաչալնիկ)։

ը. Աղօթատեղիների բացումը պէտք է Ներքին գործոց Նախարարի թոյլտվութեամբ լինի, և այն էլ այն պայմանով, որ բացումը Հանդիսաւոր ձև չունենայ։ Իսկ վանքերի և անապատների (ճգնարան) բացումը արգելվում է։

է. Այնպիսի տեղերում, ուր ժողովրդեան մեծամասնութիւնը աղանդաւորներն են և աղօթատուն չունին Ներքին գործոց Նախարարի թոյլտրվութեամբ եղած շինութիւններից մինը կարելի է աղօթատան փոխել, միայն պէտք է նայել, որպէս զի շինութիւնը արտաքին ձևով նման չլինի յունադաւանների եկեղեցուն։ դրսի զանգակ—արգելվում է։

ը. Մեռելաթաղի ժամանակ թոյլատրվում է ա. դագաղի առաջից պատկեր տանել. և բ. գերեզմանի վերայ մաղթանքներ կատարել երգով հանդերձ, միայն առանց զգեստաւորութեան։

թ. Նոցա պատրիարքները, դեկավարները և այլ նոցա կրօնական ապարոգութիւններ կատարողները այս վերոյիշեալ պատճառներով պատժի չեն ենթարկվում, բացի այն դէպքերից, երբ նոքա կըմեղադրուին իրանց աղանդը յունադաւանների մէջ քարոզելում և այլ յանցանքների կատարելում։ Վերոյիշեալ անձինք հոգևոր աստիճանաւոր չեն համարվում, այլ դասվում են ուղղակի այն կարգին, ինչ ծագում որ չունէին առաջ։

ժ. Աղանդաւորներին արգելվում է, ա. զգեստաւորուած թափօր և հրապարակական ծիսակատարութիւն, բ. հրապարակական գործածութիւն պատկերների. (բացի ը յօդուածի ա. դիպուածից), գ. տնից, աղօթատնից և այլ շինութիւններից դուրս ոչ զգեստաւորուել և ոչ էլ հոգևորական շոր կրել, դ. աղանդաւորական երգեցողութիւններ փողոցներում և հրապարակներում։

ժա. Ծ. Զ. և Է. յօդուածներին համեմատ երբ Ներքին գործոց Նախարարը վճիռ է կայացնում, այդ միջոցին, նա յարմարվում է ինչպէս տեղական հանգամանքներին, այնպէս և աղանդի վարդապետութեան բնաւորութեանը և իւրաքանչիւրի առանձին պայմանների հետ։

Նորին Կայսերական Մեծութիւնը այս արտօնութիւնները բարեհաճեց հաստատել և հրամայեց իրագործել Մայիսի 3 ին։

***

«Արևելեան մամուլը» իւր Մայիս ամսատետրակի տեղական լուրերի կարգում յայտնում է որ, միամեայ կամովին դադարումից յետոյ, պէտք է շաբաթը երկու անգամ հրատարակուի «Արշալոյս Արարատեան» երիցագոյն լրագիրը։ Այս օրերս ստացանք յիշեալ լրագրի Ցուլիս 7 թերթը։ արտօնատէրն է Պ. Ղ. Գ. Պալթալարեան, իսկ համարատու խըմբագիրն է Պ. Ց. Կ. Սվաճեան։ Բաժանորդագրութիւնն է օտար երկրների

համար 25 ֆրանք կանխիկ, փոստայի ծախքը խմբագրութիւնն է վճարում. բաժանորդագրութեան և ծանուցման համար պէտք է դիմել Զմիւռնիա. առ Պ. Խ. Գերձակեան, Նօ—Պէտէսթէն № 5.

***

Արձագանքի 29 համարում արտատպուած է Արարատի Ցունիս ամսեաթերակի Ա.չ Ա-յլքից Կ. Պօլսոյ, Կաթուղիկոսական Հարցի առթիւ կազմուած, յանձնաժողովին վերաբերեալ կտորը՝ Պ. Ն.—Տ.—Ղ.-ի խորհրդածութեամբ։

Պ. Ն.—Տ.—Ղ.-ի կարծիքով Յիշեալ լուրը Սինօդի պաշտօնական հրատարակութիւն է։ —Իրաւ է, Արարատը Ս. Էջմիածնում հրատարակուելով համարվում է պաշտօնական ամսագիր, բայց նորա բոլոր մասերն էլ պաշտօնական չեն, պաշտօնական բաժինը առանձին է իւր յատուկ վերնագրով։

Գալով,—բոլորին էլ ցանկալի է իմանալ թէ մեր Կ. Պօլսոյ և ընդհանրապէս արտասահմանեան ազգայինք՝ ինչ տրամադրութիւն ունին Կաթուղիկոսական խնդրի վերաբերութեամբ՝ և ինչ պատրաստութիւններ են տեսնվում. նոյն ցանկութիւնն ունի և Ս. Էջմիածնի միաբանութիւնը։

Ս. Էջմիածնի միաբանութիւնը չի կարող նախապէս առաջարկել ընտրելի ոք՝ զանազան պատճառներով։ Պ. Ն.—Տ.—Ղ.-ին և այլոց յայտնի պէտք է լինին պատճառները թէ ինչո՞ւ Էջմիածինը լռութիւն է պահում Կաթուղիկոսի ընտրութեան առիթով։ Նոյն լռութիւնը յարգուած կը մնայ. իսկ պօլօժենևայի հաստատութիւնից յետոյ եղած ընտրութիւնների մանրամասնութիւնը իբրև բանասիրական յօդուած խմբագրութիւնս մտադիր է հետ ղհետէ հրատարակել «Էջմիածնի արխիւ» վերնագրով, որին ի հարկէ ոչինչ պաշտօնական յատկութիւն պէտք չէ վերագրել։

Պ. Ն.—Տ.—Ղ. իւր խորհրդածութեան մէջ Արարատից վեր առած կտորը հարազատութեամբ չէ արտագրել։ իսկականն է,—«իսկ եթէ մասնաժողովի եղրակացութեանց տեղեակ լինելու բաղդը միայն վերապահուած կը լինի մասնաժողով կազմող անդամոց՝ իբրև առանձնաշնորհութիւն, այն ժամանակ էրատուած կոնդակն ու-բլշնէրն էլ կասկածել այդ մասնաժողովի ընթացքին մասին՝ որ պատճառ մի ընդհանրապէս ընդ մէջ յայնմժամուվ կացող անդամոց, որով Պ. Սթեփան Փափազեան հրաժարուեց մասնակցելու ժողովներին։»

Պ. Ն.—Տ.—Ղ. յիշեալ կտորը այսպէս է առնում իւր խորհրդածութեան մէջ։ «Այն ժամանակ, ասում է Արարատը, ազգը կարող է նոյն թերահաւատութեամբ վերաբերուիլ դէպի նա, ինչպէս արեց Պ. Սթեփան Փափազեանցը»։ Տարբերութիւնը ակներև է։

Իսկականի եղրակացութիւնն է որ յանձնաժողովի որոշմանց ծածուկ մնալով ուրիշները կարող են կասկածել, և թէ, Պ. Սթեփան Փափա-

զեան մասնաժողով կազմող անդամից մէջ գժտութիւն պատահելուն համար հրաժարուել է մասնակցելու ժողովին։ Իսկ Պ. Ն.—Տ.—Ղ.-ի առաջ բերածի եղրակացութեամբ դուրս է գալիս որ, ազգը հետևելով Պ. Սահիան Փափազեանին կարող է թերահաւատութեամբ վերաբերուիլ դէպի նա (Ցանձնաժողովը)։

Բնական է որ Սահիան Փափազեան այնքան հեղինակութիւն չի կարող ունենալ՝ որ ազգը հետևի նորան անպայման կերպով. սակայն անբնականն այն է որ իսկականի «ուրիշներն էլ» բառը Պ. Ն.—Տ.—Ղ. փոխել է «ազգ»։

Ցուսով ենք թէ սորանով վերջին խօսքը ասած կը լինինք Պ. Ն.—Տ.—Ղ. ին և առիթ չի լինիլ այսուհետև այս մասին երկարել երկուստեք։

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ։

(ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՔ.)

—

### ՎԱՐԶԱԿԱՆՔ.

17ն Ցունիսի. Սինօդը Արարատ ամսագրի խմբագիր կարգեց Արժ. Ցուսիկ Վարդապետին, իսկ Տպարանական Ժողովի անդամ՝ Արժ. Արիստակէս Վարդապետին, յատկացնելով վերջնոյս Տպարանի ծախուց և ծառայից վերահսկողի պաշտօնը։

—

24ն Ցունիսի. Սինօդը ի տեղի իւր հրաժարականով Մայր Աթոռոյս ծախսարարութեան պաշտօնից արձակուած Արժ. Սարգիս Վարդապետի Տէր Գասպարեան՝ ծախսարար կարգեց Սինօդի անդամ Գեր. Տ. Ցովակիմ Եպիսկոպոս Տէր Գրիգորեանին։

### ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆՔ.

1ն Ցունիսի. Սինօդը ի նկատի ունենալով Նոր-Բայազէտու ծխատէր և երեմն Համանուն գաւառի գործակալ Թադէոս քահանայի ապօրինի արարմանց համար կատարուած քննութիւնը, որոշեց հսկողութեամբ տեղական գործակալի ենթարկել նորան պատժի՝ մի ամսեայ ժամանակով առանց փիլոնի եկեղեցու դրանը ապաշխարել տալով։

—

17ն Յունիսի. Սինօդը ի նկատի ունենալով Թիֆլիզու Կոնսիստորիայի № 1135 ի 27ն տարւոյս յայտարարութիւնը, որով յայտնվում է հետևեալ ճիւղագրութեամբ կատարուած պակը.—

(1, Կատարինէ Հարսնացու.
2, Մայրն Սօֆիա.
3, Եղբայրն Զուրաբ, կինն Շուշան.
4, Եղբայրն (կնոջ) Ծիծա փեսացու.

այսինքն Հարսնացուն ամուսնանուժէ իւր քեռու կնոջ եղբօր վերայ), վերահաստատուժէ Կոնսիստորիայի վճիռը, պսակադիր Տէր Զաքարեանց Բաղդասար քահանային երկու տարի Վրաստանի մի վանքում ապաշխարել տալու, իսկ պսակուածներին կանոնադրութեան 1560 յօդուածի փոխանակ 1594 յօդուածի համեմատ եկեղեցական ապաշխարանքի ենթարկելու.

—

29 Յունիսի. Սինօդը ի նկատի ունենալով Ղամախու Կոնսիստորիայի № 580 ի 5 ն Օգոստոսի անցեալ 1881 ամի յայտարարութիւնը, որով յայտնվուժէ հետևեալ ձիւղագրութեամբ կատարուած պսակը,—

(1, Գաբրիէլ փեսացու
2, Հայրն Խաչատուր
3, Եղբայրն Աթանէս
4, Որդին Յարութիւն որոյ կին Եղիսաբէթ
5, որոյ քոյրն Մարգարիտ Հարսնացու

այսինքն փեսացուն ամուսնանուժէ իւր հօր եղբօր որդու կնոջ քրոջ (քենի հետ) վերահաստատուժէ Կոնսիստորիայի վճիռը Վանքաշէն գիւղի ծխական Իւղբաշեանց պսակադիր Մովսէս քահանային Սաղիանու վանքում մի տարի ժամանակով ապաշխարելու համար.

—

## ԴՊՐՈՑԱԿԱՆ.

10ն Յունիսի. Սինօդը ի նկատի ունենալով Երևանու Փոխ—Թեմակալի Յունիսի 6ին № 146 յայտարարութեամբ առաջարկուած Երեւանու հասարակութեան ընտրողական թևրթը, տեղւոյն թեմական Հոգ. Դպրանոցի համար հաստատուժէ Պ. Պ Եղիազարեանց Վարդանին, Աթանասեանց Սիմէօնին, Մելիք Աղամալեանց Ալէքսանդրին, Դադամեանց Կարապետին, Պօղոսեանց Պօղոսին, և Տէր Յովսէփեանց Յակովբին հոգաբարձու, իսկ Պ. Պ. բժիշկ Յովհաննէս Անանիկեանին, Աբգար Դաւեանին, Աւետիս Թէոսեանին, Վասիլ Եղիազարեանին, Միքայէլ Աթանասեանին և Գասպար Գասպարեանին փոխանորդ (կանդիտատ).

—

29 Յունիսի. Սինօդը ի նկատի ունենալով Երևանայ Կոնսիստորիայի յայտարարութիւնը ի 14ն Յունիսի տարեայս № 636, ի տեղի հանգուցեալ մահտեսի Մկրտչի Թունեան, տեղւոյն Հայ հասարակութեան միջ-

*Նորդուխեան Համեմատ Հաստատում է Հին - Նախիջևանի երկսեռ Հոգևոր դպրոցաց Համար Հոգաբարձու Պ. Անտօն Թունեանցին։*

---

*29 Յունիսի Սինոդը ի նկատի ունենալով Սևանու վանահօր Մայիսի 21 ին № 10 յայտարարութիւնը, շրջաբերական հրամանով յայտնում է գիտութիւն առաջնորդների, յաջորդների և այլ հոգ. պաշտօնական անձանց, որ Սևանից փախստական սուտ անուն Ղազար վարդապետ Տէր Ղևոնդանին ուր և բռնելու լինին՝ պահնակներով ուղարկեն Սինոդին։*

*Գրուած է և հաղորդագրութիւն նաև Կ. Պօլսոյ Գեր. Պատրիարքին որ նա ևս պատշաճաւոր կարգադրութիւն անէ եթէ Տաճկաստանում՝ բռնուի յիշեալ սուտ անուն վարդապետը։*

---

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

---

1. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ *տարեկան հատորներու թիւը պիտի ըլլայ 12, և պիտի բաղկանայ 6 - 800 երեսներէ։*
2. *Բաժանորդագրութիւնք վեցամսեայ են, եւ կսկսին 1882 յունիս ամսէ. գինն է հինգ ղուրուշ։*
3. *Գաւառային բաժանորդք, ճամբու ծախքով վեց ղուրուշ վճարելու պարտաւոր են։*
4. *Բաժանորդ չեղողն, ամեն հատորի համար իր մասնաւոր գինը պիտի վճարէ։*

*Նամակ եւ ծրար կընդունուի հետեւեալ հասցէիւ։*

ՏՕՔԹՕՐ Մ. Բ. ԻՒԹԻՒՃԵԱՆ

*Գում - քափու, Հիսար տիպի թիւ 109, Կ. պօլիս։*

Docteur M. P. Utudjian

Koum - Kapou, Hissar Dibi № 109
Constantinople

### Երեւանի թեմ.

| | |
|---|---|
| Ալիխանդրոպոլ եւ վիճակն. | Ցովսէփ ա. քհ. Կոստանեան |
| Ապարան | » Եղիշէ վարդապետ Ամատունի |
| Մասսարա | » Խաչատուր քհնյ. Տէր Թադէոսեան Թալինում |
| Գառնիբասար | » Շմաւօն քհնյ. Ալոյեանում |
| Նոր Բայազիտ<br>Դարալիյագ ա.<br>Դարալիյագ բ. | Բարդուղիմէոս վարդապետ Գէորգեան |
| Դողբիճ | » Հայրապետ Աբրահամեանց վ. Ադուլիսում |
| Գառաբաղեազ | » Սողոմոն քհնյ. Տ. Ղազարեան Ջանգալչում |
| Երեւան եւ Զանգիբաս. | Գէորգ քհնյ. Թաղիանոսեան Երեւանում |
| Զանգեզուր | » Իսրայէլ քհնյ. Յարութիւնեան, Գեօրիսում |
| Կարս | » Գրիգորիս Եպիսկոպոս Աղուանեան |
| Կողբ | » Ցովսէփ քհնյ. ՞ Կողբում |
| Կոտայք | » Ցովհան Աւագ քհնյ. Արամուսում |
| Մեղրի | » Գէորգ քհնյ. Տ. Գրիգորեան |
| Նախիջեւան Հին | » Հոգեւոր Կառավարութիւն Հայոց |
| Շարուր | » Թադէոս քհնյ. Տ. Ցովհաննիսեան Նորաշէնում |
| Վաղարշապատ<br>Յարդարապատ<br>Զկիվայ<br>Աղբաղբայր | Մամբրէ վարդապետ |
| Ծուռկալու | » Սիմէօն քհնյ. Տ. Ամիրճեան Փամբակում |
| Տաթեւ | » Հոգ. կառավարութիւն Հայոց |
| Օշական | » Եսայի Ա. քհնյ. Ամատունի |

### Թիֆլիսի թեմ.

| | |
|---|---|
| Ախալցխա | Հ. կառավարութիւն Հայոց. |
| Ախալքալաք | Խորէն ա. քհնյ. Բարսեղեան |
| Գանձակ | Հոգեւոր կառավարութիւն Հայոց |
| Գօրի | Հոգեւոր կառավարութիւն Հայոց |
| Դիլիջան | Ստեփաննոս քհնյ. Խալաթեանց վ. Ադդանում |
| Դուշէթ | Աղէքսանդր քհնյ. Տ. Ցովհաննիսեան |
| Թելաւեւ շրջակայքում | Գէորգ ա. քհնյ. Տէր Սարդսեան |
| Թիֆլիս | Թադէոս Աւագ քհնյ. Խոջաէյնաթեան |
| Մեծ Ղարաքիլիսա եւ շրջակայքում | Արսէն Աւագ քհնյ. |
| Ողնախ | Ստեփաննոս ա. քհնյ. Տէր Ստեփանոսեանց |
| Ծուռտաւ | Ցովսէփ ա. քհնյ. Ալիւճեան |
| Քութայիս | Դաւիթ ա. քհնյ. Եարալեան |

### Ղարաբաղի թեմ.

Նուխի եւ շրջակայք. Հոգեւոր կառավարութիւն Հայոց
Շուշիեւ շրջակայքում Կոնսիստորիայն Հայոց

### Շամախու թեմ.

| | |
|---|---|
| Բագու | Խորէն քհնյ. Միրզաբեկեանց |
| Ղուբայ | Աւագ քհնյ. Աւշարեան |
| Շամախի | Սարգիս ա. քհնյ. Փիրվերտեանց |
| շրջակայքում | Մեսրովբ քհ. Տ. Սարգսեանց Գիրքում |
| Դարբանդ | Խորէն քհնյ. Գալստեանց |

| | |
|---|---|
| Զմիւռնիա | Մելքիսեդեկ Եպիսկոպոս Մուրատեան |
| Կ. Գօլիս | Գէորգ Ծ. վարդապետ Բուսճուքլեան |

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

—

ՅԱՌԱՋԻԿԱՑ $18^{83}/_{84}$ Թ. (ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

# „ՎԱՐԺԱՐԱՆ“

*Մանկավարժական ամսագիրը կհրատարակուի նոյն դիրքով, նոյն ուղղութեամբ, նոյն ծրագրով եւ նոյն աշխատակիցների գործակցութեամբ:*

---

*Բաժանորդների թիւը աւելանալուն պէս, ամսագրի շրջանը կընդլայնենք:*

*Տարեկան բաժանորդագինն է 5 րուբլի կանխիկ վճարելէ: Սակայն խմբագրութիւնս, ի նկատի առնելով ուսուցիչների եւ առհասարակ ազգային պաշտօնեաների մեծ մասի նիւթական անապահով դրութիւնը, եւ դոյա գործը դիւրացնելու համար որոշել է, որ նոքա ստորագրուելիս, մինչեւ Օգոստոսի 15-ը վճարեն 2 րուբլի. Նոյեմբերին 2 րուբլի եւ Փետրուարին 1 րուբլի:*

*Տարին սկսւում է Օգոստոսին եւ վերջանում Մայիսին, տարին հրատարակելով տասը տետրակ*

*Թիֆլիզում ստորագրուել կարելի է Խմբագրատանը (Երեւանեան հրապարակ, ռուսաց սեմինարիայի հանդէպ, տուն № 20 Միրիմանեանցի) եւ պ. Եփրեմ Ծատուրեանի լամպային մագազինում: Ստորագրութիւնք դիմում են այս հասցէով՝*

Въ Тифлисъ, въ Редакцію педагогическаго журнала „Варжаранъ“. Эриванская площадь, противъ русской Семинаріи, № 20 домъ Мириманова. *Իսկ արտասահմանից՝* Tiflis (Caucase), Rédaction du journal pédagogique „Varjaran“.

Խմբագիր - հրատարակիչ՝ ՆԻԿՈՂԱՈՍ ԽՈՍՐՈՎԵԱՆ.